



P...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌՈՒԵՑՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1968 ՅՈՒՆԻՍԿՈՒՊ

digitized by ... R.A. ©

باكسين
 مجلة شهرية ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բւգիւն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆԱՌՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԾՄԱՌԻ

ՀԱՐՁ ԽՐԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐ

Պ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ԳԻՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ
 † ԵՂ. ԳՕՅԱԺԵԱՆ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Կ. ՍԱՍՈՒՆԻ
 - Ա. ՀԱՅԿԱԶ
 - Մ. ԻՇԵԱՆ
 - Հ. ԶԱՐԳԱՐԵԱՆ
 - Ա. ԳԱՌՕՆԷ
 - Ն. ՊԵՇԻԿՍԱՇԼԵԱՆ
 - Ա. ԵՐԿԱԹ
 - Ա. ՆՈՒՐԵԱՆ
 - Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
 - ԱՐՄԱՆՏ
 - Ջ. ԳԷՈՐԳԵԱՆ
 - Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 - Լ. ՄԿՐՏԻԶԵԱՆ
 - Պ. ՍՆԱԳԵԱՆ
 -
 - ՆՇՄԱՐՆԵՐ
- Կողքի ձկար՝ Մ. ՄԻՆԱՍԵԱՆ



Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Կ. ՏԱՐԻ, ԹԻՒ Ն

ՅՈՒՆՈՒՍԻ 1968

ՊԵՏՐՈՒՄ

4. ՍԱՍՈՒՆԻ

(ԲԱԳԻՆ)Ի ՀԱՄԲԱՆ

Հայ գրականության եւ իմացական երկունքի մամբաներուն վրայ՝ «Բագին» խարոյկ մը վառեց, լոյսի ու տախտակեան խորունկ բազմանքով:

Եօթներորդ տարին, կրկին մամբայ կ'ելլենք, լոյսը մեր ձեռքը՝ լոյսը կը փնտռենք, աբշարոյսի ջանքերուն կարօտով:

Եօթը համբանքը որքան ալ հեփիաթային հմայք մը կու տայ մամբայ ելած կարասանին, սակայն միամիտ չենք այն աստիճան՝ որ երբեմն ետ չդառնանք մեր անցած մամբաները չափելու: Ու այդ պահերուն, եօթը կը վերածուի եօթանառանքի, ու կ'երկարի հայու անցեալի հազար հինգ հարիւր ամեակի հարիզներին վրայ՝ մեծ ջահակիր Մաշտոցը տեսնելու:

Պատմութեան ոլոր ու մոլոր ճանապարհներէն անցած հայ հոգին է, որ ջահավառ կ'անցնի, կը մարմրի ու կ'առկայծի երբեմն, բայց հազարամեակը, դարն ու տարին իրար ձուլած՝ կը քալէ, կ'անցնի յոյսի ու լոյսի մամբաներէն:

Պատմութիւնը մեզ կը համոզէ, թէ հայ հոգին անմար սրագ մը ունի:

384

Հայ գրականութիւնն ու արուեստը հայ հոգիի խորունկ ապրումներու բոցավառումն է, ամէն հաշիւէ եւ կաշկանդումներէ գերծ: Մեր ժողովուրդի ներաշխարհային երկունքն է, որ կը կայծկլտի հայրենի լեռներէն մինչեւ հեռաւոր ավիւնոսներու փերումն ինկած հայ մարդոց հոգիին մէջ:

Եթէ մամբայ ելլողները ընկրկին, եթէ անտարբերութիւնը մշուշով պատէ հայ հաւաքականութիւն մը, եթէ բիրտ իրականութիւնը ջահակիր բազուկները խորտակէ, անդին, իրնիքի մը մէջ, լերան մը ստորոտին, օտար փեր ինկած անանուն սղայ մը, ծաղկավաճառ, պիտի ելլէ, մումը ձեռքին, շլացուցիչ ջահերու ընդմէջէն պիտի անցնի, ջահակիրի մը հըպարտութեամբ: Պիտի քայլ լուսավառ օտար պողոտաներէն, մումը ձեռին, պիտի պառայ բուրբի երեսին:

Նպասակս տկարութիւն չի ճանչնար:

Հայ գրականութեան ջահակիրն էր, որ կ'անցնէր:

Հայ գրականութեան ուղին, որքա՛ն երկար, մոռնա՛նք ֆա՛ն տագնապահար, անցած է հայրենի խուլ անկիւններէն, մտած է օտար ազմկահար պողոտաներուն մէջ, ու օր մը, անյայտէն՝ հարագատ մամբու եգրին, վիզը ծուռ կեցած տղեկը, - Զարեմց պիտի ըսէր, -

Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ զազաթ չկայ, Ինչպէս անհաս փառքի ճամբայ, ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Անդին, հիւսիսային սառնամանիքէն դողահար՝ Տէրեան հայ ժողովուրդի անմահութիւնը պիտի հռչակէր:

- Եւ խաչուածին ժառ չկայ, - պատգամով:

Աւելի հեռուն, արեւմտեան աշխարհի ծովագրին, վանքէն մոզոպրած պարմանը, բուռ մը հոգ հայրենի աշխարհէն, իր սեղանին՝ սրբազան հոգին ձուլուած՝ գալի՛ք օրերու վարդաշողշող արշալոյսին պիտի յառէր վարուժանեան իր ակնարկը:

Մոմի լոյս մը մեր ձեռքը, մամբու երկայնքէն կը քայլենք, պիտի քայլենք, վստահ՝ որ մոր ջահակիրներ պիտի դուրս գան անյայտէն եւ շարունակեն անմահութեան երթը:

«Բագին»ի մամբան հայ մտքի եւ հոգու հերկի անդաստանն է:

*Սերմանո՛ղ, լայն բաց բուռդ,
Ծիտերն ի՛նչ փոյթ թէ հատիկները աւարեն,
Տեղը Աստուած պիտի մարգարիտ սերմանէ:
Այսպէ՛ս, կը սպասենք...:*

Կ. Ս.

90214-Ա՛հ

154-2000

ԱՐԱՏ ՀԱՅԿԱՋ

Եւս ընծայած է շորս հասար.— «Յեկիմ
նայնք» (երկու հատոր), «Ջարս ոշխարհ» եւ
«Շապիմ Գարսահիտարի ինֆնազաշտպանութիւնք»:
Մամուլի Պարկ է եւ շուտով լոյս էր տեսնէ պատ-
ճըւածքներու իր նոր հատորը՝ «Պանդուխ»:



ԿՈՐԵԿԻ ԱՐՏԻՆ ՄԷՋ ԹԱԻԱԼԻԼԸ

ԱՌՈՂՋԱՐԱՐ ԶԷ...

Շապին Գարսահիտարի Հայաբնակ
գիւղերէն Գոմշտունը, Ալիսի — Գոլլու
Ըրմադ — մէկ ճիւղին վրայ թուարի մը
հարթ դաղաթին շինուած, հազիւ 8-10
տուննոց գիւղ մըն էր: Ոչ եկեղեցի ու-
նէր, ոչ ալ՝ անոր հովանիին տակ ու քո-
վիկը շինուած, դպրոց: Հազար ինը հա-
րիւր տասնեւհինգի ամրան, ուշ երեկոյ
մը, երբ ես այդ գիւղին դռնուած տեղէն
անցայ, տեսայ իր խեղճ ակերակները:
Թէեւ ուրիշ հայ գիւղերու պէս անորէն-
ներու ձեռքով չէր վառուած, բայց հիմ-
նայառակ քանդուած էր: Տուներու դռ-
ները, պատուհանները, սիւները, բո-
լո՛րը, բոլո՛րը ասարուած էին: Դատելով
ինչ որ մնացած էր նախկին հայնոցէն,
եզրակացուցի, թէ շատ ալ բարեկեցիկ

գիւղ մը չէր եղած անցեալին մէջ. կը
թուէր, թէ բոլոր տուները հողաշէն
էին, նոյնիսկ հիմէ գուրկ՝ քանի որ ա-
նոնց հեաքն իսկ չկար դետնին վրայ.
բայց ջերտ ուղեկցիս վկայութեամբ
նշանաւոր էր իրենց դռնի կաթէ մա-
կըրդած մածունը, որը եթէ զբողակին
բերանը քաց զլորելու ըլլայիք դետինը,
չէր թափուերս:
Գոմշտունցի Հայոց գոմէշներէն մէ-
կը, էգ մը, իբրեւ աւար, ինկած էր Գու-
շուրղազէ Ալի բէկի տունը: Մերանալու
վրայ եղող անասուն մըն էր. առատ չէր
իր կաթը՝ որ հազիւ կը բաւէր իր հոր-
թին: Այսուհանդերձ սիրուած էր բոլոր-
րէն, որովհետեւ, հեղձ ու տարաշխար-
հիկ համարուող անասուն մըն էր: Այդ

չընանին մէջ ուրիշ գոմէջ ունեցողներ չկային՝ որովհետեւ, կ'ենթադրեմ, կլիման ու հողին կազմութիւնը անյարմար, աննպաստ էին. չոր, տաք, համեմատաբար չրազուրկ: Այդ մեծղի, ուժեղ ու յաճախ անզուսպ տնասունները, որոնց կռուիլը գիտելը վայելք մըն է, ճախճախուտ, ջրատառ տեղեր կը սիրեն: Հայ-կահան Գոմշուունը հազիւ 15-20 քառակուսի քմէն ու եղեգլատ ճաշիճններէն, ուր, հաւանաբար, ամառուայ տաքերուն, հայոց ծանրամարմին գոմէշները, դանդաղօրէն օրօրուելով կ'երթային սուզուել սիգմին մէջ՝ ու գովանալ, ցեխի ու կաւի խաւով պատել իրենց լայնի կողերն ու կոնակները՝ որ Օգոստոսի բարկ արեւէն շայրին, շնաթըռտին:

Գոմշուունէն շիջ հեռու գտնուող Աղըլ գիւղը - Գոմեք - ուր ես կ'ապրէի իրեն Ալի բէկի հայ եւ քիւրդ բազմաթիւ ծառաներէն մէկը, թէեւ գետէն ոչ շատ հեռու, բայց չոր տեղ մըն էր: Ամբան տաքերուն, մեր գոմէշին լերկ, գրեթէ ատեսպուրկ կոնակը սկսու շորնալ: Բէկը, գիւղի զով, անուշահամ ու շտատհոտ աղբիւրի գոռէն շիջ հեռու, կաղնիի մը շուրին փոս մը փորել տուաւ որ ջուրը հաւաքուի մէջը:

- Թող գոմէշն ու ձագը պառկին մէջը, ետքն ալ կը ջրէք երեքնուկի - ետնճա - մեր արարը,- ըսաւ:

Բայց իր լաւատեսութիւնը շիրականացաւ: Փորուած փոսը բնաւ չլեցունեցաւ: Ծարաւ հողը ծծեց ինչ որ աւելցաւ մեր գործածութենէն: Խեղճ գոմէշը քանի մը անգամ թէեւ մէջը մտաւ, բայց իր խոցելի կէտը, կոնակը մնաց չոր՝ ու արեւուն տակ, Ես ու Խորէնը - Թուրք անուսով Հաճի - քանի մը անգամ վար, իր քով իջանք ու դոյլերով աղմուղուր լեցուցինք իր վրայ, բայց ի վերջոյ ծանծարագանք: Խոչորակազմ կենդանի մըն էր: Երբ ջուրին մէջ պառկած պահուն շնէք, ջուրը մատնալափ մը վեր կը բարձրանար փոսին մէջ՝ ու իր կողերուն վրայ:

Հին, փորձուած ու փորձատու հողիւ

Հիւսէյին Տային, օր մը, անոր տառապիլը տեսնելով, ըսաւ, թէ պէտք է կրթեմն անոր կոնակը արջի իւղով ծեփել, օծել:

Ուրկէ՞ գտնէինք արջի իւղը...:

Ալի բէկ մարդ զրկեց չորս կողմ: Հօր ու եղբայրներուն գիւղերը, բարեկամներու կալուածները:

Ի ուրբն ալ վերադարձան ձեռնուանայն:

Գոմէշին կոնակը մնաց չոր, արեւու տաքին՝ ու բոռերու խայթոցին ենթակայ:

Լոյսը եւ յոյսը ծաղեցան չակնկալուած անկիւնէ մը: Օր մը, ետլայի պահագանը, Հասոն եկաւ ու ըսաւ, թէ քանի մը օր առաջ, գիւղերը, արջը եկեր՝ ու բէկի մեղուատունէն փեթակ մը տարեր էր:

- Ինչէ՞ն գիտես, թէ տանող արջն է,- հարցուցինք: Ձե՞ն կրնար գողեր ըլլալ...:

- Ես ալ նախապէս երկոտանի արջերէն կասկածեցայ,- ըսաւ քիւրդը իր հասա վիզը քերելով,- շէշխանէս լեցուցի ու մտայ դարան՝ որ երբ գան, մարեբին լացնեմ. գիտէի, թէ երբ անգամ մը բերանին անուշիայ, ալ չեն կրնար դիմանալ, նորէն կու գան:

- Է՛, եկա՞ն:
- Եկա՞ն, բայց մարդ չէ՛ր եկողը, գոմշի մեծութեամբ սեւ արջ մը:
- Մ'ըսե՛ր...:
- Ես՛, գոմշի մեծութեամբ սեւ արջ մը:

- Ի՞նչ ըրիր, շէշխանէդ կրակեցի՞ր վրան:

- Ի՞նչ կրակել...: Խե՞նթ եմ...: Խեղճ հաց ու պանրի Հե՞տ եմ կերեր...: Ե՛նչխանէով ա՞րջ կը սպաննուի...:

- Ապա՛մ, վախկո՛տ, պատեհուածութեան փախցուցի՞ր ես...:
- Ապրտալը դո՛ւն ես, դուն ի՞մ տեղս ըլլալի՞ր, կը կրակէի՞ր արջուն վրայ...:
- Անշո՛ւշտ կը կրակէի:
- Կը կրակէի՞ր, ամ՛մա՛, ան ալ մարդ կը լացնէ՛ր, գաւակներդ եքիւմ կը մնային...:

- Եթէ զուգընթաց ցամ երկիրն - խոցելի կէտ, Հոգեկան՝ բառացի թարգմանութեամբ - դայ ինչո՞ւ պիտի չըսպաննուի...

- Եթէ ցամ երկիրն դայ... Իսկ եթէ չդայ... Թաթի մէկ հարուածով մորթի՞լ կը հանէ կռնակէդ:

Վերջապէս վէճը կտպեցին կարճ ու խնդրել տարուեցաւ բէկին: Խորհրդակցելէ ետք արշաւախումբ մը կազմելով նայալ զրկելու մասին կը մտածէին, երբ Գղըլբաջ կիւլօն, հեւալով հասաւ՝ ու աչքերը լայն բացած, պատկերաւոր ոճով, կակաղեց, թէ ինք կորեկի արալը դացած էր, ստուգելու համար, թէ զայն քաղելու ժամանակը հասած է, թէ ոչ, ու ի՞նչ տեսնէ...: Նախորդ գիշեր, կամ որ մը առաջ, ինք վստահ չէր, թէ երբ, արջը մտեր էր արտ ու աւեր սփռեր շորս կողմ՝ կերեր էր, մէջը տապալտկեր ու... աղբձոր ալ:

Յետոյ, ժողովուած, այլ եւ կարհոոր յետ գրութեան մը պէս, աւելցուց.

- Լեբան պէս զիգեր էր:

- Ես՞տ է տուած վնասը:

- Հոնձձիին կէսը պառկեցուցած է:

Հակառակ այս բոլորին, բէկը ուրախացաւ. պիտի կրնային ո՛չ միայն զողջուած փեթակին ու փնացուած արտին վրէժը լուծել, այլև, գոմէշի կռնակին համար արջի իւղ ճարել:

Նստան նորէն ժողովի:

Գիշերը, չորս հողի, զինուած, պիտի երթային հսկել կորեկի արտին չորս կողմը, ու երբ արջը գար, ամէն կողմէ Ձիւմիլլա՛ն ըսելով պիտի կրուկէին. եթէ մէկուն զնդակը շրտնէր միւսին կը բռնէր:

- Կ'ըսեն, թէ, - աւելցուց բէկը, - երբ վերաւորուի, կատաղի կը դառնայ ու կը յարձակի ուղղակի կրակողին վրայ: Երբ պատահի այդ բանը, երբ տեսնէք, թէ վառօղի լրային է, որ կու դայ, անմիջապէս փոխեցէք տեղերնէր ու նորէն կրակեցէք շիւտան կամ արտին, նայեցէք որ իրար չսպաննէք՝ իրար արջ կարծելով:

Գիշերը, երբ մթնեց, երբ աստղերը

չողացին խորունկ երկնքին վրայ, լուսնի բարձրանալէն առաջ, ամէն մէկը իր զէնքն առած եկաւ դիւղի հրապարակը:

Տերսիմցի Մըլտոն, ճամբայ ելլելէ առաջ, դամբաններէն մէկը մխտին տանելու խօսք ըրաւ: Բէկը ընդդիմացաւ.

- Ենթադրենք թէ, - ըսաւ, - շունը հոտտեց ու ձեզմէ առաջ զբաց արջին ներկայութիւնը ու վազեց առաջ, այն տոնն ի՞նչ պիտի պատահի. կա՞մ արջը վախնալով պոչը կռնակն առած պիտի փախի, եւ կամ, կոռի թոնուի շունին հետ: Վերջին պարագային պիտի խառնուին իրարու, ու զուք պիտի չկրնաք նոյնիսկ կրակել վրանին՝ վախնալով, թէ զնդակը յանկարծ կը դպի շունին. իսկ եթէ Աստուած չընէ, բան մը պատահի շունին, ինչպէ՞ս ձեռքէս պիտի ազատիք, ինչպէ՞ս պիտի երեւաք աչքիս...:

Տալու պատասխանն չդասն, շատարկեցին. զօտիներուն մէջ զիչ մը ուտելիք դրած - վախնալով թէ թերեւս մինչեւ առաւօտ սպասել հարկ ըլլայ - ելան դացին: Երբ գիշերը զիչ մը յառաջացաւ, բէկը, իր կինն առած, առանձնացաւ իր սենեակը: Լոյսերը մարեցան շէնքին մէջ: Մենք՝ որ ամէնէն զիչ պատճառ ունէինք արևով հետաքրքրուելու, չկըրցինք քնանալ: Մեր պառկած վրանին մուտքին ապօրէ նստած, երեկոյան ձորէն իջնող զովութիւնը կը վայելէինք: Աստղաշատ երկինք մը կը կլորնար մեր վրայ, ու մեզմէ զիչ մը անդին զտնուող ալոճի մը զորչ սաղարթներուն մէջէն կասկած մը հետաւոր իր մէկ ցեղակիցը կը կանչէր մեղամաղձառ շեշտով, ու միւսը, շատ աւելի հեռուէն, կը պատասխանէր անոր: Մեզմ, հաճելի հով մը երբեմն կը շարժէր մշտադալարներու ճիւղերը եւ զուտին մէջ աղբիւրը կը շարժարատէր մութին հետ: Մինակ մենք չէինք դիւղին քառասուն հողիկ մօտեցող բնակիչներէն անքուն եղողները, չէին կրցած քնանալ երկու զրդուհիներ ալ, Ձախոյի մայրը՝ Ձէյնէպ բաճին՝ ու որսի զրկուած նորապսակ կիւլօյի կինը՝ սիրուն Այիշէն: Անոնք ալ եկան միանալ մեզի ու եղանք հինգ:

- Միւսլիմ,- ըսաւ Խորէն խօսքը
ինծի ուղղելով,- թող կնիկները Փէս
նստին, եկուք ես ու դուն երթանք նա-
յինք Փէն ի՞նչ կ'ընեն:

- Են՞նթ ես,- ըսի ես,- եթէ ձախո-
ղին՝ կրնան մեզ ամբաստանել, թէ ե-
կունք ու արջը վախցուցինք, փախցու-
ցինք, իսկ եթէ վիրաւորեն ու դազանը
մեզ իր ճամբուն վրայ դտնէ, միայն
Աստուած գիտէ, թէ մեր հալը ինչ կ'ըլ-
լայ:

- Ըսէ՛, Միւսլիմ, դուն ըսէ՛,- մէջ
ինկաւ իր գոյրը,- առ տղան լման մը
խելքը կորսնցուցեր է:

Քիրտ կնիկը, բան մը չհասկնալով
այս խօսակցութենէն, կիսափախ մը ի-
րենց դէմքին, իրարու՝ եւ մեզի նայե-
ցան:

Հարկ եղաւ, առ ի քաղաքավարու-
թիւն, իրենց ալ բացատրել մեր խօսակ-
ցութեան բնոյթը ու լսել նահւ անոնց
կարծիքը:

- Փիս թուրքերու զլընճէն ազատե-
ցաք որ արջի թախով մեռնիք, հա՞...
Յանկարծ՝ յաջողաբար երկու հրա-
ցաններ պայթեցան, հետեւէն հետո պու-
ռայու ձայնը հասան մեզի, ու կրկին
տրեց խոր լառութիւն: Կասկածները ծա-
ւերու վրայն ու եպուռները մեր անմի-
ջական շրջակայքէն կը շարունակէին եր-
գելով գիշերը անուշցնել:

- Կարծեմ զտան, զարկին, եր-
թանք,- ըսաւ Խորէն նորէն ոտքի ելլե-
լով:
- Եթէ կ'ուզես, դուն զնա՛, ես չեմ
դար գիշերով,- ըսի տեղէս չչարժելով:
Մենասուհին պլլուեցաւ եղբորը թե-
ւին:

- Պիտի չերթա՛ս, ալ թեզէ՛ զատ
մէկը չունի՛մ...
- Աղջիկ, մեռնելու չե՛մ երթար...
- Պիտի չերթա՛ս:
- Աղէկ, թող առւր թնւս, չեմ եր-
թար:

Յետոյ դարձաւ ինծի ու արհամար-
հանքով ու յագեցած ձայնով մը, ըսաւ.
- Կնի՛կ:
- Իրաւունք ունիս, քու էրիկմար-

զութիւնդ, ինձի ալ, քեզի ալ կը բաւէ:

- Կարծեմ արջը զտան ու սպաննե-
ցին,- ըսաւ Զէյնէպ:

- Զեմ կարծեմ,- ըսի ես,- եթէ
քերտեղը իմ գիտցած մարդերու են, եթէ
արջը սպաննուած ըլլաք, կը թափէին
վրան ու ամէն մէկը մէկ մէկ զնպակ կը
տեղաւորէր դազանին դանկին կամ մի
այլ տեղին, մինչդեռ մեք միայն երկու
զէնքի ձայն լսեցինք. ես նոյնիսկ կը
կարծեմ, թէ արջը դեռ չէ սպաննե-
ւած...:

- Արջ կարծելով իրար սպաննած
լըլա՛ն,- ըսաւ կիւլոյթի մատաղատի
կինը, լալու պատրաստ ձայնով մը:
- Զէ՛, մի՛ վախճար, նման բան չեն
ընեք:

Տասը բողէ շանցած՝ վերադարձան
անոնք խմբովին ու բացատրեցին, որ,
թէեւ սեւ, շարժուն ստուեր մը տեսնելով
վրան կրակեցին, բայց վստահ չեն, թէ
այդ ստուերը տ'ըլ էր, թէ մի այլ արա-
բած, եթէ արջ էր, վիրաւորուեցա՛ւ, թէ
ոչ...: Իսնի մը վտտահ չեն. միայն գի-
տեն՝ թէ ստուերին եղած տեղը արջի
զիսկ չկայ. զացին՝ ու նայեցան, արջ-
մարջ չկար...:

Տիրող աղմուկէն արթնցած, բէկը
եկաւ պատուհան.

- Նէ՛ օլտա, ի՞նչ եղաւ,- հարցուց:

- Իսն մը չեղաւ, դեռ յայտնի չէ
բէկ,- ըսաւ Մըստօ խեղճուկ ձայնով
մը,- թէեւ բան մը տեսանք ու վրան
կրակեցինք, բայց...
- Զէ՛ք ամ շնար, չորս հոգիով մէկ
արջը չկրցաք ստակեցնել, հախէն զալ:
Թի՛ւ:

Առաւօտուն կանուխ, չօպան Օսման
հօտը ետ բերաւ արօտատեղիէն ու մա-
կաղեցուց շուքին մէջ: Արեւը դեռ նոր
էր քարձրացած: Յօղը դեռ չէր շոգիա-
ցած ծաղիկներու բաժակներուն մէջջէն ու
աղուէնները դեռ նոր կը վերադառնային
իրենց զիւհրային որսէն: Թէեւ ամբողջ
գիշերը չէի քնացած, բայց յոգնութիւն
չէի զգար: Գացի Օսմանին քով, պատ-
մելու գիշերուայ անցուդարձերուն մա-
օին: Ուշադրութեամբ դիտ մտիկ ընելէ

ետք, ներշնչում մը ունեցաւ.

- Ետեները առ եւ եկուր երթանք փնտռելու, եթէ իրապէս վերաւորուած է, պէտք է մտերը տեղ մը պահուած կամ սատկած ըլլայ:

- Բէկը չի ձգեր որ շուները հետդ տարնա:

- Իրեն լուր չինք տար:

- Բայց եթէ անոնց բա՛ն մը պատահի...

- Ի՞նչ պիտի պատահի, բան մըն ու չի պատահիր:

- Բէկը կը կարծէ թէ, եթէ արջը վերաւորուած է, կատաղի կ'ըլլայ ու կրնայ շուներուն վնասել:

- Եթէ վերաւորուած է, կրնայ ան արնաքամ եղած ըլլալ մինչեւ հիմա՝ ու տկարացած, իսկ եթէ վերաւորուած չէ, արդէն չինք դտներ զինքը: Յամենայն-դէպս, եկուր շուներուն փորը կլտացը-նենք ու մենք ալ, մեր տունը երթալով նսխաճաչինք, այս ձեռով դեռ այդ մասին զիչ մըն ալ խորհելու պատենութիւն կ'ունենանք:

Օսմանի կինը, Կիւլիզար, հայ անունով Արեւ, սքանչելի աղջիկ մըն էր ու այդ շրջանին մէջ ապրող բազմաթիւ հայ աղջիկ ու աղջիկներու անմտն ջոյրը. եթէ բոլորս մէկ մօրմէ նած ըլլայինք իրեն հետ, չէր կրնար աւելի սէր ու պուրջութեանք տածել մեզի հանդէպ: Օսման իրապէս կը սիրէր զինքը ու յաճախ կը կրկնէր, թէ շինք ուրիշ՝ կրնար նման աղջիկ գտնել: Մաքուր, վստահելի, ձեռներէջ ու խելացի էր Արեւ, ու Օսմանի սէրը, իր վրայէն յորդելով, կը տարածուէր նաեւ մեր վրայ: Օսմանի հետ երբ ներս մտանք նախաճաչելու, որբախացաւ ու հրաւիրեց որ նստիմ: Հաւկիթով, թարմ կարագով, օճախի կրակին դէմ կարմրցուած ցորենի հացով ու պանիրով լաւ նախաճաչ մը տուաւ մեզի: Ինք չկերաւ մեր հետ, միշտ ժպիտը դէմքին, ծառայեց՝ ու մէկ երկու անգամ ալ, կոնակը ինծի ու Օսմանի դարձուցած, զաղտնորէն սրբեց արցունքը:

Երբ լաւ մը կշտացած դուրս ելանք, բէկի աւազ կինը - բէկը երեք կին ու-

նէր - Ֆէթիհէ Հանրմ, գունատ դուրս պատուհանէն դուրս ձգած, վարը, բա-կին մէջ կարգով շարուած ծառաներուն կը բաշխէր օրուայ աշխատանքները.

- Կիւլ՛, դուն հեծուորներուն հետ արտ գնա՛: Մըստ՛, դուն լեռ գնա՛ փայտ բերելու. Ահմէտ կալտեղին ջրէ ու լողէ, որ շուտով կ'ամենեւ սկսիք. Չախօ գոն...: Երբ զգացի որ կարգը ինծի եկաւ, քայլ մը առաջ եկայ ու ըսի.

- Հանրմ, կը պազատիմ, հրաման տուր որ ես Օսմանին հետ կորեկի արտը երթամ, մենք կը կարծենք, թէ թերեւս արջը երէկ գիշեր...

Այի բէկ, որ պատուհանին մէջ կը նստը հտեռ ոտքի էր, կնոջը պատասխանել կարենալէն առաջ, վար ծռեցաւ ու, ըսաւ.

- Հայտի կիթ, օղլում, հայտը կիթ. գնա՛ որդի, գնա՛. բայց զը՛յլ եղէք, փորձանքի մը չհանդիպէք:

- Ենթահակաւ եմ, բէ՛կ:

Գիշ մը անդին, բակին մէջ, Օսման ինծի կը սպասէր. իր մեծածաւալ դարասաղ աւորճանակը կոխեր էր մէջքի դատին մէջ ու երկար կոթով թեթեւ կացին մը նետեր ուտը:

Ճամբայ էլանք:

- Եթէ բէկը տունը չըլլար, չեմ կարծեր, թէ հանրմը հետդ գալու համան տար ինծի, - ըսի:

- Կարծեմ բէկը քեզ շատ կը սիրէ:

- Կարծեմ թէ:

- Գիտե՛ս ինչու:

- Ձեմ դիտեր:

- Ինք զաւակ չունի, չի կրնար ու-

նենալ, ան՛ր համար:

- Թերեւս:

Երբ կորեկի արտին մօտեցանք, Օսման դարձաւ մեզի ընկերացող շուներուն ու ըսաւ.

- Հայտէ նայինք, սալաններ, դտէք սա արջուն հետքը:

Մեր լաւ շունին, Չալքիին համար դժուար եղաւ այդ բանը ընելը. մտաւ արտին մէջ, մէկ երկու անգամ դարձաւ ինքնիւր վրայ ու երկու ոտտուով մտաւ արտը եզերող մացառուտին մէջ. վազե-



Հրատարակած է բանաստեղծական վեց հատոր։

ԵՑանքրու երգըս, Էնթուկըս, ԷՀայաստանս, ԷԿեանք եւ Երագս, ԷՌղբոյն Էնք կեանքն եւ բանաստեղծական իր վաստակին մեծ ծառը ամփոփող ժողովածու մը՝ ԷՌսկի աշունն անունով։

Մամուլի ասկէ է եւ շուտով լոյս կը տեսնէ չեղբուածներու իր նոր հատորը՝ ԷՏառապանք։

ԷՌղբոյն Էնք կեանքնը Թարգմանուած է պարսկերէնի։

ԴԵՌ ԲԱՆԻ՝ ԴԱՐ

Դեռ Բանի՝ դար ու թափօր,
Արցունքներով եւ յոյսերով բռնաւոր,
Մշտադալար այս նամբուն մէջ հնամենայ
Պիտի Բայեն կարակար,
Պիտի իյնան իբրեւ խաչեալ ու վկայ,
Մինչեւ ծագի նոր արեգակ մը արդար...
Բանի՝ խորան ու տանար
Պէտք է կանգնել դեռ այս հողին վրայ հին,
Որ հանութեան երկնային
Զանգերն անուշ ամէն սրտի մէջ հնչեն...
Ո՞ր իմաստուն մարգարէն
Պէտք է մատնել խարոյկի,
Որ աչքերուն դէմ մարդոց
Ճշմարտութեան լոյսն անխափան բռնկի:
Դեռ Բանի՝ դար պիտի մնան այսպէս գոց,
Նկուզներու պէս տամուկ,
Դռներն ամուր պարսպապատ խիզներուն...
Օ՞, Բանի՝ մարդ ու մանուկ
Պիտի ստրին դուրսն անընկեր եւ անտուն,
Պիտի մարին անօթի,
Մինչեւ ծագի արեւն արդար նոր կեանքի,
Մինչեւ օճախն ամէնուն
Ազատ ու շէն նարնատի,
Մինչեւ ըլլայ կտոր մը հաց ամէն օր
Վրան ամէն սեղանի,
Մինչեւ իրար ողջունեն տէր ու բանուոր
Նոյն ժպիտով սրտալի...
Մ. ԻՇԵԱՆ

ԳՈՒՄԱՐՈՒՄ-ՀԱՆՈՒՄ

Ես գիտեմ – աւա՛ղ – գազտնի՛քը տխուր
 Փակուած փեղկերուն.
 Լուսաւոր կամ մութ ոչ մէկ վարագոյր
 Կ'ըսօզէ մարդոց դէմքերը թափուն...
 Իրիկնապահի առ խաղաղ պահուն
 Կը տեսնեմ ահա ես գանձնի՛ շարժով,
 Փեղկերէն անդին,
 Նստած առանձին եւ կամ խօսէ՛ խօս...
 Հակատներ դեռ հարթ եւ բազմակննձի,
 Իսկ անոնց ետին՝
 Մտքերու թնձուկ եւ բեւեռագիր,
 Հաշուի աղիւսակ,
 Թիւեր զինավառ, թիւեր անհատում,
 Գումարում, հանում...
 Զինուորներու պէս, սիւնակ առ սիւնակ,
 Հակատներու տակ,
 Աստու իրիկուն,
 Թիւերու արշաւ, նահանջ, յարձակում,
 Գումարում, հանում...
 Ամէն մէկ ժպիտ եւ ամէն բերկրանք,
 Ամէն մէկ կարիք եւ հացի պատառ,
 Ամէն սուրբ համբոյր, սրտագեղ շոյանք,
 Ամէն երազի պսակում արդար,
 Ամէն ընծայում
 Թիւ է եւ վնասը եւ հաշուեցուցակ,
 Գումարում, հանում...
 Որքա՛ն պարտապան եւ պարտամուրհակ,
 Թիւերու լուծին ներքեւ անոգո՛ք
 Գրաստի պէս լուռ եւ կորաբամակ
 Որքա՛ն պարտատէր դէմքեր մտահոգ,
 Թիւերու գերի,
 Թիւերու անին համար ցանկալի
 Կը հսկեն անխուն գիշեր ու ցերեկ...
 Այսօր եւ երէկ
 Կեանքը բովանդակ՝ մե՛ծ հաշուետումար,
 Ելի՛ն դէմ անհուն՝ վատտակներ նիհար,
 Ծառ հաշուեկշիռ,
 Յոյսի պէս ժպտուն թիւերու խոստում
 Եւ մահավնձ...
 Գանկին մէջ մարդոց՝ թիւերու շուրջպար,
 Թիւերու անծայր սրս ու սրունում,
 Գումարում, հանում...

Ես գիտեմ – աւա՛ղ – գազտնի՛քը տխուր
 Փակուած փեղկերուն...

Մ. ԻՇԽԱՆ

ՀՐԱՋ ԶԱՐԴԱՐԵԱՆ



*Հասարակ լոյս ընծայած է երեք դարձ-
«Մեր կեանքը, «Յրբացող մարդիկ» և «Ժա-
մանակ և խորհուրդ» իւրք: Ունի վիպական,
մանրանկարական և զինագրաստական անուից դարձե-
լու հակայ միտք մը:*

ՃԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԻՒՐ

Խոսքսած, պայքուցիկ իմաստ, — Մասամ Պոլսարի, ո՛ր մուտու Միայն
այդ հերոսուհին չէ, իր բոլոր անձինքը՝ անձ նիքն է: Մանր քաղցիներու,
իմաստակներու, միջակներու, խոնարհներու, աննշաններու մէն մի տի-
պարը՝ ինքն է: Յիշակուք: Տիպարներուն հետ նայնացումի իր կերպարա-
նափոխումը կը յառարացնէ իր մէջ ո՛չ թէ տպաւորութիւն, յուզում, այլ՝
«շօշափելի» զգայարմանկա՛ն հակազգեցութիւններ: Իր գրական մէկ գար-
ծի աւարտումէն ետք, սիրտը կը խառնուի, փոխելու նուպաներ կ'ունենայ,
երկար ատեն իրքը միայն գէշ հոտ կ'ունենէ:



Կը բաւէ սակայն մատով դպչիլ, որ պայթի հոշակաւոր տարագը եւ իմաստին բարձրացող «տունկը» ստանայ իր տիրապետող երանգը: Ուրիշ խօսքով՝ անհնարին է որ ստեղծագործողը չըլլայ կալանաւորը իր ստեղծագործութեան: Ի՞նչ վարդապետութիւն ալ ճգնի կիրարկել, ինչքան ալ բարձր թափէ, եթէ երկինքն ալ փուլ գայ ... դարձեալ չի կրնար ան դադարիլ ինքզինքը ըլլալէ, եւ միայն իր *Վէջէն* է՝ որ կեանքէն եկած ամօրինք դուրս պիտի գան, ենթարկուած համադրութեան մը, որ ստեղծագործութեան աւագ պայմանն իսկ է: Երբ նոյնիսկ կը խորհի, թէ իրեն մերհակ տիրապետեալ, անունը կեանքին, հոգիին ամրափակ սենսակներէն պարպած է յետին շունչը իր՝ հեզիմակի «ողէն», ճիշդ այդ ժամանակ է որ ան կու տայ ինքզինքը մատնող ցցուն յատկանիշները, այդ ժամանակ է որ աւելի քան երբեք, ան հոն ներկայ է ռաբէն մինչեւ գլուխը: Մէջն ըլլալով սիրտն ու փորձուիքը: Ո՞վ գով կը խարէ: Եւ եթէ երբեք հնարաւոր ըլլար այդ քացակայութիւնը, ստեղծագործական արարքը պիտի ըլլար անյզմեալի, դառնար վիթխարի անհեթեթութիւն մը, ու սրտմութիւնը աստուածներուն, քանի որ ան արդիւնքն է ոգիին եւ միւրեւն միաձուլման կախարհամէքին:

Կեանքը համանիշ է իրագործումի: Պոստումէ՛, գրել՝ ասոր գերագոյն կերպընկալումն է: Կը բաւէ որ պատարագը ծայր տայ, որ սկսի *Վէջապոլիզը*՝ երկնելու, որպէսզի բոլոր անկարելիին հարցականներուն յօգս ցնդի, ներդաշնակութեան բոցերէն: Ամէն ինչ բանակա՛ն է, լիալի՛ր, կատարա՛լ, աւառնա՛ղ անշարժութիւն եւ յորձանուտ հոտով կապոյտի, որ կը բանայ երկինքն երկնքի ետեւէն: Մեծ հնազանդում՝ տիեզերքի կշռոյթին: Մովալուկ աստուածներու կանառը իր օրագրակիցն է որ կը ստանայ: Մինչ ստեղծագործողը, անկիւն մը կ'ծկուած, լուս, անձկայրեաց, կը խայտայ օտարութի խայտամեօվ մը, վասնզի անա շարժած է թելը սիրոյ արարին, տաւած է պտուղը երկունքին, որմէ մնացած է իրեն խոնարհութեան այն անզին բրբռացումը, որով արուեստագէտը կը համակուի միայն, եւ միայն այդ գինը վերելով, եւ որ կը չափուի իր ծնրադրումովը, կեանքին եւ տիեզերքին առջեւ: Ու այնքան աւելի անա կ'անի իր անձը, ինչքան աւելի՛, խոնարհութեան ուղիներուն, պարտեալ ու յօժարեակ սիրուի, գոհարեալ վարսքը ծունկին, կը ստանայ դէմքին՝ շունչը գերերկրային:

Հեզութիւն է սէրը, վասնզի կը վառէ Եսը: Ու անոր քանդուած խոցէն դուրս կու գայ պուտը, կ'անի անամնականացումն եւ կը շարժէ թելերը երկինքներու տարածքին: Պոստումէ՛, - ինչ որ է լոյսը արեւին համար, նայնն է խոնարհութիւնը Սիրոյ հումար: Անամնականացի որպէսզի անկանաւ:

Մանուանդ՝ հեզութիւն անհասկ, որ կը բաւէ էութեան, ինչպէս արիւնը՝ սիրտին: Ձկայ կարեւոր շարժում մը հոգիի, որմէ նոյնեւտայն հոգին չվերածուի խոնարհութեան ծովու մը: Մով մշտակենդան, որուն հորիզոններէն միայն կ'ուղղուի մարդը դէպի մեծ բացերը, որմէ կը ստանայ տարածութիւնները պեղող ակնարկներ եւ համեար՝ որ կը բանայ մի առ մի կեանքի դռները քա՛նախոնարհութիւնը:

Նախ՝ ըլլալ: Յետայ՝ սիրել:
Եւ, ի վերջոյ, պաշտել:

Փիւն Թէյնա սը Շարտն՝ Խոնք Երբանկուքեան վրայ:
- Ինչն՝ը կը գրես, - կ'ըսեն:

Կեանքը կը գալարուի, կը փշրուի բախումէն՝ դժոխքներէ փրբած լուսան-
բուն եւ երկինքներու ազերստեայց կանչերան,
Կեանքն գերին է մարդու յուսակտուր ճակատագրին, որ կ'ուզէ միջամտել,
որ ելած է կռուի, որ կ'երթայ իր լիութեան, կ'երթայ գործելու արարքին,
հարցումը նայնքան անհեթեթ է ինչքան եթէ ըսուէր.

- Ինչն՝ը կ'ապրիս,

Քանի որ երբ կաթիլ առ կաթիլ կը մեռնիս, այն ժամանակ է որ կ'ապրիս:
Որ կը գործեմ: Որ կը գրեմ:

Երբ ճախորն է, որ մարդկային տեսիլը, դեռ երկի ճիւղներուն
տակ, կը ճեղքուի հոգ ապառաժ, կը բանայ պատուհանները ճգնաժամ
տնկած, ճորագ Գարունի մը աւիշներէն խենթեցած,

Երբ այլագնաւթեանց բիր կերպարանքները տակաւ կը լուծուին
երկրագնդային իմացութեան ու միակ մարդկութեան մը յարմումէն,

Երբ մարդը կը տառապի, կը յուսայ, կը մտնայ, կը տնջայ, կը
ճգնի, կը սիրէ, երբ այսպիսի բաներ կ'ընէ իբր միակ ուղեղի մը բշիջնե-
րովը, իբր միակ սրտի մը բարախումէն,

Երբ «գեր-Մարդկութիւն» մը, իմաստնացում, տակաւ կը յարմու
վազորդեան լիսպատէն,

Երբ ժամ է ընելու, բլլալու համար,

Երբ ժամ է տեսակի խելայտով փոփոխութեան,

Երբ կեանքը խօսարշաւ կը դիմէ գերկենցային դիմափոխութեան,
Անա՛, ահա՛, Մարդուն հարցնեակը ահա կը ճողայրի՛, կը յայտնուի փա-
նօք շատ, կը ծառանայ վազվազկոտ իր տարակերպ բժոժէն ու, մզմուսն-
ջայի՛ն, կը հաւաքէ տուումն իր առագաստիկ, արայրէ թեւերովն իր թե-
ւարա՛շխ, կը միտնուի շոգարձակածներու մէջ վանայնեան,

Արկածախնդրութիւն գարգանդական, կը գարնէ գլուխը փորձարկու-
թեանց ահալիթխար սրուակներուն,

Անդարձ վնիռով խաղամու օտարտի, ելեր է իր ամբողջը կորոնցնե-
լու կամ գրաւելու ամբողջն անբաւ,

Ելեր կը փնտռէ, Աշխարհակալ ճնաշրջիկ, նոր աշխարհը, տարա-
ծութեանց սոսկաարտու լուսեանց մէջ, որ կը սուրբան բոցակէ՛զ՝
կտարուանքներ տիեզերքի,

Այ ինչպէ՛ս կը հարցնեն՝ Ինչն՝ը կը գրեն:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

Լոյս ընծայած գլխուօր զորեղն են. — շէք-
բաժնչոյի պահն, շխմաստեղծութիւններ, շէ-
քս եւ Շամիրամն, շերտի երգեր, շէշման-
մուտ, շէշման ծաղիկք եւ.

Արամ Գառնէ ծաղիկն է նոյնպէս ծանկ-
կան գրականութիւնը եւ սեփ թարգմանչական
վաստակ ճշ: Վերջէս թարգմանից եւ լոյս ըն-
ծայից «Պիլիբիտի երգերը»:

**ՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՄԵՐ ՀԵՌԱՒՈՐ**

(ՔՆԱՐԱԿԱՆ ՊՈԵՄ)

1.

Ես ծնունցի վառ Մայիսին.
Հագար բոզբոզ, հագար կակոն
Իմ աչքերի հետ բացուցին,
Եւ մի բաշիկ արձագանգեց
Իմ առաջին անգոր սիչին:
Պատմում եմ քե՛ սեմեակն այն,
Ուր կեանք մտայ այն առաւում,
Ունէր մեղիկ մի պատուհան,
Փեղկն իր դեղին բուղբ էր իւզում. —
Ես ծնունցի՝ արտում բախտի մի առաւում:

digitised by A.R.A.R.@

Դրսում արեւ, դրսում ծիծառ,
 Դրսում երկինք, կապոյտ, պայծառ,
 Իսկ մեր վարձու նեղ սենեակում
 Արեւն իր այժմ իսկ չէր քարթում. —
 Ես ծնուեցի՜ խինդի-վշտի ազատուզում:
 Ես ծնուեցի ազնիւ ու սուրբ մի ջերմ գրկում,
 Մի կիսամութ, մի դալկադէմ, լաւ սենեակում,
 Մականյն դրսում վարդենին էր անուշ բուրում,
 Ծաղկունքն իրար գգում էին ու համբուրում. —
 Ես ծնուեցի՜ բնութիւնն էր երբ զիլ երգում:

2.

Հիմ, իրանեան քաղաքն այն,
 Որտեղ ծաղկեց
 Առաւօտը իմ առաջին,
 Արեւու էր, խնդուն ու մեծ.
 Այնտեղ էր, որ եկան — անցան
 Ամենք օրերն իմ մանկութեան:

Քաղաքում այն արեւելեան, —
 Ուր ծնուեցին ու ապրեցին
 Եւ ուր մեռան
 Նախնիքներն իմ տոհմական, —
 Լցուեց հոգիս պատանեկան
 Ծրագներով ու սուրբ սիրով
 Մի յարատեւ,
 Որ ինձ տուին մտքի, հոգու
 Թռիչք ու քեւ:

Մականյն որքա՛ն, որքան անձուկ
 Եղան օրերս պատանեկան,
 Ես չունեցայ հոգու մեցուկ,
 Մտքի, սրտի քառ ու կայան:
 Այդ քաղաքում քաղի գարունն
 Իմ ծաղկաբոս,
 Բերկրանքի միչ, անհոգ տաղեր.
 Իսկ տուայտանքն իմ պատանեկան,
 Այն քաղաքի վերջալոյսներն երազային
 Ու երբահիւս, հովի քեւով
 Ողջ փետտեցին, առին-տարա՛ն:

Այն քաղաքում էր մանկատունել
 Իմ մակասր խոկումներէց.
 Երբ կեանք ելայ, ես ունէի

Ճակտիս վրայ երեք խոր գիծ:
 Երեք խորշում ես ունի՜ ճակտիս վրայ,
 Երբ դեռ անփորձ ու երազկոտ երիտասարդ,
 Ուղիներով ինձ անծանօթ,
 Արեւելեան այն ֆազաֆից
 Ես դուրս ելայ:

3.

Օ՛ր, ճամբանե՛ր, օ՛ր, երկիրներ՝
 Դուք աշխարհի խայտարազ
 Դեմքին փռուած:
 Որքան պայծառ՝ եւ նայնքան մե՛րք...
 Քանի՛-քանի երազ ու յուշ
 Փուշ են դարձել ձեր երկայնքին,
 Քանի՛ անցորդ, յոգնած, անուժ
 Դարձել են գոհ ձեր ֆայնին:
 Հենց առաջին ֆայլիս վրայ
 Ամէն առան, ֆազաֆ ու գիւղ,
 Ամէն մի ժայռ, ամէն ազբիւր,
 Ծով, լեռ ու ձոր, օ՛ր, ամենու՛րք
 Ամէն-ամէն ազամարդի
 Իմ խոհերին օտար մնաց:
 Ուղիներում այդ անծանօթ
 Օտարուտի,
 Ես գգացի՛ ինչ որ կը գգայ
 Մայր անտառից գատուած մի ծառ,
 Հեռու՛, փոշոտ ճամբի վրայ:
 Ես գգացի՛ ինչ որ կը գգայ
 Թեւն ու սուր քարդուած բոշունն
 Տատակապատ վիհի շրթին:
 Ես գգացի՛ ինչ որ կը գգայ
 Հեծուորը կորցրած մի երիվար
 Մարտի արնոտ ու գոռ դաշտում...
 Օ՛ր, ճամբանե՛ր լոյս ու մթին,
 Վաղնչական իմ բղձերով
 Ես ինձ կորած գտայ անուժ
 Ձեր սլորտում:

4.

Ու մի օր էլ, երբ ծովն կապոյտ
 Վերովտում էր կարմիր, պայծառ

Արեւի տակ,
Ես ինձ գտայ՝
Հանգրուանում մի մարդակայտ...

Տեսայ հեռու-հեռունքից
Փռքորիկներն ենգամ, անցած
Բազմութիւնն՝ քննակատոր՝
Յնցանկատու ու արիւնած
Կարաւանը՝ դժբախտութեան
Ու արցունքի,
Ժողովուրդն իմ նայիրեան,
Որ հայրենի իր երկրի մէջ
Դարերի դէմ ծանր ու կարծր քիկունք տուած
Ժայռ էր հզօր,
Բայց դաւածին մի առաւօտ
Մոխրահագի, գազանակերպ
Ճիւղի մի քանդիչ քաքքով
Փռւլ էր եկել, դարձել բեկոր...
Մե՛ծ, ընդարձակ ու ծաւայուն
Աշխարհի խորք այն արեւմտին,
Սարսափների գոռ ուղիք
Իր դէմ առաւ իմ եկզ հոգին.
Եւ գալիքն ինձ երեսց
Դժնի, դաժան,
Մի սահարկու կերպարանով.
Կեանքը՝ ցաւի, տառապանքի
Մի խառնարան,
Յար ու աննինջ արեւալիրով,
Ազտանքով ծփուն մի ծով:

Օ՛, ժողովուրդ իմ նայիրեան,
Ես՝ հեռուոր ու անվախճան
Համբաններում քա գաւակը,
Դե՛ւ, իմ մայրք հալածական...
Այստեղ էր, որ մայր ու որդի
Իրար գտան:

Այստեղ էր, որ տառապանքիդ
Խոփը անցաւ իմ ճակատով
Եւ խորշումներն իմ բազմացան...
Ե՛ւ իմաստն իմ գոյութեան,
Ե՛ւ հեռուոր համբաններիս
Կուրծին յանձնած իմ ապագան
Աչքիս սաբել նոր ձեւ առիմ
Ու ամբացան:

Օ՛, խաշտանգուած ի՛մ ժողովուրդ,
Այստեղ էր, որ հոգուս, մտքիս
Իջաւ մի նա՛ք, մի սո՛ւրբ խորհուրդ...:

154-2000

5.

Դտուն ու ամիսինդ քա օրերի
 Զարեուրանքն էր շաղաւած խորին
 Այդ խորերդում.
 Եւ ապրելու, եւ սուկալու
 Լայս հաւատն էր
 Քա մէջ երգում ու խլրտում:
 Ես մտացայ ահ ու արասափ...
 Ու փարուցի քա մեծ սրտին:
 Քազգր էր ըմպել դառնութիւնը
 Ապրած կեանքիդ.
 Քազգր էր՝ ինչպէս մանկան շրթին
 Մօր լուսեղէն տարք ստինքից
 Տօզուած կաթը ականակիս...
 Քազգր էր ժպիտդ արցունքիդ տակ՝
 Լաւ օրերի յայտից ցաքած,
 Քազգր էր, ինչպէս մօթ, թխպապաւ
 Երկնքի սեւ սրտի վրայ
 Պայծառ արեւը ճառագած:
 Ու ձուլուցի ես քա կեանքիդ՝
 Քա մտածման, քա հոգսերին,
 Քա խնդութեան ու քա յայտին,
 Քա ցանկութեան ու բազմանքին:
 Նոր թեւ տառ. քեզնով հոգիս,
 Ես մտացայ ճամբաներն իմ փնտաւտուքի,
 Ես մտացայ սին երազներն
 Անմտութեան ու անտի...:

6.

Փայտն ու քարըքը եւ թիթեղը,
 Օտար հազում, երգով, խինդով
 Ու ծիծաղով իրար բերինք,
 Իրարու ետ ապակեցինք...
 Ու բարձրացաւ ծուխն երդիքից
 Երկինքն ի վե՛թ,
 Որից աստղերն ու ծ ստացած՝
 Պայծառացան, դարձան արեւ,
 Որից հոգին մեր վերամբարձ
 Մաւալուցաւ սաւառնաթեւ...
 Նոր յարկի տակ սէրը փթթեց,
 Տուց պտուղ բազմարուրեան,
 Խանձարուրները լցուցին,
 Ճռուղեցան... .

Առատից մինչ իրիկունս-
 Մեր վաստակը հաց չէր միայն,
 էր՝ նաև լոյս-
 Մեր դժուարը ցու չէր միայն,
 էր՝ նաև յայս:
 Իրար խառնած լոյսն ու յայտը՝
 Ազնուագարմ մեր վեհ հոգին
 Հպարտ ու ջիւնք իր հայեացքը
 Ուղղեց կեանքին ու աշխարհին:

❖

Լաւեր տեսանք, չարեր տեսանք-
 Զարին նայեցինք արեւ աչքերով
 Լազուարթութեան մէջ,
 Ու ծիծաղեցինք:
 Լաւին նայեցինք հոգու աչքերով
 Սրտի ծովի մէջ,
 Ու հմայուեցինք:
 Լաւին սի՛րտ տուինք,
 Զարին տուինք ցա՛ւ...
 Ու դաւերի գէ՛տ,
 Մեր մեծութիւնով, մեր վեհութիւնով
 Կանգնեցինք այնպէս,
 Ինչպէս արեւն է կանգուն մշտապէս:

7.

Իսկ մեր միտքը՝
 Սրտից փնտրուր ու բնւ առած,
 Ոգի գառած,
 Օր ու գիշեր անճամ, աննինք
 Ճախրեց հեռու ոլորտներում,
 Մա՛յր նայիրեան, միտքը մեր վէս,
 Սաւառնաթեւ ու կարտով
 Յար, մշտապէս այցելեց քեզ,
 Քո աշխարհը նրան թուաց
 Որպէս երկփեղկ մի պատուհան...
 Լայս էր ցելում իր մէկ փեղկից՝
 Ժպտում ու ջիւնք աչքի նման,
 Իսկ միտք կոյր էր, խուտր,
 Որդեկարոյս, վշտից սաչոր,
 Սեւաբզգեստ ինչպէս մի մայր...
 Հայոց աշխարհն իմ ծննդեան

Մտարի պէս մեզ երեւաց՝
 Մէկ աչքը լոյս, ու միւսը՝ քաց...
 Այցելեց ինչ մեր միտքն արթուն,
 Ուխտաւորի պէս զերմեռանդ
 Շրջեց, մտաւ նա սնէտուն,
 Խունկ խնկարկեց, կնդրուկ ծխեց,
 Ծաղիկ ու ցօղ սփռեց մեր սուրբ
 Նախնիքների շերիմների,
 Ու ետ դարձին իր հետ քերեց՝
 Յանբժուքեան խորհուրդը մեծ:

8.

Յանբժուքեան խորհուրդ, չքնա՛ղ,
 Որ դարձնում ես հոգի՛ն, շքեղ
 Լոյսերի մէջ, մի սուրբ տաճար,
 Որ պնդում ես միտքը մարդու
 Աստուածային շնորհների
 Զինք ու պայծառ ծիսաճանկ
 Ա՛ի տեսկան.
 Որ դարչնում ես՝
 Սիրտը մտքին միաւորող՝
 Կամքը պողպատ...
 Որ դարերի կռած ռակի պատուանդանին
 Փուխր ու սկսար կառայցն մարդու
 Դու պահում ես կուռ, անխորտակ:

Յանբժուքեան խորհուրդ, չքնա՛ղ,
 Ոսկեղկեղզ, յայտի գիմի ղարկ ու անուշ,
 Դու գալիս ես յանբժ ծաղկուն
 Արարչական պարտեզներում
 Բուրդը բեզում ատչքներէց,
 Դու գալիս ես մռայլ ծովի
 Հողմածածան
 Գռու ու անեղ մռունջներից,
 Եւ երկնային ամպրոպներից ես քեւ առած
 Դու մեզ գալիս:

Յանբժուքեան խորհուրդ, չքնա՛ղ,
 Օ՛ր, կենսատու արի՛շ, բուռ՛ր,
 Բոլոր ազնիւ հոգիների
 Եւ մեծութեանց...
 Դու մեծազանձ, շղատարկուող շտեմարան,
 Դեռ շա՛տ վազուց, դեռ՝ աշխարհի

Ջարն ու բարին ծնուած օրից՝
 Սուրբ նախնիքն իմ քեզնով միայն
 Հազարդուեցան ու զօրացան :
 Եւ դարերի երթով շքեղ՝ յամբ, իմաստուն,
 Բիւր սերունդներ եկան, սնցան՝
 Քեզնով լեցուն, քեզնով արթուն... :

Յ .

Օ՛, նայիրեան մա՛յր, ի՛մ անուշ,
 Զրկուած հողից հայրենական՝
 Բարեկական պարտեզների պէս ծաղկեցինք
 Մենք տեսարար ու չըկարանք .
 Յանբժուրեամբ յգիացած
 Վարդուարուեցին արգանդները
 Մեր հարսերի,
 Ու պտղեցին կեանքով յառաքի,
 Եւ աշխարհի շորս ծագերում
 Մազկազարդուեց հանճարն հայոց
 Ու փայլ տուեց բոլոր օտար ոստաններին :
 Ուր ուտք դրինք՝ անասունները կեանք առան :
 Ու ծաղկեցին մեր քրտինքով .
 Ուր ձեռք դրինք՝ գարշ սահիմները շունչ առան
 Ու բոլոր տուին դրախտային .
 Ուր միտք դրինք՝ անձեւ ժայռ տեղ ստացաւ
 Եւ սպարա՛նք, պայա՛տ դարձաւ :
 Մեր առօրեան ընդարձակուեց,
 Պայծառացաւ ու լայնացաւ՝
 Արեւելքից մինչ արեւմուտք
 Եւ հարաւից մինչեւ հիւսիս՝
 Սփիւտք դարձաւ ու խորսխուեց,
 Մեկնեց դրօշ, կանգնեց խոխոտ՝
 Աշխարհի դէմ անկարելից,
 Ու բզուեց, ու սքոտաց .
 - Ազգ էի ես, դարձայ թափառ...
 Կայծակնանար, մզակոտոր...
 Բայց իմացե՛ք, արմատներն իմ
 Հողագնդում, այնքան ամուր,
 Այնքան խորն են,
 Որ չի հասնի ո՛չ մի տապալ
 Մինչ տիեզերքը բռնաբարուի,
 Կամ՝ արեգակը խաւարի,
 Եզե՛լ եմ ես, կա՛մ, կը մնա՛մ
 Աշխարհ քո դէմ յազբ ու արի :

Լսեց աշխարհն ու քրքջաց
 Նենգ ծիծաղով մի չարամիտ,
 Ու քրքիջն իբ ծակեց, անցաւ
 Ամէն ականջ, ամէն տալիք,
 Ամէն հայի խեղճ սրտի մէջ
 Թողեց մի դռն, բռնեց մի ցաւ,
 Մի նոր կասկած...
 Օ՛, նայիրեան ի՛մ մայր, ի՛մ սուրբ,
 Կոր մղձաւանջ եկաւ չափեց
 Օտարութեան մէջ մեր շէմքին.
 Անակնկալ մի սարսափի
 Տենդով պատեց մեր սէզ հոգին:
 Այդ անմարմին, աներեւոյթ
 Մի աւր է չար, անխօս ու լուռ,
 Տաւերժութեան մեր քշմամբն,
 Որ շրջում է թեւերն արձակ
 Մեր վէտ երթի ճանապարհին:
 Խածամուծ չէ՛ մահակների,
 Ոչ էլ արեան կարմիր գետի.
 Չի՛ յօշոտում հաքազանին
 Մանկիկներին մեր կաթնակեր.
 Չե՛ն բզաւում, չե՛ն քրքում
 Մերունազարգ խելագարներ,
 Ո՛չ էլ անասնո՛ք բոցն է լսփաւ՛
 Բռնարարուած կոյս մարմիններ...
 Ո՛չ, մղձաւանջն այդ չարազէտ
 Շարպան չէ՛. ա՛յ էլ կրակ.
 Չունի լպիրշ ու անկեքեք
 Խուժանային լիրբ հայհոյանք...
 Նա գալիս է մեզմիւ, ժպտում,
 Ճամբաջ կտրող փողոցներից,
 Կրպակներից, գործի տեղից,
 Լուսեղ, խնդուն դահլիճներից,
 Եւ նուագից, եւ երգերից,
 Ուրախ, չճնաղ ազդիկների
 Բարեան ու բարբ մարմիններից,
 Ծրկնակարկատ տանքներից,
 Գօզանջներից գանգակների...
 Այն գալիս է օդից, ջրից,
 Մառի շուփից անտառների,
 Մաղիկների բուրմունքներից,
 Եւ առօրեայ կերած հացիդ
 Փատառներից է այն գալիս:
 Գալիս է նա քննանճով սուտ,
 Հրապարակ քեզ օրօրդ,

Ինչպէս տշնան մեզամբս սիրք՝
 Սազարթնքին նոր գոյն տուող :
 Գալիս է նա դիւքիչ, ժպտուն,
 Բայց իր ժպտի մէջ՝ մանու քայն,
 Լռյս է՝ լոյսիդ քանը մարտդ,
 Բաց է՝ կամէիդ ուժը հայտդ,
 Բաց գիրկ է նա՝ ինչ յարտեան
 Իր մէջ առնող՝ շարէ դամբան :

11.

Բայց բախտն այն, ինչ խնամ է քիրտ,
 Յոյս ու հաւատն ես են բերում,
 Եթէ նրանք դեռ ապրում են
 Կողոպտածի անպարտ հոգում :
 Օ՛, նայիրեան իմ մա՛յր չ՛քնաղ,
 Մեր հոգում յար լոյսն էր անմար .
 Ու մշտադրիւք մեր հաւատքի
 Ակունքները գահարձակա
 Ուժ տուին մեզ միշտ տոկարու,
 Ուժ տուին մեզ ոստի զէմ
 Ելնել խիզախ, ներմակ մարտի :
 Բերդ ու ամրոց կառուցեցինք,
 Հոգու, մտքի յակիքներով մեր շողարձակ,
 Եւ տանքներ՝ լոյս մեարայեան՝
 Մեր դժնդակ աննապարհին
 Որպէս կռուան, լինելուքեան
 Որպէս խորհուրդ՝ մեր սուրբ նախնաց
 Նախնական, արդար բռնին...
 Ազանիներ արձակուեցին՝
 Պատգամ տարին հեռու-հեռու
 Երկրներում ապրող հային
 Պայքարելու եւ տակալու
 Նենգ ոտխի դէմ անարկու...
 Ազանիներ արձակուեցին՝
 Մեարայեան սուրբ տանքներից՝ .
 Հային Հայկով, Ակնայ երգով,
 Հային Սասնայ Դաւթի գարկով,
 Հային Մասսի մեծ խռովքով
 Հայ պանելու :
 Ազանիներ արձակուեցին
 Մեարայեան սուրբ տանքներից՝
 Աշխարհի դէմ բողոքելու,
 Եւ կուսակուսած դառնալիւնը
 Հայրենագուրկ, անիրաւուսած

Մեր օրերի՝
 Բուն՝ը, յուն՝ը, աշխարհի մէջ ապրող մարդկանց
 Բիրտ սրտերին շարունկու։
 Ամօ՞ք ու մո՛ւր,
 Ազատութեան, արդարութեան,
 Եզրայրութեան մեծ խորհրդով
 Դեռ բարբաջող հոգիներին...
 Արդարութիւն եւ իրաւունք
 Պահանջեցինք մե՞նք աշխարհից,
 Բայց աշխարհը սփիւնքսի պէտ
 Պող հայեացքով նայում է մեզ
 Ու կարկամում,
 Կամ՝
 Ծամծում իր երեսը միշտ զարձարմիկ,
 Մտնում քաֆում կշռում, չափում
 Խիզնն ու ոսկինն-
 Եւ պաղ ոսկին շողուն փայլով,
 Չայնով ենչուն,
 Ծանրանում է միշտ վեհաշում
 Ու փառաւոր իջնում, նստում՝
 Աշխարհի նեղ ու չար սրտին-
 Եւ աշխարհը հեզնում է մեզ
 Ու միշտ ծաղրում...
 Բայց մեծութեանը նստում ծաղրը
 Կաթիլ ջուր է արեւի դէմ,
 Կամ բոցավառ գիւղից ցատկած
 Եզած մի կայծ՝ հսկայ ժայռին...
 Օ՛, մեծութեանը նստում ծաղրը
 Ետ կը դառնայ՝
 Շանգայից ապստակելու հենց ծաղրողին՝
 Որպէս պատիժ...
 Այդ ա՛յդպէս է, եւ ճշմարիտ։

12-

Բայց կար մի ցու-
 Օ՛, ցուերից դառնագոյնը-
 Սեւ ցուերին ծնունդ տուող ու սնուցող
 Մի աւերիչ, մի մթին դու,
 Որ առօրեայ քն կեանքի մէջ
 Չես իմանում ի՞նչ չար ձեռքով,
 Ի՞նչպէս բուսու...
 Կարծամարար, ազիտարեր պառակտումի
 Որումն էր այդ,
 Որ չարամիտ մեր քջմամին

Գիշերի մութ շղարշի տակ
 Ոսկեհատիկ մեր բզմերի արտն էր մտել
 Ու շագ տուել ֆեզմից ծածուկ ու անզխտակ...
 Սեւ ցաւերին ծնունդ տաւոզ,
 Պառակտումի գագիր որդն էր ներս սազացել
 Բազմաչարչար քն մարմնի մէջ՝
 Գեղ քամելու, ֆեզ հիւծելու, ֆեզ տամբելու
 Անվե՛րջ, անվերջ...
 Անա՛, անա՛,

Օ՛, նայիրեան մայր, ի՛մ ամուշ,
 Հասած կեանքիս հատումութեան
 Ճերմակ ծիրին՝
 Այս անտար ցաւն է հիմա,
 Որ տանգում է, ինձ չարչարում,
 Սեւ բռնի պէս, տիւ ու գիշեր,
 Ծանր թառած իմ ուսերին,
 Իր անագգու աչքերը բաց,
 Անթարթ, արթուն,
 Հոգուս երկինքն է մթացնում:
 Ես՝ մէկ հիւլէն քն արիւնի բարբ ու կարմիր,
 Ես՝ մէկ շողը քն մեծ սրտի թէժ կրակի,
 Հանգոյցներով ես խնամած
 Մէն մի թե՛լը քն աւելի՛
 Յանրժուրեան ճամբիկ վրայ
 Կանգնել եմ ես, շուար, տրտում
 Ու մտածում.
 Ո՞ւր եմ տանում մեզ ճամբաներն այս հեռակայ,
 Երբ սրբազան միասնութեան
 Ամբողջութիւնը վանանազ
 Երագներն մեր հրփներանգ
 Փետուրներն էլ մեզմից ընկան...
 Գետն իր հունի մէջ է հոգթ,
 Ծառն՝ համերաշխ արմատներով,
 Եւ ծովն էլ միշտ յազթական է
 Ալիքներովն իր միարան:
 Իսկ մե՞նք, իսկ մե՞նք... պատակտ, անբան,
 Իսկ մեմք թափառ ու հաղմածեծ,
 Մեր դէմ՝ ցաւի, դաւի ճամբան...:

Օ՛, նայիրեան մայր, ի՛մ ամուշ,
 Ո՞ւր եմ տանում
 Ճամբաներդ այս պատակտման...
 Դէպի կորո՞ւտ,
 Դէպի սեւ մա՞հ...
 Օ՛, ո՛չ եւ ո՛չ-
 Այդ սեւ օրը պիտի չըզա՛յ:
 Ես իմ կեանքի խարխուլ, փխրում

Ճերմակ ծիրից,
 Ես օհանեան իմ բռների
 Սարսափազդու ելեւէջով,
 Իմ ծով սրախ մեծ շառաշով,
 Իմ հաւատքի պողպատածայմ
 Անեղ կանչով
 Գոռում եմ ու յայտարարում՝
 Այդ չար օրը պիտի չըզա՛յ:

- Օ՛, եղբայրներ՝ բաւ՛ր, բաւ՛ր իմ սիրելի,
 Այս երգիս հետ մտում եմ ձեզ սիրտս, որպէս
 Միրոյ, բողոքի երգ ողբակէզ,
 Տանցանքներին եւ մեղքերին եւ կրօնքին
 Մեր համապագ՛
 Որպէս նոյնպէս...
 Ողբակիցէ՛ սիրտն իմ՝
 Սրտով պայծառացէ՛ք,
 Ողբակիցէ՛ սիրտն իմ՝
 Հագով արիացէ՛ք.
 Եւ տուր ուխտով ու կարծրութեամբ մեր լեռների
 Դա՛ւք, եղբայրներ՝ իմ սիրելի,
 Միտնացէ՛ք, միտնացէ՛ք...
 Օ՛, նոյնպէս իմ, ձեր ոտների տակ արիւմտս,
 Լուսարացի թարմ, ցօղաշաղ
 Միլ ու կանաչն է նարակիլ,
 Ու խմել է անսպական ազրիւրների ջրերից ջիմջ,
 Եւ ստղագարդ լուրք երկնքի
 Տակ է առել հանգիստ ու նիմջ:
 Եւ նոյնպէս այս անարատ է, մեհեմեհան,
 Եւ խարանուած կայծակ հրովն վառագմեան:
 Օ՛, եղբայրներ՝ իմ սիրելի,
 Ողբակիցի իմ բազմից
 Հագար դարեան բոցն է իմում
 Պապեմեական բռնիրների,
 Սուրբ է կրակն այս ծիսական,
 Որ գալիս է անբահուած ու մոխրացած
 Խրճիթներից հայրենակամ:
 Ո՛ւխտ եւ երդում եղբայրական տուրք միութեան,
 Կա՛մք եւ հաւա՛տ յանրժակեան լինելութեան,
 Պայքա՛ր, պայքա՛ր, մինչ յառնումն արդարութեան,
 Պայքա՛ր անվերջ՝ մինչեւ շողուն
 Կատարները յանրժութեան:
 Ահա՛, հասած ես իմ կեանքի ճերմակ ծիրին,
 Այս պատգամն եմ բողոքում հիմա
 Բաւ՛ր, բաւ՛ր իմ սիրելի եղբայրներին: -

Հաւատում ե՛մ,
 Օ՛, նայիրեա՛ն մայր, ի՛մ ամուշ,
 Հաւատում եմ, որ վազ քե՛ւ ուշ
 Պիտի՛ ես գայ խոհեմութեան
 Կապոյտ քոչու՛նը իմաստուն՝
 Լոյս սփռելու
 Քո դժնդակ ու դժուարին մանապարհին.
 Ու համհարեզ, որպէս պայծառ մտքի փարս,
 Կարով ու յոյս ներշնչելու
 Քո սարսղնած գունակներին:
 Պիտի՛ ցնդին՝ հոգիները մեր մթազնազ
 Մշուշն ու մա՛ծ:
 Օ՛, մայր իմ սո՛ւքք, հաւատում ե՛մ,
 Դարձեալ, դարձեալ հաւատում ե՛մ,
 Որ Հայաստան ին աշխարհի
 Կայր մէկ այ՛ճն էլ պիտի բացուի
 Խնդութիւնից մեր յապարհեան,
 Ու երկիրն իմ պայծառ ու ջիւղ
 Ջոյգ աչքերով պիտ՛ ողջունէ՛
 Արեգնաշող իր ապագան:

ԱՐԱՄ ԳԱՌՅԷ



ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ



Հատորով լոյս ընծայած է շուրջ քսան ա-
նուծ դերք, որոնց գլխաւորներն են.— «ԸՅՈԿԻՐ
Շտեմագար», «Սիդոննա», «Սեպույի», «Մադրա-
ճկարներ», «Հայ ազգրոսիք», «Մեք պարտեզէն»,
«Մեք գրախոնք», «Զէնուպարդ», «Մամիոններ»,
«Լուսաբերդ» եւայլն: Մեծ թիւ մը կը ներկա-
յայնեն թերթերու մէջ ջրուած իր գրական գոր-
ծերը: Ունի նոյնպէս անտիպ զործերու պատ-
կանելի քանակ մը:

ԻՆՉԵՐ ՊԻՏԻ ԸՍԷԻՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Ահա թէ ինչե՛ր պիտի ըսէին անա-
սունները, մարդոց մասին, եթէ կարե-
նային խօսիլ...

Ընտանիքի մը սեփական ասանք մէջ
հաստատուած մուկերու խմբապետ մը
պիտի ըսէր.

— Այս բնակարանին տիրոջ մակդերն
է «առիւծ»: Իր տղան կոչուած է «կո-
րիւն», իր աղջիկը՝ «յովազ», մանչուն
կինը՝ «վազը», աղջկան ամուսինը՝
«գայլ», տանտիրուհին ալ՝ «կատու»: Զարմանալի է որ տուե՛ծը, կորիւնը, յո-
վազը, վազըը եւ գայլը կը վախնան

տանտիրուհի կատուէն: Անցեալներն ալ,
տանտիրուհի կատուն գիտ տեսնելով խո-
հանոցին մէջը, լեղապատառ ճչաց ու մա-
րեցաւ ինկաւ: Երբ բոլոր գազաններուն
ստեղծած պատճառող կեսուր-զոքանչ կա-
տուն ինձմէ կը սորապի, ուրեմն տրա-
մարանորէն է/ս եմ կենդանիներուն թա-
գաւորը, որով որոշած եմ շապրիլ ալլեւս
դաշտնորէն ծակերու մէջը, այլ արքայա-
վայել կերպով շրջիլ պալատիս սենեակ-
ներուն ու սրահին, մանաւանդ ճաշասեն-
եակին եւ խոհանոցին մէջը, Դուք ալ կըր-
նաք հետեւիլ ինձի, իբրեւ հաւատարիմ
համհարզներ:

»

Շքեղաշնիկ մը կամ պերճաշնիկ մը պիտի ըտէր .

— Հանդուցեալ պառաւ տիրուհիս, միլիոնատէր Ամերիկուհի Մէրի-Լիդ Սոփիստտէր կէս միլիոն տուար կտակած է ազնուացեղ շունիս, որպէսզի ամէն օր ինծի տրուին մկնիկներ, կողիկներ, ինչպէս նաեւ շաքար ու շոքոլա : Կտակը թէեւ ի նպատակ ինծի է, բայց երբեք ի պատիւ հանդուցեալ տիրուհիս չէ : Այլի տիկին Սոփիստտէր եղած է հրապարականախատ :

•

»

Արջերն ու կապիկները մարդոց չալա-չալա, թուխթ, պովիկնիկ պարելուն մասին, ահա թէ ինչպէս պիտի արտասայտուէին :

— Արջերը պիտի ըտէին .

— Արջը մե՛նք ենք, բայց արջութիւնը մարդիկը կ'ընեն :

Կապիկներն ալ պիտի ըտէին .

— Մարդիկ կապիկութեան մէջ գերազանցած են մեզ : Արդեօք մենք ալ մարդու-կութիւն փորձելով՝ զիրենք գերազանցե՛նք . . .

Արջերը պիտի աւելցնէին .

— Թող անոնք իրենց ուղածին չափ արջանան, բայց մենք պիտի չզիջանինք մարդանալ :

»

Աղուէս մը հառաչելով՝ ընկերոջը պիտի ըտէր .

— Ա՛հ, եթէ հրացան մը ունենայի . . .

Ա՛հ, եթէ առատ փամփուշտ ալ ունենայի . . . Ա՛հ, եթէ հրացանը գործածել գիտնայի . . . Ա՛հ, եթէ որսորդ ըլլայի . . .

Ընկերը պիտի հարցնէր .

— Հաւե՛ր պիտի որսայիր, զարնելով դանոնք . . .

— Օ՛հ, ո՛չ : Զարնուելիք մարդիկ կան . զանոնք մէջտեղէն պիտի վերցնէի :

Ինչո՞ւ համեղուկ ու անմեղուկ հաւերուն զարնէի : Ընդհակառակն, դանոնք պիտի ազատագրէի : Պիտի զարնէի հաւերուն տէրերուն, որոնք կը կեղեքեն, շարաշար կը շահագործեն հաւերը : Այնուհետեւ հաւերը իմս կ'ըլլային, աքլորներն ալ միասին : Եւ ամէն օր կը սարքէի հաւահաւաքոյթներ, հաւահանդէսներ ու հաւահանդէսներ . . .

— Ըսածէդ բան չեմ հասկնար : Թէ՛ հաւերը ազատագրելու, թէ՛ ուտելու խօսք կ'ընես . . .

— Ինչպէս յայտնի է որ տակաւին աղուիսացած չես : Վեհանձնութեան դորձ մը կ'ուզեմ կտարել : Ամէն օր հաւ ուտելով՝ ես պիտի հաւ դառնամ . իսկ հաւերը ինձէ՛ ուտուելով՝ ինծի պիտի խտանուին եւ աղուէս պիտի դառնան : Ահա թէ ի՞նչ վեհանձն գոհողութեամբ կ'ըլլայ ուտելով ազատագրելը, որուն մասնագէտները մարդիկն են :

»

Երկու վագրեր պիտի գրուցէին .

— Պետական անձնաւորութիւններ կը ծրարեն պաշտպանել մեզ՝ զազաններս, ինչպէս նաեւ մեր առհասկան կաշուածները՝ անտառները :

— Զարժանալի է : Պիտի պաշտպանելիք վայրի գազաններս, մեր աւատներով ու անկախութեամբ, ինչպէս կը պաշտպանուին վայրենի եւ կիսավայրենի ժողովուրդները : Մինչդեռ իրենց գերութեան մէջ լքուած են քաղաքակիրթ ու քրիստոնեայ ժողովուրդներ . . .

— Բանիօն բախտաւոր ենք, սք մնացած ենք բարբարոս ու հեթանոս :

»

Կ'ըսուի, թէ հետեւեալ խոսակցութիւնը տեղի ունեցած է երկու նապաստակներու մէջ, ու վերջացած է եղերականօրէն .

— Ես այլեւս քաղաք պիտի երթամ, ապրելու մարդոց մէջ :

- Բայց մարդիկ չեզ կը բռնեն ու կ'ուսեն:

- Ինչպէս կ'երեւի, լուր չունիս, որ վերջացած է այդ դէշ շրջանը: Մարդիկ մտադրած են պահպանել ազնիւ ու հազարապիտ կենդանիները, որպէսզի անոնց ցեղը շահահասանայ: Ես ազնիւ ցեղի մը հազարապիտ մէկ անդամն եմ: Այլ վըտանդ չկայ ինծի համար:

- Բացարձակապէս տխմար ես: Չե՞ս դիտեր որ մարդիկ արարածներ են անուշայ: Չե՞ս դիտեր նաեւ որ մարդիկ անազնիւ բլլալով՝ ազնիւ կենդանիները շատ կը սիրեն, մանաւանդ հազարապիտ տեսակները, այսինքն փոքրամտանու թիւնները:

- Լա՛ւ, ըսածս կը հաստատես: Գ'երթամ սիրուելու մարդոց կողմէ:

- Բայց չե՞ս ալ դիտեր որ մարդոց համար սիրելի կը նշանակէ ուտել: Մարդիկ փոքրամտանութիւնները կ'ուշեն պահել իրենց որկորի թանգարանին մէջ, որ երբեք չի լեցուի:

- Կը ներես որ չեղի անկեղծօրէն ըսեմ՝ թէ յուստեա ու պնդազուլս ես, եւ պատճառը ազնուական ըլլալդ է: Պօռք հասկցիր. կ'ըսեմ, թէ Հիմա, մարդիկ վճռապէս որոշած են զուրգուրանքով պահպանել, անհետանալու վտանգին ենթակայ կենդանիները, մանաւանդ աղնըականները:

Այդ պահուն կը լսուի հրացանի մը կրակոցը... Աւա՛ղ, ազնուական նապտատակը վերաւորուած էր մահացու կերպով: Բարակ մըն ալ կը վազէր նապտատակներուն կողմը:

Վերջին շունչը փչելէ առաջ, հազարապիտ նապտատակը իր ընկերոջ կ'ըսէ.

- Գնա՛ եւ ըսէ իմ ցեղակիցներուս, որ մարդիկ ի՛նչ որ խօսին, թո՛ղ զործադրեն հակառակը:

Միւսը կը պատասխանէ.

- Աւելի կարճ ու կարուկ պիտի ըլլամ ու պիտի ըսեմ - Ազնուներ, մարդոց ո՛չ մէկ խօսքին մի՛ հաստատջ:

Ձ

Ափրիկէի խորքը, երկու կապիկներ սապէս պիտի խօսակցէին.

- Գիտե՞ս ի՛նչ կը փափաքեմ. բռնըւիլ ու տարուիլ Ամերիկա:

- Խենթեցա՞ր: Մի՛ մոռնար որ Ափրիկեցի ես: Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ խտրականութիւն կայ:

- Գիտեմ. բայց ատիկա մեզի համար չէ, մարդոց համար է: Դէ՛մ են միայն սեւամորթներուն, որոնց նախնիքը Ափրիկեցի են: Իրենք այնքան լուսաւոր են դէ՛մքով, որ խուսար դէ՛մքերը կ'ատեն: Մեզի համար բան չկայ. մենք կապիկներս սիրուած ենք անխտիր:

- Բայց մենք սպիտակամորթ չենք, այլ անգոյն ու բազմազոյն ենք:

- Ճիշդ տառը համար ալ ամէնուն դարձած ենք սիրելի, հանելի: Մասամբ սպիտակամորթ, մասամբ սեւամորթ, մասամբ ալ դեղնամորթ ենք: Մեր հակափորով ալ կարմրամորթ ենք: Ամէն զոյնի մարդիկ մեզի համար ունին վառ սէր, որ չի դուռնաիր: Ամէն զոյնի մարդիկ մեզ կը համարեն իրենցմէ:

- Չե՞ս կարծեր որ մարդիկ, ի՛նչ զոյն ալ ունենան, սերած են մեզմէ, ու այդ պատճառով զիրենք մօտ կը զգան մեզի...

- Մարդիկ մենէ՞ սերած են... Տըրմարացա՞ր... Եթէ մենէ սերած ըլլային՝ կը զստնային ցուցանքներ... Մարդիկ նախկին կապիկներ չեն, այլ նոր կապիկներ են: Մեզ ընդօրինակած են յոռի կերպով: Եթէ մենէ սերած ըլլային, զիրար կը ճոտոտէին, փոխանակ զիրար հարուածելու:

- Իրաւունք ունիս:

- Եթէ մենէ սերած ըլլային, մասկեր չէին ըլլար, մրգակեր կը մտային: Եթէ մենէ սերած ըլլային, իրարու հող, ցաւ, տաղտուկ, տառապանք չէին պատճառեր, այլ մեզի պէս կ'ըլլային զթօսանէր ու զուարթ: Եթէ մենէ սերած ըլլային, պիտի փայլէին իբրեւ եղբայրացիք:

խաղաղասէր, զրիստոնեայ, Եթէ մենկ սերած ըլլային, պիտի շունենային ժամանայ:

- Եւ սակայն, կը փափաքիս բռնուիլ մարդու կողմէ ու տարուիլ Ամերիկա...

- Երբ շուները եւ դայիերը կ'օգտուին Ամերիկային, կապիկներս ինչո՞ւ չօգտուինք...

»

Հաւնոցի մը մէջ, հաւ մը իր մէկ ընկերուհիին պիտի ըսէր.

- Մեր մէջ, հաւ ծնողը հաւ կը մընայ, իսկ աջուրն ալ կը մնայ աջուր: Բայց մարդոց մէջ այդպէս չէ: Մարդիկ այնպէս արարածներ են ու կը մեղադրուին, կը կերպարանափոխուին ու նոյնիսկ կը սեռափոխուին: Օրինակէ համար մեր տիրուհին, որ երբ տակաւին նշանածն էր մեր տիրոջ, հլու, հեզ, հնազանդ, հպատակ, հաւատարիմ հաւ մըն էր: Բայց ամուսնութենէն զիչ ետքը՝ աջուրացաւ: Ընդհակառակն, յարգամեծար աջողալ մեր տէրն ալ ամուսնութենէն ետքը՝ հետզհետէ հաւացաւ:

- Մեր տիրուհիին աջուրացած ըլլալը որոշապէս կ'երեւի. բայց մեր տիրոջ հաւանալուն հաւատալ կարելի չէ: Ապացոյց ունի՞ս...

- Անշուշտ: Ամէն անգամ երբ մեր աջուրացեալ տիրուհին կը բարկանայ ու կատաղօրէն զրուակողովուրդ կը կանչէ, մեր հաւացեալ տէրը վախէն հաւկիթ կ'ածէ:

- Եւ ի՞նչ կ'ըլլան մեր տիրոջ անած հաւկիթները...

- Ոչինչ: Ի՞նչի կրնան ծառայել հաւացեալ աջուրի մը անած հաւկիթները, քանի որ Հոտած են:

»

Տան մը կատուն՝ նոյն ասն շունին պիտի ըսէր.

- Մեր տիրուհին՝ ինծի պէս կատու է, իսկ մեր տէրը՝ քեզի պէս շուն է: Անոնք ալ կը կուտին մեզի պէս: Եունը յարձակողականի, իսկ կատուն պաշտպանողականի մէջ է: Կը կարծեմ, թէ մեր տէրն ու տիրուհին՝ մենկ ազդուելով կը կուտին: Մե՛նք ենք պատասխանատուները անոնց պատերազմին:

Եունը պիտի պատասխանէր.

- Նախ՝ ճշդամ մը. անասուն եւ անուն շուներուն յարձակողականները երեւութական են: Գրգռողները կատուներն են: Իսկ կարեւորը ա՛յն է, որ աչքերը եւ կիները մենկ ազդուելով չէ որ կը կուտին: Կոխը կոշտան է կիներուն եւ այրերուն: Անոնք շուն ու կատու են: Ընդհակառակն, մենք է որ անոնցմէ սորված ենք կուտիլը:

»

Խումբ մը մուկեր, Փայրիզի մէջ, նորեկ մուկի մը պիտի հարցնեն.

- Ուրկէ՞ կու գաս, ո՞ւր կ'երթաս...

Նորեկ մուկը պիտի պատասխանէ.

- Կու գամ երկաթէ վարագոյրին ետեւէն, ուր մնացած էի նօթի: Լսելով որ արեւմուտքը առատութեան մէջ է՝ կրօնցի երկաթէ վարագոյրը, ծակեցի Պերլինի պատը ու անցայ Արեւմտեան Գերմանիա, ուր դիբացայ: Տեղեկանելով որ քանի արեւմուտք երթամ՝ պիտի ապրիմ լաւ աւելի, եկայ Յրանտա, ուր զբահուեցայ եւ զօրացայ: Գիտցայ որ քանի սովետական զբախտէն հեռանամ, այնքան աւելի պիտի մտնեմ զբախտի մէջ: Հիմա, աւելի արեւմուտք պիտի ընթանամ, ուր պիտի պարարտանամ պերճութեան մէջ: Ետեկառջի մը վաղոնը մտնելով՝ պիտի հասնիմ Հաւլը ու հոն շողենաւ նստելով՝ պիտի ուղղուիմ դէպի Ամերիկա: Մուկերու համար ո՛չ փաստոր կայ, ո՛չ սոմսակ, ո՛չ վիզա, ո՛չ ալ քար: Նիւ Եորքը աստե՛ն մը վախելիէ ետքը, պիտի երթամ տեւի արեւմուտք, դէպի Քալիֆորնիա: Անկէ ալ ծովու ճամբով պիտի շարունակեմ ուղե-

ւորութիւնս, ամբիւս գէպի արեւմուտքն
նշանաբանով:

Մուկերը պիտի պոռան.

- Հոն կեցիր, յիմար, ապա թէ ոչ՝
կ'երթաս Չինաստան, ուր պիտի գանեն
սեւազոյն կեանքը կարմիր փորձանք,
զեղին վտանգ:

- Միթէ մարդու նման անխելք եմ:
Մտադրած եմ հաստատուիլ կղզեխումբը
Հովաքեան, հեշտաքաղաք, հարսնետուն
Հնոյուլու, իբրևս ամէնօրեայ փեսայ
փիլիսոփայ:



Պայլ մը պիտի ըտէր ուրիշ զայլի մը.
- Օրերով շան նման հաղեցիր. հի-
մակ ալ ոչխարի պէս կը մայրես: Ի՞նչ է
պատճառը...

Մայրը զայլը պիտի պատասխանէր.
- Իւրաքանչիւր արարած իր մայրե-
նի լեզուէն գատ, գիտնալու է իր թշնա-
միին ու քարեկամին լեզուները:
- Իսկ մարդոց լեզուն պիտի չտը-
վի՞ս...

- Մարդոց իտածը լեզու չէ որ...
Անէն մէկ մարդ ունի իր բարբառը...
Ահա թէ ինչո՞ւ իրար չեն հասկնար նոր
Բարեկարգները:



Կապիկը իր ձագերուն պիտի ըտէր.
- Մինք մարդոց նայելով՝ պէտք է
կարտասանանք: Մարդիկն ալ մեզի նա-
յելով՝ թո՛ղ համեստանան:



Օձը պիտի դառնարանէր.
- Առաջին անգամ գործ ունեցայ
կնոջ մը հետ: Անկէ ի վեր, գործ ունիմ
այրերուն հետ:



Կոկորդիլոսը իր ձագերուն պիտի
ճառէր.

- Մարդիկ ցեղապան են: Մեր թան-
կազին մորթին համար անդադար կը
սպաննեն մեզ, մեր ցեղը ոչնչացնելով:
Կան նաեւ մարդիկ, որոնք հակառակ են
ցեղասպաններուն. անոնք չեն ուզեր որ
ոչնչանայ մեր ցեղը, այլ ընդհակառակն
ածի, որպէսզի մեր շահերը մորթերը
ըլլան անսպառ: Անոնք ալ հակացեղա-
սպան ցեղասպաններ են:



Աքաղաղը պիտի աքորարանէր.
- Մարդ արարածը կ'ուզէ աքլորա-
նալ. մինչդեռ հետզհետէ կը կործանէ
իր անուանական աքլորութիւնն ալ:
Մարդ արարածը հակառակ իր մտային,
մարմնական ու նիւթական ուժերուն՝
անկարող եղած է ըլլալ բացարձակ աք-
լոր: Մարդոց ամէնէն զօրաւորները կը
թուլան հաւու մը հանդէպ: Գուժը մը
հաւ հնարանդեցնելը կոչումն է միայն
իրական աքլորի: Հաւու խելք ունեցող-
ները հպատակեցնելու համար, անհնա-
լու է հանճար ու հեղինակութիւն աքա-
ղաղի:



Պահապան շուն մը պիտի շնարանէր.
- Մարդ արարածը իր արտայայտու-
թիւններով՝ հակաութիւններու հաւա-
քածոյ է: Մարդը մարդ մը նախատելու
համար կ'ըտէ՝ - ճե՛ր՛անը, շնացողը... »:
Նոյն մարդը մարդ մը ներբողելու հա-
մար ալ կ'ըտէ՝ - ճե՛ր՛անը զի վարպետ
է, մէկ հատիկ է ու անմրցելի... »:



Մուկը պիտի մեխախտէր.
- Եթէ վախկոտ եմ, կնոջմէ մը ա-
ւելի չեմ: Եթէ վատ եմ, այր մարդէ մը
աւելի չեմ: Եթէ վնասարար եմ, կատուէ
մը աւելի չեմ: Եւ սակայն, չեմ սիրուած
ո՛ւլ այրերէն, ո՛ւլ կիներէն, ո՛ւլ կատու-
ներէն: Ուրեմն պարսպ խօսք է, երբ

կ'ըսեն, թէ նմանը իր նմանը կը սիրէ: Նմանը իր նմանը մեռցնել կ'ուզէ, որ-պէսզի ինք մնայ անմահ:

Ճ

Տան մը արու շնիկը պիտի խօսի իւրօրի:

- Բիւր փա՛ռք բարտին, որ զիս ստեղծած է արու եւ ազնուացեղ շնիկ: Գեղանի տիրուհիս ունի ամուսին մը (երբորդը), ունի սիրահար մը (ութե-րորդը) եւ զիս: Իր ամուսինները միշտ տանջած է, իր սիրահարները միշտ առնուցուցած է, բայց ինձի հանդէպ միշտ սկաւր է ու տարփատենչ: Իր ամուսիններուն հարկահանը եղած է, իր սիրահարներուն՝ հարստահարէլը, սակայն ինձի հանդէպ համակ համբոյր է: Իր ամուսինները շփոթեցուցած է, իր սիրահարները շլացուցած է, մինչդեռ զիս շփացուցած է: Ձի՛ս է որ կը գրկէ ու կը դգուէ գուրգուրանքով: Իր հարս-դաս դուստրը ե՛ս եմ, իր յարալէզ սիրա-հարը դարձեալ ե՛ս եմ: Այս աշխարհի մէջ, շուն ծնելու է եղբր, ու ես այդպէս ծնած եմ:

Ճ

Ազոսաւր ուրիշ ազոսաւր մը հետ պիտի զրուցէր:

- Մարդիկ մեծաքայլ կը յառաջդի-մեն դէպի քաղաքակրթութիւն:

- Ոստէ՛ փաստերով:

- Օղանաւեր, տիեզերանաւեր, լուսին ուղեւորուելու պատրաստութիւններ...:

- Ատոնք սատանայական սիրազոր-ծուծիւններ են, որոնք պիտի յանգին բարձրագոյն բարբարոսութեան: Մարդը քաղաքակրթուած անուանէ՝ երբ ա՛յլ չի մեռցնիր իր նմանը: Եւ երբ մարդիկ քաղաքակրթուին, մենք ազոսուներս կը սատկինք սովածաւ: Եւ սակայն, փա՛ռք նոր բուսերուն, ոչ մէկ պատճառ ունինք զանախու յոստես:

Ճ

Երեք թռչուններ ինչե՛ր պիտի ըսէին Հայերուն...

Բիրուրը պիտի ըսէր.

- Սոխակներուս կովկասեան կայսր բիրուրը, Սայեաթ Նովաս, այս յաւիտեանս կուսակալ քնարակիրը, մեր պապերէն մէկուն ըսած է.

- Վիւս մի՛ լաց լի, ես եմ լալու...:

- Պահեցինք պատուէրը բուրբ բըլբուլներս ու զազրեցանք դայլալներով լալէ, թող տալով որ ինքը լայ, նման ասպետի: Իր լացը եղաւ տարափ աղի, խաղ խարոյկի, անմահական, չքեղ շատրուան հրեղէն գոհարեղէնի: Թէեւ իր լացը՝ մեր լալու փափաքը սաստկացուց, բայց չլացինք, որ ինքը լայ ու պայծառանայ: Իր արցունքները դարձան մարդրիաներ: Հի՛մա, երբ ան ալիւս հողի է օրհնեալ ու սիրեցեալ, որով ուրախ եւ երանելի, մենք կ'ուզենք վերըստանալ լալու իրաւունքը: Հայեր, դուք որ ազգակիցներն էք հանճարեղ Սայեաթ Նովայի, տուէ՛ք մեզի լալու արտօնութիւնը: Ձեր թագաւորները կորնցնելէ ետքը, ունեցաք թագաւորներ երգի, ունեցաք աշխարհակալ արքայ մըն ալ երգի, Սայեաթ Նովան, հազարան բիրուրը կովկասի: Եւ եթէ դուք լալու պատճառներ ունիք, բայց պիտինք որ դուք մեր լացը ծիծաղ էք արել: Գիտենք նաեւ որ լացը ամբողջութեամբ կարելի չէ վերածել ծիծաղի: Եթէ նոյնիսկ, օր մը, աշխարհէն չքանան բազմաթիւ պատճառներ լացի, դարձեալ պիտի մնան անթիւ պատճառներ, մինչև կատարած աշխարհի: Մեր արցունքները լեցուած են ու կ'ուզենք թափել դայլալներով: Դուք շատ էք լացած, թողուցէք որ մենք լանք նորէն: Մենք, ընդհակառակն, կ'ուզենք մեր ծիծաղը լաց ընել, այս քեաֆուք աշխարհին մէջ: Հայեր, բիրուլներս հազարամայն գեղզեղանքով պիտի մաղթե-վենք որ շօտարանաք: Գիտնաք հաւատալով ու համբերելով սովալ: Ա՛հ, վայրենիներն անգամ հայրենիքով կ'ուտ-

ցան, դուք Հոյսաստանից սով մնացիք: Ի՞նչպէս շտապաստեալ ժպտելով ու ի՞նչպէս շիճաղիւ լալով այս անարդարութեան համար, որ աւելի մեծ է, քան երկրագունդը: Ինչքան ալ լանջ ու ծիծաղենք, էլի կարօտ ենք ծիծաղի ու լացի:

❖

Ծիծեռնակը պիտի ըսէր.

— Այս քանի տասնեակ տարի է, որ Հայերը կ'երգէք Գոգոսեանցի Վերջ Պանդուխտ Պատանեկի՝ կոշուղ ստանաւոր յիմարաբանութիւնը, զայն վերածած ազգային նուիրական տաղի: Գոգոսեանցը մեր նախնիքներէն մէկունը ըսած է.

— «Ա՛յս, քըռիք, ծիծեռնակ,
Մընած սեզըս Աշտարակ,
Անդ շիճիք քո բայմը,
Հայրենի կառուրի տոնդ»:

Հայր, որ համբաւ ունի շինելու եւ շէնցնելու, փոխանակ ինքը վերադառնալու եւ շէնցնելու հայրենի հիւղակը, ծիծեռնակին կը յանձնարարէ այնտեղ բոյն շինել: Եւ ամէնը այսքան չէ: Տեսէ՛ք, տեսէ՛ք, թէ տակուին ինչե՛ք ու ինչե՛ք կը յանձնարարէ ծիծեռնակին.

— «Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն
Ապաստւմ է օրէ օր»:

Երբ տեսնես դու մորս,
Ինձնից շատ բարեւ արտ,
Ասա՛ քոզ մտաի լայ,
Խր անբախտ որդու վրայ:

Դու պատմէ թէ ինչպէս
Աստ անտէր ու խնդն եմ ես,
Միշտ լալով ոգրալով՝
Կեսնքս մաշուել, եղիլ է կէս»:

Գոգոսեանցը կծծի՞ էր, թէ անկուտի, որ հօրը նամակ չէր գրեր եւ կը փափաքէր յիմարօրէն, որ այդ բոլոր անտեղի, նոյնիսկ ծիծաղելի ողբ ու կոծը, ծիծեռնակը երթայ ու անխղճօրէն հազորդէ իր ծերունի հօրը, որ արդէն սըզաւոր է ու վշտահար, իր խաթուածիկ կիներ կորսնցուցած ըլլալով: Կ'ուզէր որ հէք հայրիկը տեղն ու տեղը ըլլայ յանկարծամահ: Եւ ապա, դուռ դրացի պիտի հարցնէին. — «Ո՞վ, ո՞վ, էն ո՞ր հարմադար հրէշը մահացուց, էս բարի ծերունի...»: Գիտցողները պիտի պատահանէին. — «Ծիծեռնակը, անխնայ ծիծեռնակը, ծծմբածին ծիծեռնակը»: Ու ամէնքը պիտի եզրվէին՝ ըսելով. — «Մուղակն իշխայ, ու ծուխ ծրտէ, ծուրիկ ծուրիկ, ծակ-ծակ ըլլայ ծիծեռնակը, որ վատ լուրեր տալով՝ անդանակ մորթեց ծերունի հայրիկին...»:

Ըսէ՛ք, տղամարդ եզրղը կը փափաքի՞ որ իր գծրախտութիւնը դիտնայ իր ցաւատանջ հայրիկը: Եթէ մենք ծիծեռնակներս ունենայինք լիզու, այն օրերուն, պիտի ըսէինք պանդուխտ պատանիներուն.

— Տօ՛ւ լակտներ, եթէ ուսանող էք, աշխատեցէք ու յաջողութեամբ լրացուցէք ձեր ուսումը եւ վերադարձէք, որախացնելու համար ձեր ծնողքը: Իսկ եթէ գործի մէջ էք, փող վաստկած վերադարձէք ձեր հօր մօտ, իրրեւ դաւակ բարի: Տղամարդոց կը վայլէ՞ այդ կանացի կականը, ողբ ու կոծը: Սա ի՞նչ հայկական լակտութիւն է: Եւ ի վերջոյ, մենք ծիծեռնակներս զարնան աւետարերնե՛րն ենք, թէ դուժկան սուբհանդակներ: Փա՛ռք Տիրոջ, հարազատ Հայերը նման են ծիծեռնակի: Բոյն կը շինեն, բոյն կը շէնցնեն: Իսկ լակտն Հայրը մեզի դիմելու փոխարէն, թո՛ղ դիմեն բուր մը՝ երգելով.

— Բըւիմակ, բըւիմակ,
Վատից վատ է իմ վիճակ...
Հօրս ասա՛ որ ինձ գրկի
Կա՛մ փող կամ տարձանակ:

❖

Կոունկը պիտի ըսէր .
- Է՛յ պանդուխտ Հայեր, էս քոնի դար է, որ դուք արտասանելով ու արտասուելով, նրզելով ու սիրտ վէրքելով եւ նուազելով ու օտարութեան մէջ նաւարկելով՝ կոունկիս Հարց էք տալիս Հառաչելով .

- «Կոունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս...»

Ախր, շունենամ կը լինի՞... Իմ շունեցածը լեզու էր, Բայց Հիմի լեզու էլ ունեմ, խապրիկներ էլ ունեմ, Եւ լաւերը, Եւ վատերը, Եթէ միայն լաւերը ասեմ, Հոսոտութիւն կը լինի: Եթէ միայն վատերը ասեմ, Հոսոտութիւն կը լինի: Իսկ եթէ Եւ լաւերը, Եւ վատերը ասեմ, կարող էք ինձ անուանել «Հայրենիքի թշնամի»: Ձեզ մի բան ասե՞մ. ս'չ դուք ինձ Հարցրէք, ոչ էլ ես ձեզ պատասխանեմ: Իսկ եթէ Հայկական յամառութիւնով էլի Հարց տաք, ասելով— «Կոունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս...»: Ես էլ ձեզ կը պատասխանեմ— «Հայեր, մեր աշխարհէն սեւ խաւար ունիմ...»: ու կ'աւելացընեմ— «Արեւադոյն կոնեակ էլ ունեմ, Բոսամ էլ ունեմ, մուշտակ էլ ունեմ... Իսկ դուք, արտասահմանեան սիրահար-

ներ Հայրենիքի, ի հարկ է պատրաստած ունիք՝ մեր կաշիին պէս փայլուն օղկի, սովետական դրօշի պէս կարծիք ներկ լրթունքի, ցամաքային ձուկերու Համար ուռկան կամ ուղի որոգայթ՝ նայլըն գուլպայ եւ նաւակի պէս ալ կօշիկ...» Է՛յ Հայաստանի Ռոմէոյներ ու Փոլիթթիաներ, գուք լաւ էք իմանում որ Հիմի Հայրենասիրութիւնը առասպել ու արկածախնդրութիւն լինելուց դազարել եւ դարձել է դո՛րձ, գիտութիւն, ղի՛ւտ, տակաւին փոխանակութիւն, փոխադրութիւն, փոփոխութիւն: Եւ զարգանում է ու դառնալու է խոշոր ինդուստրիա, որի վարպետ իմփիներ-տնօնողներէց կը լինէք դուք:

❖

Անասուններուն լեզու ելլելը, լեզու Հանելը եթէ անխորժութիւն է որոշ մարդոց Համար, միւս կողմէ գիտնալու է որ այդ մարդիկը մասնագէտ են որեւէ ձեռով բերան փակելու դօրծին մէջ:

Բերան գոցելու գլխաւոր կերպերը Հետեւեալներն են՝ առաջին— Բաց բերնին մէջ նետել ուտելիք: Երկրորդ— Բաց բերանը թողուլ անօթի: Երրորդ— Պայթիւնով մը լռեցնել: Եւ այլն:

Վիվամպլը

Ն. Պ.





*Լոյս ընծայած է լափածոյ եւ արձակ բա-
նաստեղծութիւններու Հինգ Հատորը...*

*«Արեւի եւ մահուան երգեր», «Առտուածնե-
րու վերջալոյսը», «Սոնետներ», «Քերթուած-
ներ» եւ «Եղիպտակահէ»:*

*Գրած է նաեւ Փրանսերէն լեզուով:
Կտարած է թարգմանիչ Թարգմանութիւն-
ներ:*

ԲՆԵՂԱՊԱՀԸ

Կը պահպանեմ վերը՝ լերան կտուարին
Բերդն անտիկ իմ պապերու վեհաշունչ-
Ամբուտին մէջ եւ առանձին, անտրտուեց՝
Ահեղ մէկու մը կը սպասեմ հոգեւին:

Ան պիտի գայ բաժնել ազ ու հացին հետ
Սուրբ կայտարդանքն երազներու հայրենի-
Հիւսել նարագ ոսկեհամուկ ծիրանի
Պարուրելու համար անցեալն արփաւէտ:

Ան պիտի՝ ըլլայ երիտասարդ, գեղադէմ,
Պիտ՝ ունենայ ազեղ մը պիլակ, լայնային՝
Նոր փառեքու, յաղթանակի ստեղծիչ:

Վերելին անոր եւ անհավեր կը դիտեմ,
Լսելով մութ ապառաժին այս վերել
Արծիւներու քեւարայտումն արփաքել...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՅ

ԲԻՒՋԱԼԴ ԿՈՍԱՆԵԱՆ

Հոյս ընծայած է արձակ բանաստեղծու-
թեան երկու հատորներ՝ «Պետմէլը մերմ է հիմա»
և «Լինճքուփիւմ սրբազան», Վերջերս հրատար-
արակ հլու իր երկարալուսն վէպը՝ «Հայկական
կառուկերգութիւն» անունով:

«Հայրենիք» ամսագրին մէջ երկուցած են
իր երկու Բասերգութիւնները, Ունի Թերթերու
մէջ ցրուած բազմաթիւ գրութիւններ:



ՀՐԱՇԻ ՄԸ ՊԱՏԱՀԱԾ Է ԻՆՏԻ...

Մայիսի օր մը, 1966 թուին, նստայ
Մորէլլա փողոցի թիւ 5811 տան առջեւ:
Աշխատանքէն յոգնած էի և ճակուէս կը
հոսէր քրտինքը: Այդ օր կեանքիս ամէ-
նէն յատկանշական և երջանիկ օրերէն
մին էր: Կը յիշեմ նման երանութիւն մը
տարիներ առաջ, 1950-ի Սեկտեմբերի
20-ին, Աղիքսանդրիա, Եգիպտոս: Յան-
կարծ արթնցած էի, դեռ մութ էր. ան-
սահման երանութիւն մը ողողած էր
էութիւնս: Նախորդ օր ծնած էր գա-
ւազս: Տեւականութեան զգացում մը վա-
րկած էր զիս:

Մորէլլա փողոցի 5811 թիւ տան առ-
ջեւ նստած եմ հիմա: Նման – և ստոր-
քեր – երջանկութիւն մը կը յորդի մէջս:
Ծառերը, մարդը, վարդազոյն երդիքներ
և անոնց ետին հրկինքը, սովորական,
ամէնօրեայ ըլլալէ զապրած՝ խորունկ
կախարդանք մը ստացած են: Անկենդան
իրերուն իմաստ մը թափանցեր է: Հըս-
կայական արեւը խտացեր, եկեր լեցուեր
է ծաղիկէ մը ձազարին մէջ:

Եգիպտական կրօնիթեայ աստուածի
մը նման նստեր եմ և ոտքերս ամուր նե-
տեր հողին: Ուժեղ դժուած չրթներուս

մէջ բռնած խորհուրդ մը: Հրաշք մը պատահած է ինծի: Ինծի, Բիւզանդ Կոստանին, բուն անունով՝ Բիւզանդ Չէրեհանն, որդի Յովհաննէսի եւ Եփրուհիի:

Ներէ Հայր, որ անունդ Հայացուցի կրկին: Դարերու նուատացուցիչ պարտադրանքը նետեցի վրայէս: Լեռաւոր ժամանակը երբ նախահայրերս ստիպւեցան լքել իրենց Հայրենի հողը եւ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր թափառելով, եկան վերջապէս Հաստատուեցան Կիլիկիոյ Այնթապ քաղաքը, անկասկած որ մեր տոհմանունը հայկական էր: Անապատութիւնը, պայմանները, բռնութիւնը ստիպեցին, որ կորսնցնէք մեր լեզուն, փոխենք մեր անունը, տարազը, կենցաղը... Միայն մեր հողին եւ անձը կրցանք փրկել: Հոն չէր կրնար հասնիլ բունակալին իշխանութիւնը: Եւ ահա, դարեր ետք, ուրախ լնալ Հայր իմ, որ աւուելոջ Հայացուցի:

Երբ մէկ տարու էի, Հայրս Քաղաքացու Այնթապի Մայրս Քաղեցինք Աղեքսանդրիա, Եգիպտոս: Գոյրերս, եղբայրս Քաղուած են տեղ մը աշխարհի վրայ: Մնացելը Եգիպտոս են: Մա, կրտսերը այս բազմանդամ ընտանիքին, նստած եմ Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա նահանգի Հոլիվուտ քաղաքը, թիւ 6811 Մորէլլա փողոցի վրայ, Մայիս 22, 1966: Հրաշք մը պատահած է ինծի...

Մեծ եղբայրս երկու անգամ փախած է Տէր Զօրէն: Մեր քաղաքը զէն ի ձեռին կրուեցաւ թուրքին ղէմ, Զանաց պաշտպանել իր տունն ու հողը: Իմ ծնընդավայրս, Հայրերուս ծննդավայրը: Եւ թողնելով մեր տուները, ինչքերը, այգիները, եկեղեցին զմբէթաւոր, դպրոցները, ուր՝ Քրքախոս մանուկ՝ սկսայ սորվիլ մեր լեզուին կրակէ տառերը: Թողնելով յիշատակը, սէրը, ապրելու հաճոյքը: Եւ մեր մեռելները, արցունքը աչքերուն՝ մեկնեցանք...

Կինս սուրճը կը բերէ սատափէ ափսէի վրայ: Սուրճ խմելը մեր մեծ հաճոյքն է: Առաւօտեան մեր առաջին ծէսը: Պահն է, երբ այր ու կին կը խօսինք խոր

ու քաղցր բաներու մասին: Սուրճը մեր տերմութեան ու բարեկամութեան կը տանի: Ափսէն Եգիպտոսէն է, ուր անցուցի կեանքիս մեծ մասը: Ուր ծնան կինս ու աղջիկս: Փայտեայ ափսէն նկարագրողուած է արապեանքերով: Իրարու պլլուած ու ոլորուող զձեք ու ձեւեր, որոնք երբեք չեն բաժնուիր եւ երբեք չեն միանար: Յաւանական հոլովոյթի մը մէջ: Արեւելեան Հեքիաթի սիրահարներուն նման: Զակատարապալա, բոժանտիք եւ ողբերգական: Մահը Հիմնական թեման է. սէրն իսկ կը պարտուի:

Պորուկ այս Արեւելքը կը սիրեմ:

Սուրճի բաժանիկները վեներիկեան են: Մութ վարդապոյն, ոսկի, ճերմակ խորքի վրայ: Ս. Մարկոսը, Կոնստանտին Եւ ծովի կտոր մը: Ձայն գնեցի Ռիալթոյի կամուրջին ժօս, անցեալ Հոկտեմբերին: Բաժանիկը կը յիշեցնէ կախարդական քաղաքը:

Սուրճի քաղցրախոս լեզին ծծելով, կը դիմոյնամ կեանքով: Կինս երջանիկ է. այն՝ որուն կը բողբոջ ամբողջ ժամանակը, իրականացած է ահա... Այնթապէն Հալէպ, Համա, ուր մնացինք երեք տարի: Դեռ Քրքախոս էի. կը յաճախէի տեղական վարժարան: Եարթը մէկ անգամ, Հայ քահանան մեզի Հայերէն կը սորվեցնէր: Ի վերջոյ, Միլիերկականի Զուրբուռն վրայէն, Հասանք Մեծն Աղեքսանդրին քաղաքը: Տարի մը ետք՝ Յունաստան: Եւ Եգիպտոս:

Հայոց պատմութիւն:

Աղեքսանդրիոյ Աղզային Պողոսեան վարժարանին մէջ է, որ ծանօթացայ Նիկոլ Աղբալեանին եւ Լեւոն Շանթին: Ոչ սք վրաս այնքան ազդած է, որքան Աղբալեանը: Հով մը ունէր. ստանց խօսելու իսկ, իր անձէն ոգեկանութիւն մը կը ծաւալէր...

Նպատակն պատմութիւն ընել չէ: Ինչ որ ըսի, կապ ունի այսօրուայ թեմայիս հետ: Մարդ էակը ժամանակի, միջոցի եւ անոնց մէջ շարժող դէպքերու կորեղ մըն է: Դէպքի մը, պահի մը մեկուսացումն ու կայունացումը վերացական են: Կեանքը միշտ կը հարի ու լինե-

լուծեան մէջ է: Եւ որովհետեւ անհնար է ամբողջը սեւեռել, արուեստը կը յաջողի պահելու միայն յաղթել, զանոնք կայունացնել միջոցին ու ժամանակին մէջ, անոնց խորը խտացնելով խորհրդանշիչ կեանքի բովանդակ հրաշքին: Ի վերջոյ մեր ձգտումը յարսեան ապրիլն է: Մնայ, երբ այլեւս հոս պիտի չըլլանք: Հողին, հովիտուն, վազող ջուրերուն մէջ: Մազաղաթի վրայ կամ մարմարի մտքերու ու հողիներու մէջ: Հասնիլ մարդերու ապագային: Կեանքի մեր զինուորները եւ պատգամը հասցնել անոնց: Ձմեռնիլ, անա մեր վախը: Ձկորսնցնել այս տաք ու քաղցր կեանքը, որովհետեւ հզօրագոյն գինովութիւնը, ապրելու գինովութիւնն է...:

Տեղ մը դրած եմ. ես գրուելու տողանգ ունիմ: Միշտ նիւթէն կը շեղիմ, կը զարմանամ գրողներու, որ նախօրոք ծրարիք կը մշակեն ու կը հետեւին անոր: Կը զարմանամ, Երանի իրենց: Ես չեմ ալ գիտեր, թէ նիւթը ինչ է: Ինձի համար գերագոյն, եւ միակ, թեման կեանքն է: Ձեմ կրնար նախօրոք գուշակել, թէ ե՛րբ, ի՛նչպէս պիտի գրամ ու արտայայտուիմ...:

Մայիսի այս պատմական օրը, նստած եմ Մորէլիս փողոցի 5811 թիւ տան առջեւ: Երբ Վեհապետի հրաշքը կը կատարուի: Անկենդան ու կենդանի աշխարհը կը ծնի, կը մեռնի, ու կը վերածնի: Ոչինչ արտասովոր, ոչ մէկ հրաշք:

Ամէն ինչ է:

Միայն ես է, որ զինովցած եմ, արքայօրէն վեհացած: Տասնեակ տարիներ թափառելէ, հայածուելէ, զրկուելէ, անկայուն ու անապահով գոյութիւն մը ապրելէ ետք, ես, Հայ Բիւզանդ Կոստեան, այս նստած հողիս եւ վրաս տարածուող երգիքին ու ծինելոյցին, Մորէլիս փողոցի թիւ 5811 տան տէրն եմ: Իմս է այս կտոր մը հողը, լայն աշխարհի վրայ: Վերջապէս, կրնամ արժատներս նետել հողին մէջ եւ ուռճանալ, ընդլայնիլ, գալարուիլ զէպի արեւը:

Ես, Հայ մը աշխարհի վրայ, թիչ մը հող ունիմ վերջապէս. իմ սեփական հողս: Ու հեղինակած բան մը կայ, զառն մինչեւ իսկ: Այնուամենայնիւ, արբեցած եմ կեանքով, հպարտ եմ մարդեղութեամբս: Միայն եղբայր Հայ մը պիտի հասկնայ դիմ...:

Բ. Ն.

Լոս Անճելլոս, Գալիֆորնիա



Գ Ի Շ Ե Ր Ա Պ Ա Հ Ը

Մայր տուաւ անսանձ, մաեաստուեր նախանձ,
Երբ գիշերասպառ եղայ աչքերուդ
Ու անոնց մթին խորշերուն պահուած
Անտակ գանձերուն կապեցի խորհուրդ:

Կարօտիդ ժայռին վրայ ես արթուն՝
Կը տախնամ անվերջ դարձիդ կարօտով
Ու ամէն գիշեր կը սպասեմ նաւուն,
Զուր սպասումի անձկութեան վշտով:

••

Անորշութեան այս խաւարին մէջ,
Ան կը հարնատօ, կու տայ ջերմութիւն,
Կարերու խորէն ժայթֆոզ կրակով.
Կայծերէն որուն նետած եմ կամարջ,
Որպէս յարդգողի Աննատնում համբայ՝
հրաշքիդ ներկայ Հասնելու տենդով:

Գերոզ աչքերու ծովերէն որքա՞ն
Զատեցի քարեր – Սրտագին նուէր
մանեակին համար վզիդ մեղրամած,
Սակայն դուն անվերջ մնացիր անբռն
Ու անհրաւէր՝ Յուսպումի խարոյկին
նետուող Օրերուս դիմաց:

Քիչ է նուէրն այս, մտածես գուցէ.
Այ անկէ անդին՝ Մահն է վաղածամ.
չինար հասակիդ Մատա՛ղ ես ըլլամ.
Քեզմէ գատ արդեօք, ո՞ր մէկ աշխարհի
Հեքիաթ գեղուհին կանչել գիս կրնայ,
որ իր համբոյրին... «Հոգիս հանեմ տամ»:

(«Լսէ Երեւան» շարքէն)

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Նորայր Պարթևեան (Տոգթ. Մելքոն էպի-
թիզաթիսն) գրել սկսած է 1945-ին, ստորագրած
է նախ թշնական յաշուածներ եւ ապա՝ թշնա-
լան կեանքէ անուած դրական էջեր:
1952-էն ի վեր սկսած է «Բապիճի» մէջ
Լրեւնայ զուտ դրական կտորներով:

ԳՐԱԿԱՆ ՋՐՈՅՑ

ՍԵՂԱՆ

.

Հիւլէներու
Հիւսկէներու
Գեղձերու ընդերքէն
Միւրած ծղրիթներ
Յայտ առ ցայտ կը փսիեն
Ժահրը մուլեխիւղ բտներուն

Օ կոյր անկումը
Արծիւներուն փեարաթափ
Անհորիզոն բարձունքներէն
Բորբոս իզութիւնը
Անձաններուն
Պիտի դայ
Փլատակներու ծէսէն վլրաւոր
Յղփացած գազաններու երախէն
Պիտի
Գայ

Օ առկայծումը
 Անգայա միրաժներու
 Քնատ յաւերժին
 Պիտի զայ
 Հերթաթափ արմատներու աւերչէն
 Պատուած յոյզերու արիւնչէն
 Օրերու ճգնուած ժանիքէն
 Ժանտ առատակը
 Պարզուած բուռերուն
 Ներսերու
 Խորունկէն



ՆԱԽԱԳԱՀԸ --

Սիրելի գրասերներ, դուք լսեցիք երիտասարդ գրագէտ Ա. Տապան-եանի «Անդամ» գործէն հատուածներ: Մեր այսօրուայ գեղարվեստի միւթը բնարկումն է այդ քանատեղծութեան: Խօսքը գեղարվեստինն է:

Զեկո՞ւմս ԱՐԵՐԸ --

Բուն նիւթին անցնել տաօք, կ'ուզեմ շեշտել որ Տապանեանի «Ան-դամը», այնքան այժմէական իր բեմաներով, քառային պաշարով, կառոյց-ով եւ պատկերներով, չէ կրցած ամբողջովին ձերբագատուիլ դասական ազդեցութիւններէ: Սակայն սխալ պիտի ըլլար Տապանեանը գտնել իր սե-րունդէն, այսինքն երիտասարդ գրողներու ընդհանուր հոռոմէնէն: Խնաս-տային պարունակութեան կամխորոշ եւ տրամաբանական զարգացումը, քերականական հինգած ձեւերու կիրարկումը, քիչ մը շատ պայմանագրա-կան երաժշտականութիւնը...

- «Անդամէն» դուն բան մը հասկցա՞ր:
- Ո՛չ, ո՛չ այն իմաստով որ հիները կ'ընդունին: Ինչո՞ւ, կարելո՞ր է բան մը հասկնալը:
- Ինչպէ՞ս թէ կարելոր է, անշո՛ւշտ թէ կարելոր է: Բանաստեղծու-թիւն կարդան, ես ալ մտիկ ընեմ եւ չհասկնա՞մ: Ի՞նչ ըսել կ'ուզես:
- Յետոյ, ո՞վ ըսաւ որ գրուածքը՝ այսպէս ըսուած՝ իմաստ մը ունի, այսինքն թափանցիկ իմաստ մը, որ անպատճառ պիտի հասնի ըն-թերցողին: Ինչու, տեղեկագի՞ր է՝ թէ լրագրական հաղորդագրութիւն...:

ՆԱԽԱԳԱՀԸ --

Կազմակի խօսակցութիւնները արգիլուած են: Զեկուցարարէն ետք խօսք կու տամ, կրնաք ազատօրէն արտայայտուիլ:

- Եթէ լսել կ'ուզես թէ գրուածքը իմաստ չունի, համաձայն եմ, թէ եւ քաջութիւնը չունի՞մ բարձրաձայն յայտարարելու...:
- Հեղինակը մէկ կողմ: Բանաստեղծը խոսովք մը կ'ապրի եւ այդ

խոսված կ'արտայայտէ բառերով: Եթէ զգայնութենէն քեզի բան մը փոխանցեց՝ արդէն գործը փրկուած է:

- Հօրաքորոս ալ փրկուած է:

- Ի՞նչ:

- Շարաթապահ է, ապաշխարած եւ փրկուած...:

- Հիմա ձգէ՛ հօրաքորոզ եւ զեկուցարեւրին հետեւինք. տե՛ս գրացիներդ...:

- Կը կարծե՛ս, թէ անոնք բան մը հասկցան:

- Մի՛շտ այդ բան մը հասկնալու յամառութիւնդ: Լա՛ւ, ըսէ՛, Ի՞նչ կը հասկնաս երաժշտութիւնէն: Ի՞նչ կ'ըսէ երաժշտութիւնը զխտակցական աշխարհիդ: Ոչի՛նչ: Մի՛ ընդմիջեր: Այո՛, նախ եւ առաջ կար երգը իր բառերով, բառերն ալ իրենց իմաստով: Դարերու վարպետով բառերը կորսուեցան, մնաց եղանակը, երաժշտութիւնը, արուեստին կտանը:

- Այդպէս արամաբանելով ասկաւին կրնաս ըսել՝ նախ կար նկարը, յետոյ աստղաները կորսուեցան եւ մնացին դիժները, զոյները եւ ձեւերը...:

- Ճի՛շդ: Տակաւին քանդակին մէջ ալ կար մարդը, իր...:

- Կեցի՛ր, ե՛ս շարունակեմ. հիմա մարդը կորսուեցաւ եւ մնացին անճոռնի ծաւալները:

- Ինչո՞ւ անճոռնի: Արդի նկարչութիւնը, երաժշտութիւնը ու արձանագրութիւնը ո՛չ թէ իմաստ մը, մէտած մը, այլ զգայնութիւն մը, ապրում մը կ'արտայայտեն: Համաձայն ես:

- Համաձայն եմ:

- Ինչո՞ւ ուրեմն այդ իրաւունքը կը զլանաս բանաստեղծին:

- Ուրիշ խօսքով Տապանեան տխրի կարենայ մեզ խոսիլ անիմաստ բառերու ճարտիկ շարքով մը: Ա՞յո է:

- Ինչպէ՞ս բառ մը կրնայ անիմաստ ըլլալ: Գործածողը զուն ըլլաւ կամ Տապանեանը, բառը խորհրդանիշ մըն է...:

- Այդպայ միտքս բացատրել: Պէտք է ըսել՝ բառերու ճարտիկ բայց անիմաստ շարք մը: Կը մտնաս որ զբողոքարկի գործածած շինանիւթը ձայն, գոյն կամ ծաւալ չէ, այլ բառ: Որպէս արուեստագէտ, բանաստեղծը բառերու արամաբանական կառուցումով...:

- Ճի՛շդ այդ արամաբանականին շուրջն է մեր ատրակարծութիւնը, զգայնութիւնը, ապրումը, խոսված արամաբանութեան հետ կապ չունին:

ՆԱԽԱԳԱՀԸ .-

Կը կրկնեմ, մասնակի խօսակցութիւնները արգիլուած են, խնդրե՛մ, մի՛ խանգարէ՛ք:

ԶԵԿՈՒՑԱԲԵՐԸ .-

Տապանեանի «Անգամը» հարուստ է նորագիտ բացատրութիւններով: Ան կ'ըսէ

Քնար յաւերժին

որովհետեւ յաւերժութիւնը անոր համար հաւատացեալի՞ն տնկննիս յղիւր-բիւնը չէ...:

- (Յած ձայնով) լա՛ւ: Մտ սեղանին վրայ եր բան չիմ տեսներ. թե-րեւս յանցաւոր եմ փնտռելով: Իսկ երբ բանաստեղծութիւնը զգայնութիւն մըն ալ չի փոխանցեր...:

- Եղբայր՝ ձեզ՝ որ մարդը գրածը կարդայ :

Ջեյնի-ՅԱԲԵՐԸ .-

Տապանեանի համար
Օրերը նզոված

եմ : Երիտասարդ գրողներու մօտ յաճախ կը հանդիպիմք անդոսեանքի մը...

- Ճզմուած օրեր, օրեր ճզմուած, ճզմուած օրերու ժանիք : Հաւնե-
ցա՞ր այդ խառնածին ամուսնութիւնք :
- Ինչո՞ւ, յի՞ օրեր, օրերը յի՞ շե՞նք ըսեր :
- Այդ ալ ուրիշ անհեթեթութիւն :

Ջեյնի-ՅԱԲԵՐԸ .-

Տապանեանի յոյզերը պատուած եմ, ալմատները հերաքափ : Խոր տագնապի մը այս պատկերացումը, տագնապ անկարողութեան եւ...

- Անկարողութիւն : Ե՞օ՛, ի՞նչ ընելու անկարողութիւն, մանաւանդ
իբ ծղրիթի ծիւրած գեղձերով...
- Վերլուծական մոլուցքովդ Տապանեանի սեղանը տապալեցիր :
- Ըրածս վերլուծում չէ, այլ գիտնութիւն : Տապանեանի բանաս-
տեղծութիւնը արդէն հանդուցեալ էր, մեռեալ տառ, եթէ ճիշդը կ'ու-
զես... :

Ջեյնի-ՅԱԲԵՐԸ .-

Տապանեան ինքզինքը կը փնտէր եւ իբ ներաշխարհիմ մութ ծալքե-
րում մէջ տակուսով կը գտնէ աւանդական արժէքներու փրատակները : Խոր
վէպիմ՝ քր արձակ բանաստեղծութիւն է եւ «Սեպանիմ» միջեւ կայ բնական
առընչութիւն մը...

- Գրե՞ս ինչ : Գրականութիւն փորձելէ առաջ, պէտք է սպրիւ,
պայքարիլ, տառապիլ, տարխանալ, սիրիլ, տանիլ : Թէ ոչ դուրս եկածը
կ'ըլլայ
- Չորցած մտաւարականի
Պարպուած բառերում
Ես՝վը անհորիզմ...
Գէլ չէ : Ի՞նչ ըսիր, ես ալ գրե՞մ...

Ջեյնի-ՅԱԲԵՐԸ .-

Վերջացնելէ առաջ, անգամ մըն ալ կ'ուզեմք հաստատել քր Ա. Տա-
պանեան իր «Սեպան» երկարաշունչ գործով կը ներկայանայ...

- Աւելորդ չե՞ն սա գրական զեկոյցները եւ որպէս թէ քննադատական
վերլուծումները : Իմաստ : Գա՛ւ լիցի, հազար ներողութիւն, իմաստ ար-
դէն չենք փնտուեր : Յոռ՞վք, տաղնա՞պ, զգայնութիւն : Եման տպանքներ
ալ չկային սեղանին վրայ :

- Ուրե՛մն :
- Գործը ձախող է, վերջակէտ :
- Կը կարծե՞ս, թէ Պեքիսկէնի երաժշտութիւնը ձախող չէ Ասաման կղզիի վայրենիներուն համար :
- Ի՞նչ ըսել կ'ուզես :
- Պա՛րզ : Ըսել կ'ուզեմ որ գրական գործ մը ճաշակելու համար պէտք է որոշ զգայարանք ունենալ եւ գորգացնել զայն :
- Ենորհակալ եմ հանդիտութեանդ համար : Արդէն ա՛յս է ձեր ընկալիս առժորութիւնը : Մէջտեղը գործ մը, ձեր նոր կաղապարով : Եւ յայտարարութիւն :- Ան որ չի հաներ՝ զգայարանք չունի, ճաշակ չունի, ժամանակավրէյ պատշաճութեան տէր է : Կը համարձակե՞ս չհանել, կը փետտեն : Միաները կը լռեն սարսփահար :
- Ձե՛ս չափազանցեր : Երբ կանխակալ մտադրութիւններով կը մտնենա գրական գործին, ի՛նչ կ'ըսեմ, ռիսկա՛լ արամադրութիւններով, անշուշտ թէ գեղարուեստական վայելք չես գտներ :
- Քեզի պէ՛տքերը շատագո՛վներն են խրթին գրականութեան մը, իրողործուած սահմանափակ թիւով մտաւորականներու վայելքին համար : Աչխարհէն կտրուած պզտիկ մարդիկ՝ որոնց գերագոյն հանձնքը փոխադարձ ջերուշտութիւնն է - մտային ջերուշտութիւն, ճի՛շտ սա մեր գրական զեկոյցին պէս :

ՆԱԽԱԳԱՀԸ -

Դա՛ք լսեցիք մեր գեկուցարներին խզմամիտ վերլուծումը : Հիմա խօսքը մերն է : Ինչպէս գիտե՛ք, մեր գրական զեկոյցները վիճարանակամ բնոյթ չունին : Ամէն մարդ կը յայտնէ իր կարծիքը : Խօսքը օրինադիմ է :

ՕՐԻՈՐԿԸ -

- Նախ շնորհակալութիւն գեկուցարներին, որ լուրջ...
- Լո՛ւրջ : Ըսէ՛ հասարակ-տեղիք : Պատէ՛ն կախուած ոսկեղօծ շրջանակ մը առաւ եւ Տապանեանի գլխուն անցուց : Գեղեցիկ բայց անտեղի խօսքեր :
- Նորէ՛ն դժգոհ : Խեղճը ահազին աշխատանք է տարած...
- Ահազի՛ն աշխատանք, անկասկած : Տասը էջ քերթուած, քսան էջ վերլուծում...
- Քու իսկական մտածումդ գիտեմ : Գուն կ'ուզես որ գրադէտը ժողովուրդին մասալ պատմէ : Այդ ժամանակները անցած են սիրելիս : Գրագէտը ո՛չ թէ պիտի իջնէ հասարակութեան մակարդակին...
- Թող իջնէ՛, ի՛նչ կ'ըլլայ, թող բարեհաճի նրկիր իջնել, գէ՛մքը տեսնենք...
- Այլ ընթերցողը պիտի բարձրացնէ իր գաղա՛թը : Բանաստեղծութիւնը ո՛չ իմաստալից դասախօսութիւն է, ո՛չ ալ գիտական զեկուցում...
- Մէկ չափազանցութենէն միւսին անցանք :
- Ուրե՛մն կը խոստովանի՞ս, թէ դուն ալ կը չափազանցես :
- Կը խոստովանիմ որ գրական խրթին գործի մը դէժ յանդիման - եւ Հիմա մեծ նորոյթ է անմատչելիութիւնը - վտխ հետեւեալն է. արդեօք սա

Հեղինակը զիջեցինու չի՞ ինչուր: Կը կարգամ, նորէն կը կարգամ, կ'աշխատիմ հասկնալ, չեմ յաջողիր: Այդ ճիգով կշանուած՝ թերեւս չեմ կըրնար, ինչպէս ըսիր, անմիջապէս հաղորդակից ըլլալ գործին մէջէն արտաստուող ապրումին: Բայց նա՛եւ չեմ կըրնար հարց շտալ - դոյտութիւն ունի՞ արդեօք այդ ապրումը: Գործը բառակոյտի մը արտաքին տպագրութիւնը կու տայ, արդեօք պարզապէս բառախաղ մը չէ՞: Երբ անձանթ լեզուով մը Հետք խօսին, միւտ կը կարծես որ թերեւս թեղ կը ծագրեն: Տապանեանի սա «Սեղանը» օրինակ. ի՛նչ որ է, վերջը կ'ըսեմ...

ՆՆՐԿԱՅ ՄԸ .-

(իօսքը վերջացնելով) ... Տապանեան պարտաւոր էր մկատի օտմել այս բարբը...:

ՈՒՐԻՇ ՄԸ .-

Կը բողոքեմ: Ի՞նչ իրաւամբով ընթերցողը պարտաւորութիւններ կը բեռնէ գրագէտին վրայ: Գրագէտը բացարձակօրէն ազատ է, կը գրէ ու կ'անցնի. ա՛ն ո՛րեւէ պարտաւորութիւն չունի ընթերցողին հանդէպ:

ՈՒՐԻՇ ՄԸ .-

Վերջապէս ամէն գրագէտ կը գրէ կարգացուելու համար, ընթերցողին համար:

ՈՒՐԻՇ ՄԸ .-

Բայց ո՞ր ընթերցողին:

ՈՒՐԻՇ ՄԸ .-

Եթէ գրագէտը պարտաւորութիւն չունի ընթերցողին հանդէպ, ընթերցողն ալ ի՞ր կարգին ազատ է կարգալու կամ չկարգալու: Իմ կարծիքովս գրագէտը պարտաւոր է ա՛նուագն պարկեշտ ըլլալ:

ՆԱԽԱԳԱՀԸ .-

Յնդրե՛մ, առանց ճայն առնելու մի՛ խօսիք: Յետոյ՝ միւթէն շեղեցանք: Մեր գեկայցը Տապանեանի «Սեղանին» շուրջ է: Այս՛, խօսքը պարունիմն է:

ՊԱՐՈՆԸ .-

Տապանեան պարկեշտ է թէ՛ իր մերաշխարհիմ եւ թէ՛ ընթերցողին հանդէպ: Անոր պատկերները գրական կեդծիք չեն, ինչպէս ամամք ըսիմ, այլ մերքին իրաւ ապրումի մը խորհրդանշական արտայայտութիւնը: Նորարար է Տապանեան, նորարարութիւն է անոր «Սեղանը», ըլլա՛յ իր կառոյցով՝ ըլլա՛յ իր քննաներով:

- Հիբրոշիմայի սպանդէն եւ մացի կեդրոնացման ճարտարներէն թրոմաթիզէ եղած բանաստեղծը կ'ապրի ընկերութեան կողմէ ճնշուած, ար-

համարեալած, փշրուած անհատին խռովքը, կ'ուզէ խորտակել «պարպուած բառերու ծանր առասպելը»: Ձգացած են արամեական արժէքները, արժէ-
փառկուած են բառերը: Բայց կա՛ն անոնք: Միշտ կա՛յ այդ «նայիթիմոյ»
բառերու քո՛յնը, որ կը զլատէ անոր քոնիւքը, կը բանտէ անոր միտքը: Տա-
պանեան կը սպասէ: Պատրանք չունի, յոյս չունի, բայց կը սպասէ, ի՛նքն
ալ չգիտեր ինչ: Բան մը որ պիտի գայ – պիտի գա՛յ – «նկրսերու խորուն-
կէն»...:

- Եթէ կրնաս դիմացիք... Ինչ որ Տապանեանի համար կ'ըսէ, ըսուած է արդէն տասնեակ մը ուրիշներու համար: Շատ հաւանաբար Հիբրոշիմայի տարին մեր բանաստեղծը չէր ծնած: Թեղծը փորձ մը կատարած է, աուրք տարով զբազան նորածնութեան: Անշուշտ սխալ է սկսնակ դրողէ մը գլուխ – գործոց սպասել: Ձիտ վրդովողները սա քննադատներն են. վա՛յ անսպասովանառու սրիկաներ, հասարակութեան նաչակը խաթարող...:

- Եղբա՛յր, ինչո՞ւ ինձի կ'ըսես, բարձրամայն չարտայայտուի՞ս:
- Կը կարծես, թէ կը վախենա՞մ:
- Վասա՛հ եմ:
- Մի՛ փորձեր զիս, չեմ ուզեր դայթակղութիւն ստեղծել եւ այս նորերը խրաչեցնել: Արդէն կ'ալ ալ նոր բանաստեղծ եմ...:
- Ի՞նչ կ'ըսես, ե՞րբ սկսար գրել:
- Տակաւին չեմ գրած, բայց ջիչ առաջ որոշեցի գրել...:
- Կը շնորհաւորե՞մ: Ուրկէ՞ ալ ջիչ մը ուշացած մուտան:
- Ձեկուցարարը ունկնդրելով կ'ըսէի – ուրեմն կարելի է գրել, կարելի է ո՛րեւէ ձեռով ո՛րեւէ բան գրել: Գրական նաչա՞կ, զբազան արժէ՞ք: Անհո՞գ եղի՞ր, միշտ կը գտնուին քննադատներ, որոնք դորձիդ մէջ պիտի տեսնեն աշխարհ մը խռովք, տիեզերք մը զգայնութիւն, աներեւակայիլ սպրտմաներ...: Կը փնտռեն եւ անպայման կը գտնեն, անհո՞գ եղի՞ր:
- Թերեւս եիմարիտա ըլլաս՝ բայց բանաստե՞ղծ, չատ չեմ հուսար: Այս դիւրեւ մեզի կու գա՞ս, Գրիգորը եւ Յակոբն ալ պիտի գան, պար մը կը տաքցնենք:
- Ինչո՞ւ չէ:

ՆԱԽԱԳԱՀԸ –

...Մեր յաջորդ գեկոյցը տեղի պիտի ունենայ գալ ամուս տաճերիկ-
գիմ, միեւնոյն ժամուն: Պիտի բնմարկուի երիտասարդ բանաստեղծ օրիորդ Արտեմիս Սեւանի վերջին գործը, «Թէլտման»:

Ն. Պ.

*Իմն անմար հիմն շկան
 շկան է ԵՊՆ-ին: Եր բանաստեղծությունները
 պրակտիկ են և օգտակար պարզությամբ խոսում
 են:*

*Մուկոյի և Մրանոյի պարզությունը
 ինքն իրենցով է և անհամար կարծիք:*

*Եր անմար ու Մրանոյ լինել
 զգացմունքները կրան լինել զանի ին և անար:*



ԵՐԲ ԳՈՒ ԿԱՍ

Իմն անմար հիմն շկան
 շկան է ու շկան,
 Երբ դու կաս ու կանչես կը գաս,
 Երբ տրամեմ' դու կու լաս:

Անգեկ կեանքիս լասուր
 Գուել է գեկ ու բիակ,
 Երբ դու միակ
 Լինելուս, տուելուս իրասուր'
 Կա'ս ու կանչես կը գաս:

Հագուս լասուր տես
 Անագաստ է բացել
 Դեպ' հարկանը բայրիդ,
 Ջօնը հուրիդ,
 Ու կուրծք է տուել յեռիմ, փարիմ,
 Սիրայդ սրիմ, հրիմ...:

Իմն անմար հիմն շկան
 շկան է ու շկան,
 Երբ դու կաս ու կանչես կը գաս,
 Երբ տրամեմ' դու կու լաս...:

ԱՐՄԱՆՏ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՎ

ՎԱՐԴԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

4

Հրատարակած է գծրթուածներու հինգ
հատոր։—

«Պոստալի խայնիք», «Շամոնզոպ», «Բը-
րիվալէ», «Մովում Երցք» և: «Ոսկի ապիտոք»:

Վերջերս լոյս ընծայեց զննողատարած
յաղուածներ պարունակող հատոր մը՝ «Գրական
խարցիք», որ թարգմանուեցաւ նաև պարսկե-
րէնի:



ՍՓԻՒՌԻ ԳՐԱԿԱՆ ՃԻԳԵՐԸ

ԳՆՆԳՈՑ ՄԸ

Հակառակ խոստմանայից նորերու ճի-
գերուն, հակառակ հոս հոն լոյս տեսած
գիրքերու և թերթերու (ամսագիր,
պարբերական, եռայն) մէջ հրատարակ-
ւած կարեւոր գրութիւններու, մեծ ու
հզօր գրական գործերու չգոյութեան պա-
րապան մասամբ կը մնայ իրողութիւն:
Գանդատը նոր չէ: Ան գոյութիւն

ունէր տակաւին այն օրերուն, երբ
Ապրիլեան Եղեանով հնձուած չէր մեր
մատուրականութեան ընտրանին, երբ
այսօրուան հետ բաղդատած, հայ գիրքը
ունէր աւելի շատ ընթերցող ու քաղա-
քական ակնկալութեանց ժամանակաշը-
ջան մը կ'ապրէր հայութիւնը:

Հրապարակի վրայ էին Զօհրապ,
Զարդարեան, Սրմաքէշիանլեան, Ինտ-
րա, Հրանդ, Ե. Օտեան, Սիպիլ, Ա.

Յարութիւնեան, Թշկատիցի, Հ. Աստուր, Ա. Զօգանեան, Զ. Յսայեան, Ս. Պարթեւեան եւ ուրիշներ, երբ Հայ բանաստեղծութիւնը կը հաշուէր Վարուժանն ու Միամանթոն, Թէքէեանն ու Սեւակը եւ խոստումի սահմանները գրած անցած այլ տաղանդներ, կար դարձեալ զփոյններու փաղանգ մը, որուն գլուխը կանգնած էին Օշական, Կ. Զարեան, Գեղամ Բարսեղեան, Ծ. Միսաքեան, գրական նոր հանգանակի մը հետամուտ:

Այդ առթիւ է որ Օշական լայն բացած իր կարիքներ, սկսաւ Հարթիւ անոնք, որոնց գրականութիւնը կը համարէր վրիպած:

Այդ ոգին ու փորձը շարունակուեցաւ 1920-էն յետոյ եւս, երբ մոզոքը հնձած էր արեւմտահայ գրականութեան բաղձաթիւ լուսաւոր զէջերը:

Բարձրավանճոյ փորձուեցաւ Պոլսոյ մէջ շարժում մը, որուն գլուխը կանգնած էին Օշական, Զարեան, Թէքէեան, Ծ. Պէրպէրեան եւ Գ. Գամպֆեան:

Քաղաքական պատճառներէ աւելի, ընթացողներու անտարբերութիւնը եկաւ հաստատելու, որ Հայ կեանքը գրական նորութիւններէ աւելի քաղաքական նորութիւններով կը հետաքրքրուէր այդ օրերուն, եւ թէ երբ յիշայ քաղաքական ապահովութիւն, միամտութիւն է գրական հանգանակներով խանդավառել փորձել զանկուածները:

Այդ օրերուն այլ լոյս տեսան էինբու մաս կազմող վերապրողներու կողմէ գործեր, որոնց վրայ աւելցան նորերու ստեղծագործութիւնները եւս:

Այդ շրջանի հիներէն ունինք Օշականի երբ պատանի եմ, Խորհուրդներու Մեհեանը, Կ. Զարեանի՝ Օրերու պտակը, Հայկանոյշ Մարքի՝ Մով լուսբեան պաներպը, Ե. Օտեանի՝ Թաղակեմի կնիկը, Հ. Ասատուրի՝ Դիմաստաւերները, առանց յիշելու Ապրիլեան Եղեոնի ասորնութեամբ գրուած Ա. Անտոնեանի, Միլոսյէլ Շամտանճեանի, Թէղդիկի զործերը:

Նոր յայտնութիւններ եղան Մտաթէս Զարթիւնի իր քերթողական երկու

հատորներով, Տրումուրեան ու Խազազուրեան երգեր եւ կեանքի ու մահուան երգեր անուններով ու յետոյ Զաւէն Միւրմէլեան լոյս զուարթ բանաստեղծական հատորիկով:

Քեմալականներու Պոլսոյ մուտքով, կը սարտղնէր նաեւ հոն հաւաքուած Հայ մտաւորականութիւնը: Ու այլ կերպով կը փակուէր գրական կարճատեւ շրջան մը, ուր թարգմանաբար երեւցան Մեթերլինկի, Հանրի Պաթայլի եւ Էսթրպացի այլ գրողներու կարգ մը գործերը, որոնց կարգին նաեւ Թէղդիկի Աւելուան Տարեցոյցը, Յ. Սարգիսեանի գրական մէկ հաւաքածոն, Երզարան մը եւսյլն: Ու կը փակուէր շրջան մը, որուն պիտի յաջորդէր հետագային նորը, կեդրոններ ունենալով վրիպաւորապէս Փարիզը, Լիբանանն ու Եգիպտոսը:

ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒ ԵՐԶԱՆ

Գրողը մինչեւ մէկ աստիճան կ'ապրի իր փողոսկրէ աշտարակին մէջ:

Առօրեայ կեանքը ունեցած է ու պիտի շարունակէ ունենալ ճակատագրական իր ազդեցութիւնը գրագէտին կեանքին ու ապրումներուն վրայ:

Այդպէս եղաւ նաեւ մեզի համար: Նետուած յիշեալ շրջաններուն մէջ, երիտասարդ գրողներ խոռոտեցան մեր առօրեային: Անոնք ապրեցան մերթ յոյժի եւ սպասումի օրեր, իբրեւ հետեւանք 1920 Օգոս. 10-ին, Սեւրի Դաշնագրով մեզի խոստացուած ընդարձակուած Հայաստանի մը, մերթ հողեկան թեկումի պահեր, Սեւրի դաշնագրի թուրքիոյ կողմէ մերժուելուն եւ Հայաստանի վրայ արշաւով մը կարսի եւ Արտահանի կորուստին:

Փոխն է փոխ այս բոլորը պիտի ազդէին հողերանութեանը վրայ գրողներու երիտասարդ սերունդի մը, որ ստիպուած էր միանգամայն տնտեսական անբարեհամբոյր պայմաններու մէջ մղել առօրեայի պայքարը:

Նահանջը, որ դիմադրական դեռնի

վրայ զգալի դարձած էր առաջին տաս-
համեակին խնչ, առիթ տուաւ որ յոսե-
տեսութիւն մը նստի հայ հողին մէջ:

Այդ տպաւորութիւններու տակ զըր-
ւեցաւ Շահան Շահնուրի նահանգը ա-
ռանց երգի վէպը, բարացուցականը
տարբեր տարազի մը ներքեւ տրուեցաւ
այս գործին մէջ:

Եղեռնով մեղի պատճառուած կո-
րուտը տայու պահանջ մը մղեց Պեր-
ճուհին գրի առնելու Փոքրորիկէն վերը
հատուրը: Փրկելու համար գրական վաս-
տակը անհետացող դրագէտներու, Փա-
րիզի մէջ լոյս տեսան Ն. Գ. Բարեկամ-
ներու կողմէ հրատարակուած քսանի
չափ գործեր: Նոր միջնադարէն ազ-
դուած, նորեր, համաձայն իրենց խառ-
նուածքին, փորձեցին տալ իրենց ազ-
րումները. պատմուածք, վէպ, բանաս-
տեղծութիւն, նոյնիսկ բեմական գործեր
գարձան յետպատերազմեան մեր գրա-
կանութեան մաս:

Անոնց մէջ յատկանշական կողմը
մնաց լեզուի մաքրութիւնը:

Գաղափար եւ գրական լուրջ հարցեր
չէին որ կը մասնագէտին գրողները:

Բայց մեծ մասամբ գրիչ շարժողները
կաշխատէին արուեստով ու զեղումով
պարզել իրենց ներաշխարհը:

Առօրեայ ապրումներու շարքին,
պատմական թեմաներ կամ նիւթեր ա-
ռանցքը կազմեցին նորերէն վազգէն Շու-
րանեանի, Շաւարշ Նարդուհիի, Նշան
Պէշիկթաշիեանի, Հրաչ Զարգարեանի:
Հիներէն Օլտական Մնացորդացով, Գ.
Մելոյեան Արվեմոյշով, Կ. Զարեան
Նաւը լեռամ վրայ վէպով, առիթ մեր
կեանքին հետ առնչուած նիւթեր:

Հայ դիւղը կամ քնապատը կո-
րուտէ փրկելու նախանձախնդրութեամբ
Համաստեղ տուաւ յաջորդաբար իր
Գիւղը եւ Աճճրնը պատմուածքներու
շարքը, Հետագային դիւցազնավէպով
մը, Սպիտակ Զիւռը, Հայ հողին
խոտով փոթորիկը սերունդին հազոր-
դական դարձնելու եւ զոյն լուսաւոր ա-
պագայի մը կապելու նախանձախնդրու-
թեամբ:

Հետզհետէ հրատարակուեցան Հայ-
րենակցական Միութեանց կողմէ պատ-
մութիւնը իրենց ծննդավայրերուն եւ
Ապրիլեան Եղեռնի մասնակի ղէպե-
րուն:

Երկար պիտի ըլլար յիշատակել շար-
քը այս առթիւ լոյս տեսած հատորներու:

Յետոյ ունեցանք Հայրենիք Ամա-
զրով տրուած Ռուբէնի Յեղափոխականի
մը Յուշերը, որոնք լոյս տեսան եօթը հա-
տորով ալ, Մալխասի Ապրումները,
Զարթօնքը, Կոմսի՝ Յուշերը, Խոճարի
Հերոսները եւ գործերը ապրող կամ մե-
ռած ուրիշ հեղինակներու:

Բանաստեղծութիւնը ունեցաւ իր
տասնեակ դարպասողները նոյնպէս:

Անոնք բոլորն ալ, աւելի կամ պա-
կաս շնորհով, աշխատեցան պարզել ի-
րենց ներաշխարհը:

Լեւոն Շանթ, Կիլիկիոյ պոետութե-
ան վերջնելով իր ախպարները, տուաւ
Օշիմ Պայլը, Ինկած Բերդի Իշխանեան,
ու վէպով մը Հոգիները Մարտի եւ, վե-
րագարձաւ հողբանական վէպին:

Հայ հողին որոնումներու կնճռոտ
բաւիղի մը առջեւ կը դանդաղէ:

Ամէն գրող իր հաշտոյն կ'ընէր զինք
խանդավառող աշխատանք մը:

Հայ միտքը նստած չէր ծալապա-
տիկ:

Թերթեր, ամսագրեր, պարբերական-
ներ, որոնք մինչեւ այսօր կը շարունակ-
ւին լոյս տեսնել մեծ դժուարութիւննե-
րով, ե Սփիւռքը մտաւոր կորուստէ փր-
կելու նպատակով սկսուած պատուարեր
նախաձեռնութիւններ են:

Լքուած իր ճակատագրին, Հայ մար-
դը տարբեր մարզերու վրայ, փարեցաւ
իր առօրեայ տնտեսական զրոյցումնե-
րուն: Կեանքի պայթարին մէջ ցեղին ցու-
ցահանած հրաշքը, յարգանք միայն կը
պարտադրէ աշխարհի:

Մշակութային մարզերու վրայ, այդ
հրաշքը նուազ լուսաւոր չեղաւ, այդ
մասին խօսեցան օտարներ, երբ յիշեցին
անունները բոլոր անոնց, որ եւրոպայի

մէջ ըլլայ թէ Ամերիկայի, իրենց կրօն-
րոզ, նկարներով, գրական գործերով ու
գիտական նուաճումներով, զարձան հայ
անունը պանծացնող ուժեր:

Այս բոլորը տեղի ունեցան անցնող
յիսուան տարիներու ընթացքին, հայկա-
կան Սփիւռքի մէջ, ուր բացուեցան
միջնակարգ վարժարաններ, որոնցմէ
չըջնաւարաններ օտար համալսարաննե-
րու մէջ զարձան բոժիչ, իրաւարան,
ճարտարապետ, քիմիագէտ, երաժիշտ,
մանկավարժ, եւ այլն, ու որակապէս
բարձրացուցին մեզ:

**ԵՐԿԻՐԸ ԵՐԿԱՐ ԱՏՆԵ ԱՆՏԱՐԲԵՐ
ՍՓԻՒՌԻ ՀԱՆՆԻՊ**

Երբ նետուած աշխարհի ամէն կողմը
տարազիւ հայութեան մնացորդացը կը
զալարուէր ու կ'աշխատէր մշակութային
եւ անտեսական կրկնակ մարդերու վրայ
պահել բարձր ցեղին անունը, միակ ան-
տարբեր Սփիւռքի սպառնչ այս ճիշդե-
րուն հանդէպ՝ կը մնար հայրենիքը:

Ան մէկէ աւելի տոբիթներով յայտա-
բարած էր, թէ ամենայն հայոց կատա-
վարութիւն չէր ինք, ուստի մտաւոր էր
կայրը կը պահէր, լուսադոյն պահուն,
զազափարական իր մուրէն կեր ստացող
փոքրաթիւ փաղանդի մը հետ:

Մինչեւ տասնեակ մը տարի առաջ,
Սփիւռքը, ուրեմն, չըուած իր բախտին,
զարնոեցաւ ապառաժէ ապառաժ, ա-
փունքէ ափունք, ու նիւթական հեղձու-
ցիչ պայմաններու մէջ, տուաւ զրակա-
նութիւն մը, որմէ եթէ գո՛հ չեն բոլորը,
կ'ընդունին սակայն, որ մեր պայմաննե-
րուն մէջ աւելին բաղձանք միայն պիտի
նշանակէր:

Սփիւռքը ունի այսօր այդ բաղձանքը
կամ առաջադրութիւնը:

Արդէ մեր պայմանները թոյլ պիտի
տա՞ն իրականութիւն դարձնելու զայն:

Հարց մըն է ասիկա, որուն կարելի
չէ պատասխանել հապճեպով:

Հայրենիքը, որ ամբողջ քառասուն
տարի ուրացաւ Սփիւռքի մեծ դան-

զըւածները, ներգաղթի օրերուն եւս ցոյց
չտուաւ պահանջուած վեհանճնութիւնն
ու լայնամտութիւնը: Փորձեց որո՞ժ ցանկ
Սփիւռքահայութեան կեանքէն ներս ու
պտտակտեղ ալդէն իսկ ծուրկ ծուրկ ե-
ղած մեր ժողովուրդը:

Հիթանստի եւ քրիստոնէի խաղաղա-
նութիւնը զարձեւել էր շարունակութի,
թէպէտ ոչ նախկին թափով:

Գրականութիւնը մասնաւոր հաս-
ւածի մը սեփականութիւնը չէ, ոչ ալ
մենաշնորհը կարժիւր կամ կապոյտ պա-
րեզօտ հազած հասանքներու:

Արդ, երբ խորական ոգին կը մնայ
ազազակող էրոզութիւն, կը մերժուի
ուրեմն այն հասուածը, որ զարձաւ զըլ-
խաւոր դեկավարը Սփիւռքեան զրակա-
նութեան:

Այդ հասուածը ազգային ուրոյն
զաղափարականութեան մը զբօշակա-
կիր, առեւա զրականութիւն մը ազա-
տազրական պայքարով լեցուն: Դարաւ
զաղափարախօսը անկախութեան տեսա-
կէտին ու դարձուց Հայ Դատը Սփիւռքի
մեր բաղձութիւններուն ոգեւորութեան
կեդրոն: Սփիւռքեան զրականութիւնը
այդ զաղափարականութեամբ պիտի
կրնար կատարներ կարել: Պիտի կրնար
տալ խորունկ ապրումներով լեցունած
տիպարներ, որոնք կը ընչն ու կ'ոգորին
ցեղային լուսաւոր երազի մը համար:

Առօրեան, լուսադոյն պարագային,
համապարփակ իտէլալէ մը թափուր՝
զբողնիքը պիտի կասկէր հին տարազնե-
րու:

Պիտի տար անոնց տիպարներ ու
անցքեր, հեռու հայ զաղափարապաշտ
սերունդ մը ոգեւորելէ, պիտի պտտա-
ցընէին զանոնք հեռատեսիլով, ճայտա-
փիւռով եւ կեղծ զորգերով զարդարուած
սրահներու ներքնամասերուն մէջ, աչ-
քեցած խօրապարբրու եւ խմբիչներու
ընդարձացնող ազդեցութեամբ:

Տարփանքը, զրկանքներու հիւանդոտ
պաշտութիւնը, համեմուտ ճողքա-
նական տարրով մը, զբամազուի պիտի
ծառայէր անհորիզոն զբողնիքու խըմ-
բակի մը, որ պիտի փորձէր իր ժամա-

նակը անցընել նորութիւններ բերողի միամտութեամբ:

Եթէ Եւրոպայի մէջ այս մեւ ներթափանցող գրողներ համարու զրամ կը շահին, զեռ եւս չի նշանակեր, որ զլուսն գործողներ են իրենց տուածները:

Ինքնատուութեան անունով տակաւին 80-ական թուականներուն ալ Ֆրանսայի մէջ նորութիւններ փորձողներ եղան, բայց Պարիսներ մնացին միշտ լայն դանդաղներուն պաշտամունքին տառակայ:

Մենք մեր ոտքին ներքեւ Ֆրանսայիին պէս հող չունինք Սփիւռքի մէջ, մեր վաղը անստոյգ է որքան ատեն որ աղքատիւնաւորը ու լուսաւոր դադափարականութիւն մը համափիւռքեան հայութեան ոգեւորութեան թիրախ դարձած չէ:

Մեր գրականութեանը այդ սեւեռումներով պիտի դարձանայ, օգտագործելով այդ նպատակին համար լեզուական, հոգեբանական, գիտական բոլոր ստորագիծները, որոնք պայման են գրական ստեղծագործութեան մը տալու կատարելի իրաւունք:

Երբ հայրենի հողին վրայ նստած գրողը այդ մտահոգութիւններով առաջնորդուած կը փորձէ բանաստեղծութեան եւ վէպին, պատմութեան եւ բնական ստեղծագործութեանց ուղղութիւն տալ, միջազգայնական եւ աշխարհաքաղաքացիական զոտածումներէ հեռու պահելու համար սերունդը, Սփիւռքը տասնապատիկ ուժով պիտի ընթանայ նոյն ճանապարհով:

Այդ ճանապարհէն ընթացան Արփեաններ եւ Բաֆֆիներ, Ահարոնեաններ եւ Բարիներ, դոնեւրու համար հայ հողին:

Այդ ճանապարհէն վրայ դէմք մը դարձաւ Համաստեղ, ու հայրենի հողին վրայ այդ մարզը շարունակեցին պեղել Գեորգի Գեորգիան՝ իր Վարդամաբնով, Ստ. Զօրեան՝ իր Պապ քաղաւորով, Սերո Թանգազեան՝ իր Միխայիլ Սպարապետով, Զարենց՝ Ամրոյնները յիշագրութեան աւելի, հայութեան հա-

մար իր Հայաստան քերթուածով ու նոր փառանգը մեր այն բանաստեղծներուն, որոնք կառչած կը մնան հողին խորհուրդին:

Հ Ո Ղ Ի Ն Խ Ո Ր Ը Ո Ւ Ր Դ Ը

Այսուհետեւ ան, հողին խորհուրդը պիտի առաջնորդէ մեզ:

Որպէսզի չպատին ոգեւորութեան մեր աղբիւրները, որպէսզի մշտաբնուն մնայ ստեղծագործութեան հուրը մանաւանդ նորերու մէջ, պէտք է փնտռել դոյաւանդան նոր խարխիւներ:

Ո՞վ պիտի տայ մեզի հոգեկան փոթորիկներուն պատկերը սերունդի մը, որ իր մայրամուտը կ'ապրէ հայրենահեռու հորիզոններու տակ:

Ո՞վ պիտի նկարագրէ մղձաւանջային ապրումները այն հիններուն, որոնք աչքերուն առջեւ կը կորսուին երկու սեռէ իրենց յաջորդները, միջազգային խոսնարանի մը ձուլուելով:

Տակաւին՝ պատկերը այն թէններուն եւ ուրացումներուն, զրոյի զղամիջը հազած կարգ մը մարդոց, որոնք արուեստին ծառայած ըլլալու պատրանքը կ'ապրին, ուրանալով արժէքը հակառակորդ հոսանքի գրողներուն:

Ե Ղ Ե Ռ Ի Ն Ի Թ Ի Մ Ա Մ Ե Ա Ս Ե Ն Ե Տ Ք

Այբբիական Եղեռնը մտամբ ու պահ մը մղեց Սփիւռքի հայ քաղաքական միտքը անդադառանալու ընդհանրական կացութեան մեր բազմութիւններուն, յանգած այն եզրակացութեան, թէ միայն քաղաքական մեր իրաւունքներուն տիրանալով, պիտի ստեղծուէր զաղթալիսարհի համար հնարաւորութիւն, կորուստէ փրկուելու:

Որոտումի նման եկաւ անցաւ Յիւնամեակը:

Թանգալուսութեան եւ յոյսերու յաջորդեցին պատրանքներ:

Գրականութեանը այս մարզին վրայ գրեթէ ոչինչ բերաւ:

Հայ գրողը Հայ քաղաքական մարդուն նման ապրեցաւ սպասումներու շրջան մը:

Հաւատացած ենք, թէ ուրիշ պիտի ըլլար մեր գրականութեան պատկերը, եթէ տրդարանային մեր անկախութիւնները:

Քոչարի Նահապետը ասորքեր տարազի մը տակ պիտի գործէր, այս անգամ Արագածի լանջքին նստած գիւղէ մը աւելի ընդարձակ ու լուսնորիզոն տարածութեան մը մէջ, թերելով նոր ոգեւորութեամբ լեցուած կենդանի տիպարներ:

Ստեղծագործ տիպարները հեղինակներու երևակայութեան մէջ վիպական կը դառնան, երբ չիմու են անոնք ու կը պործեն արուեստականօրէն:

Համաստեղի Սպիտակ Զիւռտը անգամ տառապեցաւ պահ մը, երբ փորձեցաւ անկախացած մեր Հայքենիքին մայրաքաղաք տալ կարինը:

Սփիւռքը ինչ որ տուաւ անցնող յիւնամեակին գեղեցիկ ու արժէքաւոր, կրեց իրապաշտութեան կնիքը, որ դարձուց այդ պործերը ուշագրաւ:

Եթէ Հայ գրողը այսօր կը տառապի մեծ ներշնչումներէ թափուր մնացած ըլլալուն, պատճառը այն է որ Հայ կեանքը ինք եւս կը տառապի այդ ներշնչումներէն գուրկ ըլլալուն:

ՈՊԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԽԱՐԻՍԽԻ ՊԱԿԱՍ

Երբ դուք ուրեք զանգատներ կը բարձրանան մեծ ու Հզօր ստեղծագործութեանց պակասը մասնանշիլով, բողոքարկուներ պէտք է նկատի ունենան որ տուեալ պայմաններու մէջ անկարելին պահանջել է Հայ մտքէն:

Թող չըսուի, թէ քաղաքական անընպատակ պայմաններու տակ Հայ միտքը Նարեկացի մը տուաւ, թող ցոյց չտըրուին Սայաթ Նովաներ ու Բաֆֆիներ, իբրև ինքնինքնին պարտադրող դէմքեր: Սա փաստ է, որ ՓԱ. դարը չէր կրնար Բաֆֆի մը առաջ, ոչ ալ մեր դարուն մէջ,

Երիտասարդական շարքերէն կարելի է սպասել նոր Նարեկացիներ: Նոյնն է պարագան Սայաթ Նովայի, որ արքունի պարանքի մը մէջ դրած էր իր ներաշխարհը խոռվող անմատչելի հուրին:

Մեծարեց մը, խորհրդապաշտներու ուղիէն ընթացող բացառիկ հոգի մը հողաւ, ու եթեբային գեղեցկութիւններու եւ աննիթացեալ ուրոտներու մէջ իր ներքին խոռվածները անդորրացնող բարձրութեանց Հատաւ:

Ժամտակի ընկերային բարձրը, քաղաքական պայմանները, առանց որանալու նաեւ գրողի մը անհատական խառնուածքն ու պատրաստութիւնը, միացած գինք ծնող ժողովուրդին ընդհանուր քաղաքական եւ հոգեկան ապրումներուն, կոչուած են խարխիւլը պառնալու ստեղծագործական Հզօր գործերու:

Սփիւռքի Հայ գրողին պակասեցան մեծ մասամբ ոգեւորութեան այդ պայմանները:

Ձենք խօսիք այլևս մեր բազմութիւններուն՝ Հայ գրականութեան Հանդէպ ցոյց տուած անտարբերութենէն Հեղինակներու պատճառաւ գառնութիւններու մասին, որոնք այլապէս պիտի ազդէին անոնց ստեղծագործական ճիգերուն:

Այսօր ալ մեր ամէնէն խառամնալից ուժերը իրենց տաղանդը կը սպառեն առօրեային միայն, առանց մեծ ու ապրող գործերու մասին մտածելու ժամանակ գտնելու:

Իրողութիւններ են ասոնք, որոնց չեն ուզեր անիրազանալ վարկաբարձի քրննադատութեանց լծուած դժգոհներ:

Մեր Համադրական ճիգերը կ'ենթադրեն Համադրական լարում եւ աշխատանք:

Փրական կրակէ Հանգանակ մը, որ պիտի առաջնորդէր Հայ գրական ստեղծագործող միտքը արուեստի երկունքներուն, կը պակսի տակաւին:

Բացառիկ վայելչութեամբ եւ շնորհով յղացուած գործեր միշտ պիտի մնան անպակաս, որքան ատեն որ Հայ գրողը

զեռ կը մնայ պատնէշին վրայ ու ի գին ամէն զոհողութեան կը քամէ իր ուժերը զրական հանդերու մէջ:

Իսայց երկարաշունչ եւ հզօր ստեղծագործութիւններ սպասել հայկական Սփիւռքէն, զփութարինը պահանջել պիտի ըլլար:

Հայրենիքի մէջ եթէ կը տրուին երկարաշունչ եւ վայելուչ գործեր, որովհետեւ գրողը գերծ է առօրեայ հնչուողներէ:

Սփիւռքը չկարողացաւ ստեղծել հնարաւորութիւններ հայ գրողին համար, որ ան ընդէր երկարաշունչ եւ մեծարժէք գործերու: Հայրենի հողին վըրայ ըլլայ թէ օտար հողին վրայ, հայ արիւնն է, որ կը զգացնէ իր իրաւունքները: Անցնող յիսնամեակին հասարակ հաւասար; մտաւորական տարբեր սպարէզներու վրայ, Սփիւռք եւ հայրենիք զուգահեռաբար գործեցին:

Այդ մարզերը պահանջ չունէին օգետութեան, ոչ ալ ներշնչումի:

Իժիկներ, զիմիազէտներ, իրաւարաններ, նկարիչներ, ճարտարագէտներ եւայլն, ունեցաւ նաեւ Սփիւռքահայութիւնը, եւ տեղ տեղ պահաջէն ակելով, բայց զրականութեան եւ հրաժշտութեան մարզերուն վրայ, Սփիւռքին պակաստաճաւայուն եւ խոր աշխատանքներու թիւնը, ազգային ոգին գոզաթնացումի տանող ներշնչումը, որ մնաց գերազանց նպաստը հայրենի հողին վրայ գտնուող արուեստագէտներու, բանաստեղծ, դերող, երաժիշտ, քանդակագործ եւայլն:

Նոր է որ մասնակիորէն կը փորձուի Սփիւռքը մտնեցնել հայրենիքին:

Թոյլ տալ որ այցելողներ քանի մը օր գոնէ անցընեն հայրենիքի մէջ ու շփումի դան մտաւորական խաւերու հետ, անձամբ տեսնեն քանի մը վայրերը կամ շրջանները հայրենիքի: Այսքանը անշուշտ հեռու է հզօր նպաստ մը ըլլալէ, երբ արագ այդ շրջապատներով ստացուածները կ'ըլլան սխալի սպաւորութիւններ, բայց ոչ մեծ ու խօսուն ստեղծագործութեանց խարխիւ ծառայող բարիք:

Տակաւին, կայ տրտում վերադարձը, որ ենթական պիտի կապէ դարձեալ նոյնքան տրտում եւ սպասիչ դրաղումներուն, որոնք հեռու են յեցակ դառնալէ զրական ազրող գործերու:

Հայկական Սփիւռքի մէջ աւելի կամ պակաս այս կոչուած է ըլլալու այսուհետեւ ճակատագրը հայ զրականութեան:

Ձմռանք որ ժողովուրդի մը գրական նուաճումները պայմանաւորուած են այդ ժողովուրդին զրականութեան հանդէպ ցոյց տուած հետաքրքրութիւնով:

Վէճէ գուրս է այլեւս, որ շնչատ է հետաքրքրութիւնը մեր զանդուածներուն, հանդէպ հայ զրականութեան:

Հայ գիրքը, պարբերական մամուլը կը բոլորեն տաղնապի նոր շրջան մը:

Հոս հոն ստեղծուած քաղաքական անստոյգ կացութիւն եւ տնտեսական վերիվայրումներ, հարուածեցին վերջին տարիները մեր քանի մը խոստմնալից եւ գրասէր գաղութները եւս:

Ինչ որ կ'ընեն իրենց ազրած միջափայրին կապուած բացաւիկ դէմքեր, յուզիչ փորձ մըն է, փրկելու համար վերջամաց բեկորներու բարոյա-մտաւորական իրաւունքները:

Նոր մեկնումներ, ազամայ հեռացումներ դատարկել սկսած են մեր հին գաղութներն ալ, հարուածելով զրական մեր ճիւղերը, ու դառնալով պատճառ ընթերցողներու նօսրացման:

Տուեալ պայմաններուն մէջ հրաչք սպասել Սփիւռքի գրողներէն, պիտի ըլլար ցանկութիւն միայն:

Ու սակեա, հակառակ քանի մը գրասէր ազգայիններու յատկացուցած գրական մրցանակներուն, որոնց նպատակն է զիրացնել հրատարակութեան ծախքերը սահմանափակ թիւով գրողներու:

Սփիւռքը պէտք է հասցնէ գրասէր ընթերցողներու բազմութիւն մը, սպասուելու համար հայ գրողներու գործերը: Մինչեւ որ շտեղծուի նիւթական հնարաւորութիւն հայ գրողի համար, հոգեկանը պիտի մնայ միշտ միզամած:

Տուեալ պայմաններու մէջ կրնա՞ն բացառիկ մեծութիւններ ծնիլ ու գնել չայ եւ օտար աշխարհը անակնկալի առաջ:

Քերեւս: Անոնք սակայն, եթէ տըր-ւին իսկ մեզի, կոչուած են մտալու ընդ-ւանուր հանգանակներէ դուրս բացա-ռութիւններ: Մենք կը խօսինք հաւաքա-կան խանդավառութիւններով ապրող ու ստեղծագործող տաղանդներու պէտքէն մասին: Ճաղանգներ, որոնց գոյութիւնը նշմարելի է ամէն վայրկեան եւ որոնք կը սպասեն իրենց շնորհները գրականու-թիւնը ամլացնող ժարդերու վըրայ:

Հաւատքի եւ ներշնչումի նոր աղ-բիւրներու պէտք ունի Սփիւռքահայ վը-րողը:

Առաւել չայ մարդուն գիտակէց եւ սրտաց կեցումներն:

Գրագէտը, բանաստեղծը, արուես-տագէտը-նկարիչ, երաժիշտ թէ երգա-կան, հոգեբանօրէն պահանջ ունին զան-դուաններուն համակրութեան: Երբ ստեղծուի այդ հետաքրքրութիւնը, ան իր ետեւէն պիտի բերէ նաեւ խանդավառ արամադրութիւնը գրողին, որ պայման է որակեալ գործերու համար: Մեր վար-ժարանները պէտք է աշխատին հասցնել ընթացող սերունդ, նպաստելու համար գրականութեան տարածման: Անտարե-րութեան մէջ գրականութիւն չի ծաղ-կիւր, ոչ ալ կը ծնին հօգր ու որակաւոր երկեր:

Սփիւռքահայ գրական ճշմարտաբար չէզոքացնելու եւ ամուլ զանդասներով հրապարակը շողմկելու համար՝ պէտք է փնտնել փրկութեան նոր ուղիներ:

Հայրենիքը նոյնպէս պարտական է մտածելու այդ մասին:

Սփիւռքահայութիւնը հայրենիքի պահեստի հարստութիւնն է, եթէ սա-կայն մնայ անկորուստ: Անոր ազգային գիմագիծը անաղարտ մնալու ճիգին մէջ կարեւոր բաժին մըն ալ վերապահուած է իրեն:

Գրականութիւնը այն զօրաւոր գոր-

ծօններէն է, որուն շնորհիւ ազգ մը կը պահէ իր գոյութիւնը: Երեւան եթէ կ'ընդունի այս ճշմարտութիւնը, պէտք է աշխատի ուժ տալ Սփիւռքի մէջ հրա-տարակուած կարեւոր գործերու Հա-յաստանի սահմաններէն ներս սպառան: Եթէ միջակ գրական արժէքով հրատա-րակութիւններ տասնեակ հազար օրինակ-ներով սպասում կ'ունենան Հայաստանի մէջ, պատճառ մը չկայ, որ համաստի-ճան գործեր եւ տեւի որակեալները, լոյս տեսած Սփիւռքի մէջ, փոքր քանա-կութեամբ, մնան փոշիներու տակ եւ ա-նոնց հեղինակները դառնացած, լքեն իրենց գրիչը:

Այս առթիւ ուղղադրական հարց մը պիտի ունենայ իր նուրբ իրաւունքները, բայց այդ մասին Սփիւռքէն աւելի Հա-րենիքն է որ պէտք է փնտնէ սրբազրու-թիւն մը:

Նոյն կենտոն հարցը կը ներկայանայ նաեւ Սփիւռքի ընթերցողներուն, որոնց մեծագոյն մասը չեն ուզեր սխալադրու-թիւններով եւ օտարամուտ բառերով ո-ղողուած գիրքեր կարդալ, ու բացատու-թեամբ գրասէրներու եւ գրողներու, Ե-րեւան տպագրուած եւ Սփիւռք ճամ-բրուած գիրքերու գէղեր կը մնան գրա-դարանի անկիւնները յաճախ, առանց բացուելու:

Հայ գրականութեան ապագան կը պահանջէ փոխադարձ հասկացողու-թեամբ հարթումը կարգ մը հարցերու, որոնք կը շարունակեն մնալ անլոյծ ու կը խոցեն ստեղծագործական մեր ճի-գերը:

Ժամանակ է քննութեան առնելու այս եւ նման հարցեր, չէզոքացնելու հա-մար մեր մշակոյթին սպառնացող կարգ մը վտանգներ, որոնք տարբեր ուղիով մը կը սպառնան Սփիւռքի մէջ ազգային գիմագրական մեր պայքարը տկարացնե-լու:

Հերթական հարց մը ահա, որուն մասին կ'արժէ մտածել հաւաքաբար ու հանդամտօրէն այլեւս:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԵԼԼՕ



Գ.

ՍԵՓԱՎԱՆ ՊԱՏՐԱՆՔԸ ԿԵՐՏԵԼ ՈՒ ԱԳՐԻՎ

«ՀԱՆՏԻ ԶՈՐՐՈՐԳ»

Վարպայրի բացումին զղեակի մը սրահն ենք, ուր հաւաքուած են 11-րդ դարու ասպետներու հաղուստներով մարդիկ, եւ քաներորդ դարու հաղուստներով մէկը: Իրենց խօսակցութենէն յայտնի կ'ըլլայ, թէ զղեակին մէջ կ'ապրի մէկը, որ խենթեցած է տարիներ առաջ, քան տարի առաջ, որսորդութեան մը ընթացքին, արկածով միջին ինտելի դիտուն վրայ. եւ այդ արկածէն ետք ահա, ինքզինք կը կարծէ Հանրի Գ. Գերմանիոյ այն թագաւորը, որ Գրիգորիոս 7-րդ Պապին հետ մէկի մէջ էր, անոր կողմէ բանադրուեցաւ եւ, ի վերջոյ, ստիպուեցաւ տեղի տալ, Գանոսայի մէջ ծունկի գալ Պապին առջեւ, 1077 թուին:

Իր ազգականները, զղեակին տէրը, որ վերջերս մահացած քոյրն է, ու անոր տղան, ունեւոր են, եւ չեն փափաքած իրենց ազգականը յիմարանոց զնել. պահած են զայն իր խաբկանքին մէջ, ստեղծելով իր չորս կողմը, իր պատրանքին համապատասխան միջավայր՝ զղեակի, ասպետներ, ծառաներ, բոլորն ալ 11-րդ դարու տարազնեւորով, որոնք հրահանգ ունին չհակառակելու երբեք մեծանուն խենթին, դոհացում տալու իր կարիքներուն, եւ խաղալու իրենց զերերը կատարելապէս, որպէս այդ դարուն մէջ ապրողներ: Մինչեւ անգամ թեթեւաբարոյ կիներ, որ զղեակ թերուած են երբեմն, ներկայացուած են ենթա-

կային՝ հազուաժամ որպէս այսինչ մարգէրուհին, եւայլն։
 Քսան տարի առաջ, արկածի ժամանակ, ինք ծպտը-
 ւած է եղած որպէս Հանրի Գ.։ Դիմակաւորուած, տւելի
 ճիշդ Հին օրերը ոգեկոչելու համար զգեստաւորուած ու
 որսորդութեան մը մասնակցած ասան է, որ ինք ինկած է
 ձիւն։ Շարաթներով սերտած է պատմութիւնը, Հանրի
 Չորրորդի փկարը, այդ օրը իր դերը լաւ խաղալու հա-
 մար. ու արկածէն ետք, զանկէն ստացած հարուածին իր-
 րեւ արդիւնք, մնացած է իրեն համար 11-րդ դարը միայն,
 եւ իր սորված պատմութեան անձնաւորութիւնները։

Արկածէն առաջ, զստած է իր արտին սիրած աղջի-
 կը, որ զիտցած է իր սիրոյ մասին, բայց որ լուրջի չէ ա-
 սած պինք, չէ ընդառաջած։ Ունեցած է նաեւ իր մրցորդը։
 Թէ՛ մէկը, եւ Թէ՛ միւսը ողջ են, Թէ՛ն իրենց աստիճը ա-
 ռած անշուշտ։ Կինը ամուսնացած է, այրի մնացած, ու
 աղջիկ մը ունի, որ իր երիտասարդութիւնը կը յիշեցնէ։
 Բոլորն ալ զղեակ եկած են, եւ իրենց հետ նոր բժիշկ մը
 բերած են, անգամ մը եւս քննել տալու համար հիւանդը,
 անուղղակի միջոցներով։ Որպէս այդ, ուղղակի չեն կրնար
 ներկայանալ հիւանդին, ատոր համար բոլորն ալ կը
 հազուին 11-րդ դարու զգեստներ, կը ծպտուին որպէս
 այսինչ կղերականը, Տօննա Մաթիլտա, եւայլն։

Տեսակցութենէն ետք, երբ Հանրի Գ. ակնարկու-
 թիւններ կ'ընէ, կը թուի, թէ անցեալին կ'երթան
 եւ երկիմաստ են. կնոջ կը թուի նոյնիսկ, թէ Հան-
 րի Գ. խենթ չէ, գիտէ թէ ինչ կ'ըսէ։ Միանները այդ
 կարծիքին չեն։ Իրականութիւնը կ'իմանանք շուտով Հան-
 րի Գ. ի բերնէն իսկ. այո՛, ինք լաւացած է, վաղուց, եւ
 կը շարունակէ իր դերը խաղալ, որովհետեւ կեանքին վե-
 րադառնալ չի կրնար։ Կորսուած ժամանակաշրջան մը կայ,
 զոր լեցնել չի կրնար. ամէնքը իրեն պիտի ծօտենան Հան-
 րի Գ. ըսելով, որպէս խենթ։ Այսինքն, պատահաբար, որ-
 պէս ծպտում դրուած զիմակը եւ դերը նոյնացած են իր
 կեանքին հետ, ու քարացուցած են զինք 11-րդ դարուն մէջ։

Երբ ազգականները եւս տեղեակ կ'ըլլան իր առող-
 չացած ըլլալուն, Հին Հակոսակութեանց ու նախնձի
 կրկնութիւն մը տեղի կ'ունենայ ներկային մէջ։ Տօննա
 Մաթիլտայի սիրահարը, որ Հին մրցակիցն է, Հանրի Գ. ի
 մին դադանորէն խթանողը եղած է, եւ արկածին բուն պա-
 տասխանատուն է։ Հանրի Չորրորդ, բոլորին ներկայու-
 թեան այս մասին խօսելէ ետք, վիճարանութիւնը տաքնա-
 լէ ետք, յանկարծ կը իլէ իր կողքին կանգնած ազնուակա-
 նի դեր խաղացող ու իրեն ծառայողներէն մէկուն սուրբ,
 կը խրէ իր Հին մրցակիցին փորը, որ կը մեռնի։

Հանրի Չորրորդ կը քաշուի խենթութեան ապաս-
 տանարանը։ Այս անգամ ընդմիջու։

Ոչ մէկ բացատրութիւն պիտի չկարենայ սպասել այս

տուամին հարստութիւնը, որ, ինչպէս ըսած է ջննադատ մը, զտասը տուամ կը պարունակէ»:

Այս թատերակին մէջ, Փիբանտէլլօ, իրեն յատուկ միջոցներով, վերագրած է բան մը Շէյքսպիրեան մեծութիւնէն, վեհութիւնէն: Զօրաւոր ձեւով ներկայ է այստեղ մարդկայինը. լուռ տառապանք մը տեւական ընթացքէ մէջ է: Իսկ բեմէն սրահ մտածումները չէ որ կ'ոնցնին, այլ դրացումները: Խորապէս դրացուածն է միայն, որ խորունկ մտածողութեան կը վերածուի ու կը մնայ:

Փիբանտէլլոյի Հանրի Գ-ը, անգամ մը կարգալէ ետք, կամ տեսնելէ ետք, անջնջելի կը մնայ, կ'ապրի յիշողութեանց մէջ, եւ կը սպահնէ առանձին տեղ մը, առանձին դիրք մը աշխարհի ամենաարժէքաւոր թատերակներու կողքին:

Փիբանտէլլեան թատրոնը ծիծաղի եւ դուրսի միջեւ կառուցուած թատրոն մըն է: Ծիծաղելին կը տիրապետէ երբեմն, եւ կեանքի անհեթեթութիւնները կը յայտնաբերին. երբեմն ալ տառապանքն ու ցուր կ'ըլլան այնքա՛ն սուր, որ ծիծաղը չի կրնար ծածկել զանոնք: Կը դրացուի մարդկային էակի մը ապրիլը, կը լսուի ցնցող ու ցաւալին կանչ մը. ճիշ մը կ'անցնի բեմէն սրահ ու հանդիսատեսը կ'առնէ իր ճանկին մէջ. ճիշ մը բարկութեան, ցուի կամ խելագարութեան: Այն ատեն, բեմադրելին ճարպիկութիւնն ու ճարտարութիւնը տեղի կու տան թատերագրին ստջեւ, եւ կ'ունենանք իրական դրուի-դործոցները փիբանտէլլեան թատրոնին, որոնք դրուի-դործոցներ են բոլոր ժամանակներու թատրոնին՝ «Կեանքը որ տուի էնզի», «Այս գիշը անպատրաստից կը խաղանք», «Համրի Գ.» եւ «Զգեստաւարի վանկ»՝ որոնք մերկ են»:

«ԶԻՆՍՏԱՆՈՐՆԷ, ԱՆՈՆԻՔ՝ ՈՐՈՆԻՔ ՄԵՐԿ ԾՆ»

Մղիչ դրդապատճառներու, մտադրութեանց, նպատակներու, արամարանութեան շնթարկուող ցանկութիւններու թնճուկ մարդկային հողիին ճարտար պեղումն է Փիբանտէլլոյի այս թատերակը, որ կ'աւարտի մարդկային հզօր, խորապէս յուզիչ ու վարակիչ ճիշով մը:

Իրսիլիա Տրէյ, Իզմիթի իտալական հիւպատոսի տան ընըրսը եղած է, անոնց աղջնակը խնամելու եւ զբաղեցնելու պարտականութեամբ: Նշանուած է պաշտօնով Իզմիթ գանուող իտալացի նաւային սպայի մը հետ: Նշանածը, Փրանչօ Լասփիկա, պաշտօնի աւարտումին կը վերադառնայ Հոսմ եւ կը խզէ իրենց կապերը, կը լքէ էրսիլիան:

Էրսիլիայի խնամքին յանձնուած երեսան պատշաճ մէն կ'իյնայ ու կը մեռնի: Էրսիլիա կը վճռուի հիւպատոսի տունէն. կը վերադառնայ Հոսմ, կը փնտռէ իր նշանածը, կը տեղեկանայ, թէ ան ուրիշի մը հետ նշանուած

է: Փողոցներուն մէջ յուսահատ թափառումի երեկոյէ մը հոգ, կ'որոշէ անձնասպան ըլլալ, կը դրէ իր յուսահատութեան մասին, իր արարքի պատճառներուն մասին, եւ դեռահաստեղով ինքզինք կը թունաւորէ:

Էրտիլիս չի յաջողիր իր Ծրագրին մէջ: Աինք հիւանդանոց կը փոխադրեն, կը փրկուի մահէն, թէեւ կը մնայ ուժասպառ վիճակի մէջ: Իր եւ անձնասպանութեան պատճառներուն մասին թերթերը կը գրեն: Համբաւուար, ասբերը աւանդ գրագէտ մը, տեղեկանալով՝ կը վազէ հիւանդանոց, կ'առնէ աղջիկը ու կը բերէ իր բնակարանը, ամէն տեսակի ինամք տալու պատրաստ: Գրագէտը վէպ մը գրել կը մտածէ Էրտիլիայի մասին, սակայն կարծես թէ դուրս կայ իր արարքին մէջ, եւ, լուտով՝ նաեւ որոշ չափով սէր...:

Փրանքօ, թերթերէն իմանալով Էրտիլիայի անձնասպանութեան փորձը, կը վազէ հիւանդանոց, կը տեղեկանայ Էրտիլիայի ուր փոխադրուած ըլլալը, կը ներկայանայ տնոր, իրենց անցեալ կապը վերահաստատելու փափաքով, ամուսնութեան առաջարկով, խղճի խայթով ու զղջումով: Փրանքօյի նոր նշանածը, թերթերէն իմանալով զէպը, նշանը եւ կ'ընէ:

Էրտիլիա կը մերժէ առաջարկը. զու պատճառովդ չէ որ անձնասպանութեան մղուեցայ, կ'ընէ, թէեւ այդպէս գրած էի: Կը մերժէ ընդունիլ կատարուած առաջարկը նաեւ տնոր համար, որ այլեւ նոյնը չի զգար ինքզինքը ու դիմացինը: Յուսահատութեան զիշերը, անձնասպանութեան փորձէն առաջ, ինքզինք յանձնած է փողոցէն անցնող պատահական անցորդի մը. որով այլեւ արժանի չի համարեր ինքզինք նման առաջարկ մը ընդունելու:

Հիւպատոս Կրօթթի եւս կ'այցելէ Էրտիլիային, ու իրենց խօսակցութենէն երեւան կու գայ, թէ Իգմիրի մէջ, Փրանքօյի մեկնումէն ետք, երկուքը սիրային յարաբերութեանց մէջ եղած են, թէեւ հիմա, իրենցմէ ամէն մէկը կ'աշխատի դիմացինին վրայ նետել «յանցանքը», նախաձեռնութեան պատասխանատուութիւնը: Երեւան կ'իյլէ նաեւ, թէ աղջնակին արկածը, պատշգամէն վար իյնալն ու մեռնիլը պատահած է ո՛ր յս պահուն, երբ իրենք, Էրտիլիայի սենեակը, իրենց մեղաւոր յարաբերութեան մէջ են, եւ երեսխան, այդ պատճառով ալ անտեսուած, մինակ ձգուած է եւ արկածի գոհ դացած:

Հետզհետէ Էրտիլիայի անձնասպանութեան պատճառներուն յուզական, վիպապաշտ բաժինը կը փլուրթ. իր, եւ իր հետ յարաբերութեան մէջ եղած անձնաւորութեանց արտաքին դիմակը կը պատռուի, երեւան կու գայ տարբեր, հասարակ, մինչեւ իսկ դուրսիկ դիմադիժը բուրբին: Ոչ մէկուն դրդապատճառը մաքուր է, ոչ մէկուն արարքը բարձրորակ է, ոչ իսկ վիպասան հիւրընկալին:

Բոլորը կը յարձակին Էրտիլիայի վրայ, կը մեղա-

զրհն, կը վերաւորեն. ինչո՞ւ սքօղած է անձնասպանութեան զրգապատճառը, տարբեր գոյնի տակ ներկայացուցած է, ինչո՞ւ ստած է, ինչո՞ւ, ինչո՞ւ...:

«... Ամէնքը, ամէնքը կ'ուզեն լուս երևալ, ազուար ու արժանաւոր երեսալ: Որքան ըլլանք անլի... որքան անլի... (Յայտնորէն էրսիլիա կը դժուարանայ «տղեղ» բառը դործածելու. այնքան պժգանք կը դաշ, ու դուք միտմանակ, որ չ'արտասաներ բառը) այնքան անլի կ'ուզենք մենք զմեզ գեղեցկացնել: Աստուած իմ... այո՛, կ'ուզենք զգեստաւորուիլ քիչ մը վայելուչ զգեստներով. այո է ահա: Ոչ մէկ վայելուչ հանդերձանք ունէի, մերկ էի քու դիմացդ. սակայն տեղեկացայ, քէ դուն եւս այլեւս չուներիս սպայի փայլուն համազգեստդ: Ինչգիմքս գտայ փողոցը, գրկուած ամէն ինչէ, կորսնցուցած ամէն ինչ, եւ քիչ մը անլի եւս ցեխտուելու համար... Աստուած իմ, ի՞նչ զարհուրանք է, եւ ի՞նչ պժգանք...:

«Այն ատեն, ուզեցի գէթ մտեսանն համար զգեստաւորուիլ քիչ մը, ազուար ու վայելուչ հանդերձանքով. ահա թէ ինչու ստեցի: Ատոր համար էր. կ'երդնուի:

«Ամբողջ կեանքս եւ չունեցայ եւ ոչ մէկ ազուար հագուստ, որ քսյլ տար ինձի ներկայացալի ըլլալ... որ պատառ-պատառ եղած չըլլար բոլոր շուներէն... բոլոր այն շուներէն, որոնք երբեք չ'զարբեցան վրաս նետուելէ, ամէն մէկ փողոցի անկիւն... Ոչ մէկ հագուստ, որ կեդտով քաթաւուած չըլլար, ամենատարին, ամենավատ քշուտուքեանց... Ուզեցի ինքս ինձ համար պատրաստել հաս մը - իրապէս ազուար հաս մը, մտեսանն համար, ամէնէն ազուարը - այն՝ որ երազս եղած էր այնտեղ... եւ որ անմիջապէս պատուած էր՝ այն ալ ... Նշանածի մը հանդերձանք... Սակայն մեռնելու համար էր, այդ հագուստով մեռնելու համար էր. ուրիշ ոչինչ... ձգելով ետին քիչ մը օփստսանք, բոլորին մօտ, ուրիշ ոչինչ: Օ... ահա, ոչ, ոչ ու ոչ, ոչ իսկ այդ կրցայ պահել: Նշանածի հագուստներս ալ պատուեցիմ, քաշեցիմ, հանեցիմ վրայէս, ինչպէս միւսները: Ոչ իսկ այդ... Մեռնիլ մերկ, արհամարհուած, նախատուած, առանց որեւէ ծածկոյթի: Գո՞հ էք հիմա»:

էրսիլիա Տրէյի այս վերջին բացատրութեամբ կը բացուի իր ստեղծած գաղտնի զրգապատճառը... եւ, հոր, խորունկ աշխարհ մը, մարդկային խոր զգայնութիւններու, վարակիչ ու ջերմացնող:

Իրացնելու համար պատկերը, ըսենք, թէ էրսիլիա այդ բացատրութիւնը կու տայ իր մահուան սնարին ըով հաւաքուածներուն, որովհետեւ յաջողած է վերկայցնել իր վրայ գոյութիւն ունեցող դուրդուրտ հսկողութիւնը, եւ կրկին անդամ թոյն առնել, աւարտելու համար իր կեանքը:

զը, որ այդ բուրբէն հոգ շարունակել չէր կրնար: Իր բարատութիւնը մարդոց հետ, մարդոց համար, աւարտած է.

«... Հիմա գացե՛ք... դռ՛րս ելե՛ք. ձգեցե՛ք որ մեանիմ լռութեան մէջ, ամբողջովիմ մերկացած: Գացե՛ք. հիմա այլևս իրաւունք ունիմ կարծեմ ոչ ոքի երեսը չտեսնելու, ոչ ոքի ձայնը չլսելու: Գացե՛ք, գացե՛ք քեզ, դու՛մ կնոջդ, դու՛մ նշանածիդ, որ այն որ մեաւ... մեաւ... մերկ»:

Աւարտած է թատերակը, եւ մինչ, մեր դիմաց, միւսները կը մնան մերկացած իրենց մինչ այդ կրած ու զիրենք ներկայանալի դարձնող զգեստներէն, իրաւիկա Տրէյ կը զգեստաւորուի աճէնէն վայելուչովը հանդերձանքներուն, արուեստագէտին պատրաստած մարդկայինի, խորազոյն ուկուճեմերէ եկող անկեղծութեան, ու յաւիտենապէս վարակել տպումներու զգեստներով:

Միեւնոյն մարդուն մէջ կեզրոնացած բազմաթիւ անձնաւորութեանց, կամ բազմաթիւ երեսներ ունեցող ճշմարտութեանց տեսութիւնը, կամ անհատի ուրիշներուն հետ ամբողջական հաղորդակցութեան անկարելիութեան ըմբռնումը, այսօր ընդունուած ճշմարտութիւններ դարձած են: Գիտութիւնը, հետազոյն, կու զար հաստատելու Փիրանտէլլոյի խորաթափանց նայուածքին գոտծները, եւ կ'երթար աւելի հեռուններն ալ, իր հոգեվերլուծական ուսումնասիրութիւններով: Իրմով կը սկսի սակայն մարդկային հոգեկան աշխարհի բազմերեսութեան, բազմերանգութեան, ճշմարտին ու պատրանքին նոյնացման, իրականութեան եւ անիրականին յարաբերականութեան, արուեստով, վարակող շեմութեամբ արասայտութիւնը, որ երկու մեծ պատերազմներուն մէջ տարածուող ժամանակաշրջանին, երկրէ երկիր անցնելով, քոսնըհինգէ աւելի լիզուններու թարգմանելով, հարիւրաւոր անգամներ ներկայացուելով, պիտի խորհէր հոգիները, պիտի ազդէր բազմաթիւ այլ արուեստագէտներու մտածողութեան եւ արտայայտութեանց վրայ:

Առանց Փիրանտէլլոյի՝ Ժան Անույ իր «Արտայոյր» նոյն ձեւով պիտի չգրէր, ոչ ալ Պրէխթ իր «Կովկասեան կալիմէ շրջանակը» գործին յառաջաբանը: «Վեց անձնաւորութիւններ, որոնք հեղինակ մը կը փնտռեն» թատերակին մէջ նախասերմերը կան Պրէխթի հետաւորացման տեսութեան: Փիրանտէլլոյի զազափարներուն մէջ Ժան Փուլ Մարթրի մտածողութեան սերմերը կարելի է տեսնել հեռուն, հորիզոնին վրայ: Բառերը, բառերու մասին իր զգայնութիւնները էօժէն իոնեսքոն կը նախադժեն, կը պատրաստեն արդէն:

«Փիրամալիոն կը համարեմ մեր ժամանակաշրջանի ամենամեծ գրագէտներէն մին, - կ'ըսէ Անարէ Մօրուա, - մէկը անոնցմէ, որոնք Պերկասի, Տրեոյսի եւ Փրուոքի

հետ, ամենամեծ նպատակը բերած են արդի մարդու աշխարհի ըմբռնումը կառուցելուն:

Իբր մտածողութիւնը երբ ծայրայեղութեան տարուի, կը ստացուի արդի անհեթեթ ու ծայրայեղ ըմբռնողութիւնը, որ հասած է հետեւեալ մտածողութեան, եւրոպայի եւ Ամերիկայի զբաղեցնող տմանց մաս. «Ձեռք զիտեր ինչո՞ւ եկած ենք, ուրկէ՞ եկած ենք, ո՞ւր կ'երթանք... Կըրնանք միայն ուսերնիս թօթուել. ա՛յլ չքան: Որով, կ'ըսեն, արդի մարդկութեան մնացած է երեք Աստուած միայն. խաղը, կիներ եւ հանոյքի կեանք մը:

Կեանքի ունայնութեան կամ անհեթեթութեան ըմբռնումը. մեր բազմաթիւ դիմադժերու զաղանի զոյութեան, զաղտնորէն պարտադրանքին ըմբռնողութիւնը. մեր ամբողջ էութեան տեւաբար փոփոխութեան մէջ ըլլալու անզբաղարժուումը պոյման չէ որ առաջնորդէ մարդը միմիայն ուսերը թօթուելու, եւ անհեթեթին դիմաց գինաթափ՝ խամսիկի իր հանգամանքէն պարտուած, զանալու բուսական կամ կենդանական արբած մը: Եթէ մեծ թիւ մը կը կազմեն անոնք՝ որ յարափոփոխ են, եթէ խոշոր մաս մը մեզմէ հեղուկ է, փոփոխական, զարմանալի խոշոր մաս մըն ալ հաստատուն է: Բազմաթիւ են անոնք, որ կեանքի անծանօթին, կամ անհեթեթութեան դիմաց, շատ աւելի բան մը կ'ընեն, ջան ուսերնին վեր առնելը: Բազմաթիւ են անոնք, որ անձնասպան չեն ըլլար, եւ ոչ ալ կը խենթենան: Օրինակ մըն է ինքը, Փիլիսոսֆիան, իր կեանքով. պործնականին մէջ մէկն էր անոնցմէ. կեանքի ամենազոտուարին պայմաններուն մէջ, կնոջ խելազարութեան հետ տասնըութ տարի կենակցեցաւ զուժի ու սիրոյ զգացումը յաղթանակել տալով ու անձնասպան չեղաւ, կամ մովին խենթութիւնը շնորհեց:

ԿԱՄՈՎԻՆ ԽԵՆԹՈՒԹԻՒՆԸ ՁԸՆՏՐԵՑ ԱՐԴԵՑՔ...

Արուեստի աշխարհը կամովին ընդունուած խենթութեան աշխարհ մը չէ՞ արդեօք, շատ աւելի հարուստ, շատ աւելի ազատ աշխարհ մը, ջան իրական խենթութեան աշխարհը, եւ շատ աւելի վերադարձող կեանքին, վերածուող կեանքի: Արուեստը չէ, որ կեանքը կ'ընդօրինակէ, ալ կեանքն է, որ արուեստը կ'ընդօրինակէ, յանախ:

«Համրի Ձորորդի» մէջ, տեղ մը, Պէլքրոփ խօսեցող Հանրի Ձորորդի մասին, եւ նկարագրելով անոր առողջ, երիտասարդ ժամանակաշրջանը, կ'ըսէ բժիշկին.

Պէլքրոֆ՝ Յամախ կը խանդավառուէր, կը բարբաբէր: Սակայն, իսկոյն կ'անգղադառնար, կը տեսներ իր խանդավառուած ըլլալը: Գիտակցելով այս իրազուրբեան, կը սկսէր իր խանդավառութիւնը համարիլ ներկայացում մը: Իր ամենամեծիբական շարժումներուն համար անգամ

նոյն ապրումը կ'անենար: Վստահ եմ որ կը տառապէր տա-
կէ, կը կատարէր ինքն իր դէմ, կատաղութեամ ամենածիծա-
ղելի քրիզները կ'անենար:

Կը տառապէր, որովհետեւ այդ բազմակամ պայծա-
րասեռութիւնը. նոյն բազմիմ իսկ երկու անձնաւորութեանց
վերածուիլն ու զգալը, անդրադառնալը այդ վերածումին,
զինքն կը հեռացնէր իր ամենամտախնայ զգացումներէն,
զանոնք վերածելով տեսակ մը իրեն օտար զգացումներու...
Իր զգացումները իրեն կը բուռն մ'չ թէ կեղծ, քանի որ
անկեղծ էին անոնք, այլ բան մը՝ որուն պէտք էր իսկոյն
իմաստ մը տալ, արժէքաւորում մը տալ, քանի որ անկեղծ
ապրումի շերտութիւնը փոխած էր անոնցմէ... Ինչպէս
բացատրեմ, թէ ի՞նչ ձեւի արժէքաւորում կը փնտռէր, ք-
աննք մտաւորական աֆթի մը արժէքաւորումը կ'ուզէր տալ
անոնց:

Այն տունն, կը սկսէր անցատրաստից հեռել, չա-
փագանցել. շնչտաւորել, ինքզինքն կ'ըզեւորէր անլի ու ա-
նլի. պարզապէս քմեղանալու համար ինքզինքն, եւ այլևս
չտեսնելու համար ինքզինքն... այդ պատճառով էր որ յա-
նախ կը բուռն անկայուն, քեքեւամիտ, եւ ըսեմք բառը՝
աչղակի ծիծաղելի»:

*Պէշքըտի բերնին մէջ դրուած այս բառերով, Փի-
րանտելլո ինքզինքն է, որ կը ներկայացնէ, կը վերլուծէ:*

*Տեւաբար դժգոհ մակերեսին հասնող իր զգացումնե-
րէն, տեւաբար փնտառուքի մէջ միշտ ներքը մնացող իր ե-
տերուն, տեւաբար կասկածելով իր արտաքին դիմազծի ի-
րականութեան համապատասխան ըլլալէն, տեւաբար մտա-
վախութեան մէջ, թէ իր արտայայտած ապրումները կրնան
իրենք ալ դիմակ մը ըլլալ, փնտառած է արտայայտութեան
ձեւ մը, միջոց մը, ուր կարելի ըլլայ ցոյց տալ հակասական
երեսները մարդկային ներաշխարհին ու նաեւ արտաքին
արտայայտութեանց, առանց սակայն որ այդ ցուցահանու-
մը ինքն ալ իր կարգին ըլլայ մէկ մասը փոփոխական կեան-
քին, անհետ կորսուող ու անհեթեթ կեանքին:*

*Միակ վայրը, միակ կարելիութիւնը, այդ ցանկու-
թիւնը իրականացնելու համար, արուեստի մարզն է, ար-
ւեստն է: Հոն կարելի է ազատութիւն տալ ներքին բոլոր
փոթորկումներուն, հերքումներուն, հակասութիւններուն,
պայմանով որ անկեղծ ըլլանք մենք մեզի հետ, այսինքն
պայմանով որ հիմնուած ըլլանք մեր ներքին համալսփու-
թեան վրայ:*

*Հոն կարելի է ամէն բոլոր հնարել, ստեղծագործել,
երեւակայականէն դուրս բերել տարրեր, դէպքեր, անձնա-
ւորութիւններ, որոնք ծնունդ երեւակայութեան՝ չեն դադ-
րիլ մաս կազմելէ իրականութեան (երեւակայողը ինքը
իրականութիւն մը չէ՞, իր երեւակայութիւնն ալ իրակա-
նութեան մաս չի՞ կազմեր, իր երեւակայածը իր ներքին
կարողական ու կարելի վիճակները չի՞ն արգէն) եւ, յաճախ,*

կը շփոթուին իրականութեան հետ, կը դառնան իրական, աւելի՛ իրական, քան մեզի ծանօթ թանձրացեալ իրականութիւնը:

Հոն կարելի է, անպատրաստից հնարել, անպատրաստից ներկայացնել, առանց կանխորոգ, դիտումնաւոր մտածողութեան մը. ներքին մղումներու, ներքին պարտմոհներու ինքնակրօնական մէջ կարելի է ստեղծագործել, կեանքի բերել, անձնաւորութիւններ, մտածողութիւններ, պարտմոհներ, մինչեւ անգամ հակասական, հակասականութիւնը ցուցահանուած ձեւի տակ, յարաբերականութիւնը ընդգծուած, ազատ, ազատ... ու մարդիկ պիտի տեսնեն այնտեղ կեանքը այնպէս, ինչպէս կը հոսի մեր մէջ, իր բոլոր նրբոնրոյքով...:

«Այս գիշեր անպատրաստից կը խաղանք թատերակը, արուեստագէտի ստեղծագործութեան այս ընթացքը կ'ընդգրծէ. արուեստի երեւակայականին, եւ իրական, թանձրացեալ իրականութեան նոյնացումը կը ցուցահանէ, մարդկային այլ հզօր ճիշի մը ընդմէջէն»:

«ԱՅՍ ԳԻՇԵՐ ԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԿԸ ԽԱՂԱՆՔ»

Թատերակին նիւթը, կառուցումը այնպէս են, որ հանդիսականները սպաւորութիւնը կը ստանան, թէ զբրուած թատերակ մը չկայ, թէ դերասանները անպատրաստից կը խաղան, փիրանտէլլեան նիւթ մը առած, եւ իրենց կողմէ ստեղծագործելով, պարելով արուած նիւթին կեանքը:

Բեմադրիչ-դերասան մը, հասարակութեան կը ներկայանայ իր սեփական անունով, կը նկարագրէ, թէ ինչ է նիւթը, ինչեր պիտի պատահին. կը կանչէ դերասանները, իրենց իրական անուններով, եւ կը ներկայացնէ հասարակութեան, յայտնելով նաեւ, թէ նիւթին ո՞ր անձնաւորութիւնը ստեղծագործելը իրեն յանձնուած է:

Դերասանները, սկիզբէն իսկ, իրենց խաղով ու զործածած նախադասութիւններով, կ'առաջացնեն շփոթ մը հանդիսատեսներուն մէջ: Իրար կը խառնուին «Իներ» եղող մասերը եւ «Դերասան» այսինչեանին արտայայտութիւնները:

Բնականաբար դերասանները եւ ոչ մէկ բառ կ'արտասանեն, որ նախապէս գրուած չլլայ Փիրանտէլլոյի թատերակին մէջ: Սակայն այս կրկնակ ընթացքը, իրար հետ շփոթուելով, խառնուելով կատարուած առաջխաղացումն է, որ կը հետապնդէ Փիրանտէլլո, այդ իսկ է թատերակին նիւթը, նպատակը:

Պատմութիւնը, կամ նիւթը, որուն շուրջ դերասանները պիտի զանպատրաստից խաղան, հետեւեալն է. իսական կղզիէ մը մէջ, կղզիէ բնակիչներէն կէս մը հալածուած ընտանիք մը կ'ապրի՝ հայրը, մայրը, երեք աղջիկներ:

Յօրինողներուն շորս կողմը կը զառնան շորս օգանաւային սպաներ :

Կղզիի բնակիչները կ'ապրին փակ կեանք մը : Մայր ու աղջիկներ կ'երազեն քաղաքի զուարթ, շէն կեանքը :

Հայրը դրեթէ ամէն գիշեր կ'երթայ կղզիի սրճարանը, ուր կին մը տխուր բաներ կ'երպէ, եւ կ'արտասուէ երգած ատեն : Հայրը, յուզուած, կ'ելլէ տեղէն եւ երգչուհին արցունքները կը սրբէ, ջղայնացնելով ե՛ւ երգչուհին, ե՛ւ յաճարողները :

Սպաներէն մին, Վերի, լուրջի կ'ուզէ տանել իրենց յարաբերութիւնը աղջիկներուն հետ, եւ կը կարծէ սիրուած զարուած ըլլալ Միմիին, որ իրօք սիրահարուած է Վերիին, եւ ոմէն ինչ կը գոհ է անոր : Հետագային, ամուսնանալէ ետք Վերիի հետ, Միմի յանձն կ'առնէ մինչեւ անգամ բանտարկուած կեանք մը անցընել, որպէսզի ամուսնին նախանձը չբարդէ : Ի զուր. ամուսինը կը նախանձի կնոջ երազներուն անգամ :

Կղզիի սրճարանին մէջ, գինովութեան, երգի ու ցաւագին ապրումներու տեսարանի մը ընթացքին, յաճարողները կը դաշունահարեն ծերուկ հայրը : Անկէ ետք, ընտանիքը կը փոխադրուի ցամաքամաս, ուր Միմի կ'ապրի ամուսնին կողմէ բանտարկուած կեանք մը : Անձնագրահանութեան բարձրորակ տեսարանի մը մէջ, Միմի մահը յանձն կ'առնէ, եւ ճիշդ այն պահուն, երբ ամուսինը զոյջացած, համոզուած իր բրածններուն անմարդկային հանգամանքին, կու դայ կինը գուրս հանելու բանտէն, Միմի կը մեռնի :

Միմիի դերը խաղացող դերասանուհին, մահուան տեսարանին, կը մարի, կը մնայ մարած պահ մը, դրեթէ մեռածի նման : Բեմին վրայ շփոթ կ'առաջանայ, նոյնը անշուշտ՝ սրահին մէջ : Կը կարծուի, թէ դերասանուհին իրօք ծանր վիճակի մէջ է :

Ս. արդէն, այս, իրօք մարած է. թէեւ ինքզինք կը վերազանէ քիչ ետք :

Այսպէս, այս թատերակի ընթացքին, կեանքն ու բեմը իրարու կը խառնուին, կը նոյնանան ամէն վայրկեան, եւ անկարելի կը դարձնեն իրականութեան եւ պատրանքին տարբերումը, զանազանումը :

Թատերակի աւարտին, Հինգֆուս, բեմադրիչ-դերուսույցը խօսքը դերասաններուն ուղղելով, կ'ըսէ .

ՀԻՆԻՖՏՈՒՍ — Հիմա եսկցա՞ք, քէ ինչ կը մերկայացրնէք : (Պօքը Հանդիսատեսներուն ուղղելով) Ս. դուք, տիկիներ ու պարոններ, դուք տեսաք գիրքնք, ձեր դիմաց ապրեցան մինչեւ մահ : Իր անձնատրութիւնը ապրելու եամար դերասանը կ'օգտագործէ գրութիւն մը . կրնայ եւ ոչ մէկ գրութիւն ունենալ ի ձեռքիմ . եստատեցիք այս իրադրութիւնը, այս իրիկուծ... Փորձո՞ւ յարողեցաւ : Թատրոմի անձանցը, «Իբր» . առիկա՛ է բնական արուեստը՝ անկախ սիրս բոլոր արուեստներէմ . շօշափելի այնպէ՛ս, ինչ-

պէս կեանքը շաղուած սիրով, իրական սիրով, իրական ուրախութիւններով ու ցաւերով: Արուեստ մը, որ չի ծնիր միւս բոլոր արուեստներու միացումով, ինչպէս ըսուած է իր մասին, բայց որ կ'օգտագործէ զանօնք, սակայն ինքնին զոյութիւն ունի, արուեստ մը, ուր զգայնութիւնները, զգացումները, մտածումները չեն վերածուիր երաժշտութեան, գոյնի, բանաստեղծութեան, այլ կ'առաջացնեն մարդկային էակներ:

ԳՆՐՍԱՍՆՆԵՐ.- Իրենց շունչով, նայուածքով, ժըպիտներով ու արցումներով, սրմով կ'ապրին ու կը մեռնին, ինչպէս մեռնի:

ՀԻՆՔՅՈՒՍ.- Եւ ատոր համար է անշուշտ, որ քատերական արուեստը, միա՛կը՝ որ գործը դուրս կը բերէ իր անխուսափելի անշարժութեան, անխուսափելի առանձնութեան, ամենաազուարճ ու ամենազերգականն է արուեստներուն: Կ'ապրի այնպէ՛ս՝ ինչպէս կեանքը- կը մեռնի՝ ինչպէս կեանքը: Եթէ յամկարծ յարութիւն ասնէին բոլոր կեանքերը, սէրերը, ցաւերը որ բեւ՛ելած են, որ դերասաններ շարունակ ապրած են բեմին վրայ, դարերէ ի վեր... Այդ բոլոր գործերը... Արուեստը այստեղ, ստեղծած է կեանքը: Փաստը տրուեցաւ այս գիշեր: Քիչ մը իրական, անցողակի կեանք ծնաւ այս գիշեր, այս բեմին վրայ, մեր խնդր դերասաններուն ընդմէջէն... Ու հիմա (շէրասաններուն դառնայո՞ղ) վերադարձէ՛ք ձեր կեանքին. (Հասարակութեան) իսկ դուք, մոռցէ՛ք մեզ, քանի որ աստիկա է մեր նախաազիրը»:

«Մոռցէ՛ք մեզքի իր պահանջը ոչ կեղծիք է, ոչ ալ թատերական ձեւ: Մարդուն անձկագին առանձնութիւնը, մշտնջենական փնտառուքը գտնելու ներքը պահուած բան մը, ու քանի կը փնտռէ, քանի կը խորանայ, այնքան ասելի դիտակցումը անհեթեթին ու մենութեան, արուեստագէտը կը հասցնեն ամբողջական մոռացումի ըմբռնողութեան եւ պահանջին»:

Ի՞նչ բանի կառչիլ, ինչո՞ւ կառչիլ, ո՞րն է իրականը, Հչմարիտը- կա՞յ բացարձակ իրականութիւն մը, եւ ո՞վ ենք մենք, ծնունդէն մահուան տարածքին վրայ ապրող, փոփոխող, միշտ տարբեր, ու միշտ նոյնը մնալու յաւակնութեամբ արարածներս, որոնք կը կարծեն, թէ իրենց դեմաց գտնուող դռնէ մըն է որ դուրս պիտի ելլեն կեանքէն, մինչդեռ իրենց ետին գտնուող դռնէ մըն է, ծնած օրէն սկզբած են դուրս գալ ամէն օր, անտեղիտալիօրէն, մաս առ մաս, մինչեւ վերջին մասնիկը հալի»:

Իր կտակին մէջ Փիրանտէլլօ կը խնդրէր՝

«Թող լուսիւնը պարուրէ մախ: Կը խնդրեմ բարեկամներէս եւ քշմամիներէս, ոչ միայն չխօսիլ այդ մասին բերքերուն մէջ, այլ նաեւ ակնարկութիւն մը իսկ չընել»:

«Երբ մեռնիմ, թող չհագուեցնեն զիս, թող փաթթեն պատանի մը մէջ. ու թող ծաղիկներ չըլլան անկողնիս վրայ, ոչ ալ սեմեակիս մէջ. ոչ ալ վառուած մտներ...» :

«Թող փոխադրեն զիս ազգատի կառքի մը մէջ : Մե՛րկ : Եւ թող ոչ ոք ընկերամայ գիակիս, ոչ ազգականներ, ոչ բարեկամ : կառքը, ձիւն ու կառապանը... ու կը բաւէ :

«Թող այլեւ մարմինս, եւ մոխիրները թող ցրուեն հովերուն : Որովհետեւ չեմ ուզեր իմձմէ բամ մը մնայ, ոչ իսկ մոխիրները : Սակայն. եթէ այս պահանջս կարելի չըլլայ իրականացնել, այդ պարագային, մոխիրները պարունակող սափորը թող տարուի Սիկիլիա, եւ թող բանտարկը ի կողմն ժայռի մը մէջ, Ակրիկանթէի լեռներում մէջ, ուր ծնած եմ» :

Այս վերջին փափաքը յարգուեցաւ, եւ ծաղկած նշաններու տակ կը հանգչի իր մարմնին մնացորդը :

Իսկ այն՝ որ մնայուն էր, հողին ու միտքը, սիրտը, կը հանգչին իր գործերուն մէջ, որոնք երբ կը բանանք, ունկնդիր կ'ըլլանք մարդկային անձկութեան, ցաւի, գուժի, դեղեցիորէն ապրելու ցանկութեան հզօր ճիշտ մը, որ արուստի ճամբով զինք կը տանի անմահութեան :

(Շար. 4 եւ վերջ)

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

Գրել սկսած է 1943-ին: Ասորազրած է նախ բանաստեղծութիւններ եւ ապա իր ուժերը ամբողջութեամբ նուիրած է քննադատական եւ ուսումնասիրական աշխատանքներու:

Էնծ ծածկանունով ուշագրաւ յօդուածներ ունի «Հայրենիք» ամսագրի 1950-56 տարիներ շրջաններու թիւերուն մէջ:

Պ ծուալուն մենագրութիւններն ու ուսումնասիրութիւնները երեւցած են «Բողոք»-ի մէջ:



ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ

Ա.

Այս ուսումնասիրութիւնը կարող էր գրուել եւ մէկ տարի առաջ, երբ Երևանում հազար օրինակ տպագրանկով արդէն ըսյա էր տեսել Ասատուր Մնացականեանի «ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԵՆԱՐՀԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԵՌՈՒՋԸ» խորագրով ծանրակշիւ մենագրութիւնը: Բայց յօդուածս այն դէպքում իր բնոյթով ու պարունակութեամբ հաղիւ թէ ասարբերուէր սովորական գրախօսականից: Մինչդեռ Մնացականեանի գրքի ժառանգական շատ եւ արժանաւայելի գրախօսականները ժամանակին արդէն գրուել են: Դժուար է ցոյց տալ մի այլ հրատարակութիւն, որ նրա նման միահամուռ եւ ջերմ գնահատանքի արժանացած լինէր: Այնպէս որ մէկ-երկու գրախօսական աւելի կամ պակաս՝ այ-

լիւս էական նշանակութիւն չունի: Գրքի աւերնութեամբ ուրիշ հարցեր են առաջ գալիս, որոնց քննութեամբ էլ պիտի գրուուենք այստեղ:

Մեծ Եղեռնի հետեւանքով Հայաստանի եւ Հայութեան համար ստեղծուած քաղաքական աննպաստ պայմանները շահատակութիւնների նոր դաշտ են բացել թուրքերի եւ թրքամիտ ու թրքարարող ուժերի համար՝ նաեւ Հայոց Պատմութեան ընթացքը ներկայացնելու ասպարէզում: Տասնամեակներ շարունակ, Հայոց Պատմութիւնն էլ Հայոց Աշխարհի նման անտէր ու լքուած գոյքի տեղ դնելով, չորս կողմից գրոհում են մեր գոյութեան, անուան ու հազարամեակների պատմութեան վրայ, ջանալով որքան կարելի է աղաւաղել այդ պատմութիւնը

հազար ու մի հնարովի տասպակներով: Թէ ինչ են զրում թուրքերը եւ ինչ վերաբերմունք ունեն Հայաստանի ու հայութեան նկատմամբ՝ մասամբ կարելի է պատկերացնել Սփիւքի ազգային մամուլում պարբերաբար ներկայացուող նիւթերից: Բայց մենք պիտի կենտրոնանանք զլիաւորապէս Հայաստանում եւ Խորհրդային Միութիւնում զբաւերուող իրարմերժ արամազրութիւնների վրայ: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, թրքա-բուլղարիկեան սերտ զործակցութեան պահանջներին զոհացում տալու համար, Համախորհրդային քաղաքական ու արեւելագիտական գրականութիւնը աստիճանաբար Հեղեղուեց թրքափրական դրոյթներով եւ նոյն համեմատութեամբ էլ զսկսեցին Հայոց Պատմութեան մանաւանդ 20-րդ եւ 19-րդ դարերի Հանրայայտ փաստերը: Բաւական է ասել, որ մինչեւ 60-ական թուականներ սկիզբը խորհրդային Հեղինակների «տեսուէմասիրութիւններում» լայն տարածում ունէր այն արտառոց դրոյթը, թէ 1920 թուի աշնանը «Քմակերիւյստական Հայաստանն է» պատերազմ սանձազերծել թուրքի դէմ: Եւ այդ ոգով «Հեղինակուր» տեսակէտներ էր Հրամցնում նաեւ մոսկովեան «ԿՈՄՈՒՆԻՍՏ» Հանդէսը: Ու չկար մէկը, որ զօնէ Հայաստանի մամուլում պսակագերծ էր այդ բազմազուլի անհեթեթութիւնը: Նորազոյն պատմութիւնը ինչպեթիւրբուռ անհակակշիռ շարժումը ծաւալուելով՝ հասաւ նոյնիսկ Հին դարերին: Այսպէս, մոսկովեան «Գիտութիւնների ակադեմիայի» Հրատարակութեամբ լոյս տեսաւ «Մեն Կլիմովի «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԼԵՂՈՒՆԵՐ» զիրքը, որտեղ Հեղինակը «ուսուպել էր համարում Մետրոպ Մաշտոցի դրոյթիւնն ու կատարած դործը...» Եւ երկու հայ գիտնականներ, Ս. Յովհաննիսեան ու Ա. Մնացականեան, «ստիպուած էղան մի բաց նամակով, տպուած Երեւանի «ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԻ ԱՐՄԵՆԻԱ» ուսերէն ամսագրի 67 թուի փետրուարեան համարում, բողոքել այդ տարբրինակ ելոյթի դէմ: Նոյն սպով

Մայիսին իր Հրապարակային բողոքը յայտնեց եւ էրուարը թուիչեանը՝ խորհրդային պրոպանդիստական համագումարում: Կեղծարարութիւնների դէմ բողոքելու մասին յիշատակելիս՝ պէտք է մի քանի տարի յետ դնալ: Մինչեւ մօտաւորապէս 1960 թուականը Հայաստանի իսկական մտաւորականութիւնը այդ րնապաւտում կատարեալ ամլութեան ու համբուսեան էր զատապարտուած: Ինչպէս թրքական, այնպէս էլ խորհրդային անյայտ ծաղումով ու պատկանելութեան ալազան Հեղինակներ ապատրէն թրքապատ տեսութիւններ էին քարոզում: Իսկ հայերը միայն «պարտանանայ» լսողի դերում էին: Ճիշդ է, այդ ակամայ համբուսութիւնը որոշ չափով շարունակուած է եւ մինչեւ հիմա, բայց ոչ այն ծաւալով ու համատարած ընոյթով, ինչպէս որ 60 թուականից առաջ էր, այլ սոսկ մասամբ կամ կիսովին: Որ այդ անբնական զինակը դիտակցուած է նաեւ Հայաստանի մտաւորականութեան կողմից՝ պարզ երեւում է 66 թուի Գեղտեմբերի 10-ին Երեւանի «ՄՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» պաշտօնաթերթում տպուած ընդարձակ յօդուածից, որի Հեղինակն է Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրի տեղակալ՝ պատմաբան Արէլ Միմոնեանը: Յօդուածագիրը, ի միջի այլոց, ասում է. «Փաղտնիք չէ, որ ոչ հետաւոր անցելու նոյնիսկ չէր կարելի խօսել մի շարք այնպիսի հարցերի մասին, որոնք մեր ժողովրդի համար միշտ էլ կենսական անհրաժեշտութիւն են: Գիտական երկչոտութիւնը հասցրել էր այն բանին, որ յաճախ չտեսնելու էինք տալիս, երբ նկատում էինք, որ աղաւաղուած է մեր պատմութիւնը, երբ փորձ էր արւում սեփականացնել այն, ինչ սպորիւնաբար խլուել է մեր ժողովրդից կամ ինչ նրա սրբութիւնն է: Ճիշդ է, Միմոնեանը որպէս կեղծարարութիւնների օրինակ է ցոյց տալիս միայն թրքական ու անգլիական Հրատարակութիւններ, բայց նա չի կարող անտեղեկ լինել մոսկովեան կեղծարարութիւններին եւ մանաւանդ,

ինքը Միւնիքի դաւակ լինելով, հարեան
Վերայրազական Աղբրէշանեմ» կատար-
ւող անհրեւակայելի գրաւոր ու գործնա-
կան շահասակութիւններին:

Այսպէս թէ այնպէս, Հայաստանի եւ
Հայրենիան նկատմամբ թուրքիայում եւ
Թորհրդային Միութիւնում տարածուող
անհեթեթ սեսուլիւնները դէմ հրապա-
րակութիւն ըմբոստանալու շարժումը Հա-
յաստանում սկիզբ առաւ 60 թուականին,
նախ երկշտ, իսկ ապա աւելի շնորհի
մերկացումներով: Մինչեւ հիմա էլ ըմ-
բոստութիւնը ծաւալում է գերազանցա-
պէս գիտական ուսումնասիրութիւնների
ճանապարհով, առ այժմ խոսքն թողնե-
լով բառի իրական իմաստով քաղաքա-
կան կամ հրապարակախօսական ասպա-
րէզը: Որքան գիտնէք, Հանրային դէմ-
քերից միայն Յակոբ Չարսեանն է, Ե-
ղեանի 50-ամեակի կապակցութեամբ,
այդ ուղղութեամբ արտասայտութիւններ
ունեցել, այն էլ դարձեալ մտկոլեան
հեղինակներից մէկը սխալ եւ անհոգի
գրոյթների դէմ: Կեղծարարութիւնների
մերկացման առաջին լուրջ քայլը մենք
Համարում ենք Երուսնդ Սարգսեանի
«ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՏՍՐԱՌԻՔԱՆ ՆՈՒԱՃՈՒ-
ՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՆՐ-
ԿՈՎԿԱՍՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐ-
ՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐԵԱԿԻՆ ԵՒ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ» վերնագրով
ռուսերէն գիրքը, որը լրյս տեսաւ 62
թուին, Երեւանում: Երկու տարի անց
նոյն գիրքը լրյս տեսաւ Հայերէն՝
«ԹՈՒՐԿԻԱՆ ԵՒ ՆՐԱ ՆՈՒԱՃՈՂԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՆՐԿՈՎԿԱ-
ՍՈՒՄ. 1914-1918» վերնագրով: Վեր-
նագրի նկատելի փոփոխութեան շրջա-
նակում իսկ արտացոլում է հարցի ու-
սումնասիրութեան ընդաւառում երկու
տարուայ մէջ տեղի ունեցած յառաջի-
մութիւնը: Թիւրքիացութեան տեղիք չը-
տալու համար ընդգծենք, որ ընտւ այն
կարծիքը չունենք, թէ Սարգսեանի գիր-
քը լինի ինչ համապատասխանում է իս-
կուկան պատմագիտութեան պահանջներին
եւ թէ այնտեղ ամէն Հարց ճիշդ է լու-
սարանում: Քսաներթող դարի Հայ-

կական իրադարձութիւնների վերաբեր-
եալ լինի ճշմարիտ պատմագիտութիւն
խորհրդային պայմաններում մինչեւ հի-
մա էլ չկայ եւ չի լինելու, քանի դեռ գո-
յութիւն ունի կոմունիստական միակու-
սակցական ընտանիքութիւնը: Իայց
սահմանափակելով միայն մեզ Հետա-
քըրքրող այրումը, կարող ենք ասել, որ
այո՞ Սարգսեանի այդ եւ միւս աշխա-
տութիւնները, ինչպէս եւ մի քանի այլ
հեղինակների նոյնաբնոյթ ուսումնասի-
րութիւնները, մի հատու հարուածով
ճեղքեցին կեղծիքների այն շղթան, որ
տանտեակներ շարունակ դնելով ա-
ւելի էր կարծրանում: Եւ պատմութիւնը
չի կարող ուրանալ նրանց այդ արթն-
ու վաստակը: Իայց խորհրդային հեղի-
նակների խեղաթիւրումները աստիճա-
նարար մերկացնելուն զուգընթաց՝ Հա-
յաստանի գիտական Հասարակայնու-
թիւնը միտամանակ ոկսց գրադուել
նաեւ Հենց թրքական ճակատով, գրա-
խօսականների նիւթ դարձնելով 10-15
տարի առաջ լրյս տեսած գրքերը եւ ար-
ձագանգելով այլ եւ այլ երեւոյթների:
Այդ կապակցութեամբ ամէնից շատ նիւ-
թեր կան «ՊԱՏՄԱ-ԻԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆ-
ԴԻՍՈՒՄ»: Այստեղ հարկ չկայ ներկա-
յացնելու այն բոլոր աշխատանքները,
որոնք ծաւալուեցին Հայաստանում թրք-
քագիտութեան ասպարէզում, ի հետե-
ւանք Արեւելագիտութեան կազմաւոր-
ման նոր եւ քարձր փուլի: Հարկ չկայ
յիշատակելու Արեւմտեան Հայաստանի
եւ Թուրքիայի պատմութեանը վերաբե-
րող մեծ ու փոքր Հրատարակութիւն-
ները: Սակայն օգտակար ենք համարում
նշել այն ելոյթները, որոնք ուղղակի
պատկազերծող եւ ընդարտական բնոյթ
ունեն: Այսպէս, «Պատմա-Բանասիրա-
կան Հանդէս»ի 66 թուի առաջին Համա-
րում վետեղուած է թրքագէտ-պատմա-
բան Մանուէլ Չուլայեանի «Պատմու-
թեան նենգափոխման մի արտասոց օրե-
նակ» ընդարձակ եւ բովանդակալից յոդ-
ւածը, որտեղ հեղինակը խօսում է թուրք
ճահրէտտին կրթողուլուի Վարսի պատ-
մութիւն» անունով գրքի առաջին Հատո-

րի մասին: Թէ Կըրդիստանն եւ նրա ցեղակիցները ինչպիսի շնաշխարհիկ գիւտեր են անում պատմութեան, յատկապէս Հայոց պատմութեան անդաստանում՝ կարելի է իմանալ Զուլալեանի յօդուածից: Այդ յօդուածը կարդացողը մի անպատեալ անզնակ կը լինէր, թուրք հեղինակների «կեղծիք եւ դատանցանք, զատանցանք եւ կեղծիքներին, կը տեսնէր, թէ ինչպիսի ախտալարակ եռանդով են «թրքացում»... ուրարտացիները, համարեա՛ր բոլոր հայ նախարարները, սկիւթացիները, Արշակունիները, Գրիգոր Լուսաւորիչն ու Վարդան Մամիկոնեանը, Մեսրոպ Մաշտոցն ու հենց «Հայոց լեզուն», եւայլն, եւայլն: Իսկ մենք այս մասին այսքանն տեսն էլ բաւական ենք համարում՝ մեզ գրազնցնող նիւթի կապակցութեամբ: Պատմա-հասարակական Հանդէսին նոյն համարում տպուած է Հանդուցեալ թրքագէտ Արամ Սաֆրաստեանի՝ ոտու հեղինակ Կոնոնովին ուղղուած բաց նամակը, որտեղ ճշգրտւած է, թէ Իստանբուլի Համալսարանը հիմնուել է ոչ թէ 1453 թուին, ինչպէս ճշմոտ են հաւատացնել թուրքերը, եւ նրանց ձայնակցում են խորհրդային հեղինակները, այլ ընդամէնը 1870 թուին: Հանդէսի 3-րդ համարում եւս երկկողմանի բացատրութիւններ կան նոյն հարցի շուրջ: Հանդէսի 4-րդ համարում զետեղուած Ա. Հ. Փափազեանի յօդուածից իմանում ենք, որ այսօրուայ թուրք պատմաբանները՝ Հայաստանի վերաբերեալ ամէն մի պատմական յիշատակութիւն շտեմնելու են տալիս, «չհաւատարմի» նոյնիսկ 300 տարի առաջ թուրք հեղինակ Քեաթիպ Ձեյերու «Ջիհաննումա»-յում շարադրուած փաստերին ու անուններին: Այսպիսով տեսնում ենք, որ 60 թուականից ի վեր, թուրք հեղինակները կեղծարարութիւնները մերկացնելու աշխատանքը եւս մտնում է Հայաստանի գիտական մատուցականութեան գործունէութեան ոլորտի մէջ: Բայց Հայաստանի եւ Հայութեան, Հայոց Պատմութեան նկատմամբ դրսեւոր-

ւող թշնամական եւ առնուազն անուրջ ու անբարեխիղճ արամազրութիւնները գոյութիւն ունեն ոչ միայն Թուրքիայում եւ Մոսկուայում, այլեւ Ազրբէջանում: Եւ այժմ զանազան կեղծարարութիւններ մերկացնելու ասպարէզում ստեղծուել է մի երրորդ ճակատ՝ ազրբէջանական ճակատը: 65 թուի Փետրուարին տոգերիս զրոզի պատրաստած յօդուածում («ԺՊՂՈՎՈՒՄԻՆԵՐԻ ԻԱՄԵԿԱՄՈՒԹԻՆՆԸ... ԹՂԹԻ ՎՐԱՅ»), ասում էր Կակ հետեւեալը. «Եթէ աչքի անցկացրենք խորհրդային զանազան դատազրբեր, հանրագիտարաններ, ատլասներ, պատմական ուսումնասիրութիւններ եւ այլն, ապա կը տեսնենք, որ Ազրբէջանին վերաբերող նիւթերը գերազանցապէս կազմուած են ուղղակի ամենայնօրինակ գիբերից, Հայոց պատմութեան ամենամեծիկ տուեալներն ու յայտերի նոյնքան անվիճելի գոյութիւնը ըստ անհնայնի անտեսելու միտումով: ... Հատորներ կարելի է կազմել մամուլից ու զրբերից վերցուած փաստերով, որտեղ ամէն տեսակի խորամանկութիւններին են դիմում՝ Հայութեան իրական տեղն ու դերը շարտմտորէն նսեմացնելու ուղղութեամբ» (տես «ԲԱՊԻՆ», թիւ 11, 1966 թ.): Այդ տողերը գրուելու ժամանակ Ազրբէջանում շարունակուած էին ամէն տեսակ շահատակութիւններ, իսկ Հայաստանի կողմից բացարձակապէս քար լուծութիւն էր տիրում: Մենք այստեղ արձանագրում ենք միայն փաստը, այլ ոչ թէ վերլուծում պատճառները: Եւ ահա 66 թուի ամբողջ հրապարակ եկաւ Մնացականեանի՝ այս ուսումնասիրութեան սկզբում յիշատակուած մենագրութիւնը, որը առաջին անգամը լինելով խախտեց արհեստականորէն ստեղծուած ամօթալի «խաղաղութիւնը», նոր դարազրուիս բացելով Հիւսիս-Արեւելեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում, ինչպէս եւ ըստ հարկին պատկազերծելով կեղծարարական որոշ փորձեր: Հեղինակի կողմից զրբի սկզբում տրուող բացատրութիւնները մէջ ընդգծուած է, որ պատմական

Հայաստանում աւատատիրական կարգերով պայմանաւորուած մասնատուածութեան հետեւանքով՝ ամէն մի տասնմէկն երկրամասի պատմութիւն ընթացել է կեանքի ուրոյն ճանապարհով եւ որ այժմ հարկաւոր է յատուկ քննութեան նիւթ դարձնել «աւատական տիրոյթներէ իւրաքանչիւրի տասնմէկն պատմութիւնը՝ թէ՛ տնտեսական, թաղաքական եւ թէ՛ մշակութային կեանքի առումով»։ Մնացականները իր մենագրութիւնը համարում է նման մի փորձ՝ «նուիրուած յատկապէս սլաւոնական Հայաստանի արեւելեան դաւաճների բազմադարեան դպրութեան հետազոտութեանը»։ Արդ, մեր մտնենադիւնները ժամանակին այդ եւ յարակից տարածութիւնները կոչել են տարբեր հաւաքական անուններով, — «ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ», «ԿՈՂՄԱՆՔ ԱՐԵՒԵԼԻՑ», «ԱՂՈՒԱՆԻՑ ԿՈՂՄԱՆՔ», «ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ», «ՅՈՒՐԻՆ ՀԱՅՔ» եւ այլն։ Բնութիւն էլ նոյն նշանակութիւնն ունենալով հանդերձ, Մնացականները նախապատուութիւն է տալիս «Հայոց Արեւելից կողմանք» ձեւին, ինչ որ դրբի նպատակաւ ըրման տեսակէտից ճիշդ է։ Այդ ձեւով էլ վերնագրուեց մեր այս ուսումնասիրութիւնը։ Բանն այն է, որ երբ 387 թուականին պարսկա-բիւզանդական փոխադարձ կամքով մասնատուեց Հայաստանը եւ նրանից անջատուեցին ի յոռաջողունէ հայկական ԱՐՑԱՆՆ ու ՈՒՏԻՔԸ, միացուելով բուն ԱՂՈՒԱՆՔԻՆ, աստիճանաբար մարդիկ սկսեցին սովորամտութեամբ կամ ուզողով զործնական առումով Աղուանք կոչել եւ նորակամ Աղուանք հայկական կէտը, ինչ որ զանազան թիւրիմացութիւնների աղբիւր է հանդիսանում մինչեւ հիմա եւ կեղծարարներին «հիմք» տալիս, որ ուրանան հայկական ներկայութիւնը երբեմնի Աղուանքում, ամէն ինչ յանգեցնելով ամիսական ու ամբողջական Աղուանքի» առաջադիւն։ Մնացականների գրքում ներկայացուած է հենց այդ Հայոց Արեւելից կողմանքի 5-13-րդ դարերի դպրութեան մտաւոր պատկերը, որն ամբողջովին ե-

ղել է հայկական եւ հանդիսացել հայ մշակութի անկապտելի մասը։

Մնացականների աշխատութեան դրսեական ու ազգային նշանակութիւնը արեւելի է շեշտուած նրանով, որ վերաբերուած է մի երկրամասի, որը մանաւանդ 11-13-րդ դարերի ընթացքում, Կիլիկիան Հայաստանի հետ միասին, նախաինստ-մական դեր է կատարել առհասարակ հայութեան ինքնուրոյն գոյութիւնը պահպանելու եւ հայ մշակոյթը զարգացնելու գործերով։ Այն ժամանակ, երբ ամբողջ Հայաստանի կենտրոնական մեծ մասը կիսովին ընկեր-մուէլ էր ջարդարար հորդանների ստեղծած արեան ծովի մէջ, հարաւարեւմտեան կիլիկիան Հայաստանը եւ հիւսիս-արեւելեան հայկական լեռնաշխարհը լիովին հայկական կեանքով էին շնչում։ Եւ այդ երկրամասերի հայ զանդուածները երկու հզօր թեւերի նման ազգային կաշկանդուած մարմնի շուրջ թափա-հարուելով՝ հնարարութիւն տուին, որ ամբողջ հայութիւնը մի քիչ էլ դիմա-նայ, ամբողջովին չընկղմուէ եւ շնչա-հեղձ չլինի, մինչեւ որ բարբարոսների մակընթացութեանը յաջողի նրանց տեղատուութիւնը։ Եւ այսօր կրկնակի պարսազանցութիւն կը լինէր այդպիսի երկրամասերից մէկնում էլ կի պատմութիւնն անտեսելն ու թշնամիների տնօրինութեանը յանձնելը։ Ուստի զարմա-նալի չէ, որ այդ ճակատում եւս նկատելի գործունէութիւն ծաւալուեց Հայաստանում ու Մնացականների աշխատութիւնը պատշաճ արձագանգ գտաւ։

Առաջին արձագանգողը եղաւ «ԳՐԱ-ԿԱՆ ԹԵՐԹԸ»։ 66 թուի Օգոստոսի 5-ի համարում տպուեց Մուշեղ Նարեանի «ՀԱՅ ԱՂՈՒԱՆՔԻ ՃՇՄԱՐԻՏ ԶԱՅՆԸ» ջերմ գրախոսականը։ Նարեանը գնահատելով գրքի արժէքը, ցաւ էր յայտնում, որ այն տպուել է միայն 1000 օրինակ։ Առաջարկում էր գրքը զգալիօրէն ընդարձակել, օժտել համապատասխան դրական երկերի ընտիր նմուշների յաւելումներով, պատշաճ քանակով վերահրատարակել հայերէն եւ սպա թարգ-

մանել սուսերէնի: Այս եւ այսպիսի ուրիշ ցանկութիւններ, որինակ՝ զիրքը թարգմանել եւրոպական որեւէ լեզուով, կցել մանրամասն քարտէզներ եւայլն, արտայայտուցին եւ հետագայ գրախօսականներում: «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ» շարաթաթերթի Գեղեցիկներէն է-ի համարում զետեղուեց Ռաֆայէլ Իշխանեանի «ԱՂՈՒԱՆՔ ԵՒ ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» գրախօսականը: «ԼԼՐԱԸԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ամսագրի Հոկտեմբերեան համարում երևաց Վ. Յակոբեանի «ՅՈՐԴՁ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ» գրախօսականը: Յակոբեանը, ի շարս բազմաթիւ գրեւհատական խօսքերի եւ դիտողութիւնների, ակնորկելով Հայոց պատմութիւնը խեղաթիւրող օտար Հեղինակներին՝ բացականչում է. «Հայ բանասիրութիւնն ու աղբիւրագիտութիւնը որքի զլուսի չէ, որ ով ցանկանայ նրա վրայ զարգութիւն սովորի...»: Իսկ ապա՝ «ԱՌՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ամսագրի նոյեմբերեան համարում Վարդ Բդոյեանը իր Հերթին արձագանգեց Մնացականեանի զրքի երեւան գալուն՝ նոյնպիսի խոնդաժառ էջերով: Ասատուր Մնացականեանի աշխատութեան վերաբերեալ խորհրդակցայ մամուլում երեւցած ամենհամեստ գրախօսականներն

անգամ («ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԱ ԱՐՄԵՆԻԱ» սուսերէն ամսագիր՝ թիւ 1, 1967 թ., «ԱՌՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ամսագիր՝ թիւ 2, 1967 թ.), իրենց շահագանց ընդհանուր, զուտ, բայց հաստատակամ ձեւակերպումներով, համընթաց են տիրող մթնոլորտին: Մենք այստեղ հաշուի չենք առնում առօրեայ մամուլում շոյս տեսած այլ եւ այլ հնարաւոր արձագանգները, բայց չենք կասկածում, որ նրանք էլ նոյն ոլով պիտի շարաչրլում լինեն, քանզի այդ հարցում այլ վերաբերմունք հնարաւոր չենք համարում: Բայց ուշում ենք անպայման յիշատակել, որ «Պատմա-բանասիրական Հանդէսը» այս անգամ գրախօսական զետեղելու փոխարէն (զէթ մինչեւ Հիմա), իր 67 թուի Առաջին համարում տեղ տուեց Հենց Ասատուր Մնացականեանի եւ Պարոյր Սեւակի մի այլ՝ 14-էջանոց սուսերէն գրախօսականի, որտեղ պակասքերում են ազդրէջանցի Հեղինակ Բուհաթովի գրքերից մէկում կուտակուած աննախընթաց կեղծարարութիւնները: Այդ գրախօսականը, ինչպէս յայտնի է, հայերէն ազատ թարգմանութեամբ ամփոփուեց Պոթոնի «ՀԱՅՐԵՆԻՔ» օրաթերթում, 67 թուի Հոկտեմբերի 10-ից, որը եւ արտասպուեց միւս թերթերում:

(Շար. 1)

ձ. Մ.



ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲԵՄՈՎԱՆ ԿԵԱՆՔ

« ԿՈՐՍՈՒԱԾ ՆԱՄԱԿ ՄԸ »

Վահրամ Փափազեան թատերախումբը, 15, 16, 17, 22, 23, 24 Դեկտեմբեր 1947-ին, ինչպէս նաեւ 20 եւ 21 Յունուար 1948-ին, Կիւլպէնկեան թատերասրահին մէջ ներկայացուց 19-րդ դարու ռուսա-նոսրի թատերադիր Իօն Գարանիայի «Կորսուած նամակը» կատակերգութիւնը՝ չորս արար:

Կատակերգութիւնը, պալվարը զբարձրագոյն սովորական կատակերգութիւններէն մէկն է, ուր սրամտութիւնները տափակ են, արուեստական կացութիւններով կ'առաջանան, եւ վերջ ի վերջոյ, քիչ մը շափազանցումով, քիչ մըն ալ կրկնումի մեքանիզմով, կը յաջողին տեղատեղ խնդացնել հանդիսատեսները:

Պէտք է նաեւ զուարճացնել հանդիսատեսները, թատերաւէր հասարակութիւնը: Ինչու չէ, երբեմն-երբեմն ալ պալվարի թատերակներ պիտի ներկայացուն: Պէտք է երկու կարեւոր թատերախումբերն ալ, նոյն թեքումը կը կայանարեին: Մէկ լուրջ գործի ներկայացման դիմաց՝ մէկ անարժէք կատակերգութեան ներկայացում տանելի կրնայ ըլլալ, մինչեւ իսկ երկուքը տանելի է. պայմանով որ մէկ արժէքաւոր գործ տրուի գէթ հասարակութեան:

Իրաչին «Ժողովուրդի թշնամին»-ի մէջ եւս ընտրական խաղեր, դաւեր, փոփոխութիւններ, շահակցումներ ներկայացուած են. սակայն առնուազն Տոքթ. Շթովմանի եւ քաղաքագետի տիպարները աւելի խորապէս մարդկային են այնտեղ, եւ աստիճանական զարգացումով մը առաջ կը շարժի թատերակը: Եւ ոչ թէ «Կորսուած նամակ»-ի նման արուեստական կացութեանց անվերջանալի կըրկնութիւն մըն է, առանց նուազագոյն չափի իսկ զարգացման:

Ահա թէ ինչու, եթէ ընդունելի համարենք տափակ կատակերգութեանց ներկայացում մը, ընդունելի չենք կրնար

համարել թատերախումբի վարչութեան կողմէ ներկայացման յայտադրին վրայ արժանագրուած «Մեր խօսքը»-ին մէջ տեղ գտած այն արտայայտութիւնը, թէ «Գարանիայի «Կորսուած նամակ մը» կատակերգութիւնը ընտրելով, Փափազեանի վարչութիւնը դարձեալ հաւատարիմ կը սնայ իր սկզբունքներուն, իրաւաբանստի ակերտն դիմելու իր ամսայքաբ Բազումկանութեան»: Եթէ իրաւարուեստի ազը Գարանիայի այս գործն է, կամ նման գործեր, այդ պարագային պէտք է հրատարակ արդեւտը սիրելի, կամ զարուեստը բարձր զինելով նման տափակութիւններու, պէտք է ուրիշ բառ մը գտնել «արուեստը սահմանելու համար»:

Երկու խօսք խաղարկութեան մասին. բարերարտարութիւն վարդգէս Իււննչիան ստանձնած էր Ակամենոն Տնատանայի կարճ գերը, որովհետեւ այդ կարճ տեւողութեան մէջ է, որ ղերաստական արուեստի վայելք մը ստացանք: Բաւարար շափով ընդունելի էր Թորոս Սարգիսեանի խաղարկութիւնը, Չաքարիա Դրահանայի դերին մէջ: Ուշադրութիւն կը դրաւէր Յարութիւն Թումայեան, տեւարար դիմով ընտրողի դերով, ուր չափազանցումները, կրկնութիւնները իրենց բաժինը ունէին եւ ուշադրութիւն հրաւիրելու տեսակէտէն, եւ նաեւ խաղարկութեան արժէքը նուազեցնելու տեսակէտէն:

Հայերէնի սխալ չեղտուորումներ, անբնականութիւն միայն կը բերեն տիպարներուն եւ անհանդի զգայնութիւն:

Համայնարանական զաւակ ունեցող մօր մը համար աիկին Զօէ Դրահանայ (Լիդ Սարգիսեան) շափազանց երիտասարդ էր, ինք հազիւ թէ նոր համարաբան մտած ուսանողուհի մը կրնար ըլլալ:

Բ. Փ.



« ՀԱՏՎԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ »

(Ա Է Պ)

Հեղինակ՝ ԲԻԻԶԱՆԿ ԿՈՍՏԵԱՆ

Իր շնչակալ կատակերգութեան անուն վէպին մեծ մասը «Բաղիմ» մէջ հրատարակութեան առի՛ն ետք, Բիւզանդ Կոստեան, անցեալ տարի, ամբողջութիւնը լոյս ընծայեց առանձին հատորով մը:

Ծուրը երկու հարիւր եօթանասուն մեծադիր էջեր հաշուող վէպ մըն է շնչակալ կատակերգութեանը, որուն գործողութիւնը կը սկսի Աղքատներէս, պահ մը կը շարունակուի Ամերիկա, կը զարգանայ Գաւրիէի մէջ ու կ'աւարտի վերին եզրիտոս, բուրգերու, սփեկըներու, սպիւնքներու մօտ:

Ապանդին ճողորմած որբերէն է Լեւոն և Լեւոնի մանկութենէն կը սկսի վէպը, իր էջերուն կ'առնէ անոր պատանկեան և երեսասարգական փորձառութիւնները և հասունութեան պայծառ պահու մը՝ կը նետէ դանկ կեանքին մէջ, շարունակելու համար կեանքի կատակերգութիւնը:

Լեւոն հասակ ետած է ասուղապուշտ ժօր մը շունչին առկ: Հոգեկան այդ կազմութեան մէջ զիւր անկյան են նոյնպէս իրենց անժիջական զրացիները, անապատին մէջ սփռելիներ կորսնցողացան պտուտ, մենակեաց այլ ներքին ու արտաքին հրապոյրներու տէր ուսուցչուհի մը՝ Քաղաւթին, ուրիշներ: Դպրոց, եկեղեցի, ողբ, հայրենիք: Գայուն ապագայի մը մտատանջութիւնը կը նետէ դիմը Ամերիկա: Հասարակ գրազուտներով կեանքը շահելու հարկադրանք: Նըւաստութիւն: Ազլիկներ: Երկչտութիւն մը իր մօտ: Մայրը կը պատկերանայ մօրին: Տրուած պատուէրները կը խեղճեն իր ընտղան ու անհատականութիւնը: Իր սկանչիկ շարունակ կը հընչեն՝ «Բու ազգեց, արիւնդ տղիկ մը քա: Վերականգնել հորեմական առուկը»: Ամերիկայի մէջ իրեն հրաւեր ուղղող Լոսս մը պետի դիմաւորէ ժօրեմական այս սպասարութիւններուն ճշտմով: «Բուս սարեկամ կ'ըլլար, դեռ ազգիկ մը լէր

համբարած իսկ»: Իր սրտին մէջ կայ ուղիւ կարող մը: Եզրկատու հայրենիք կը թուի իրեն հիմա: Մօր հիւանդութեան լուրը: Վերագարձ՝ առանց ուսման աւարտին սպասելու: Մայրը կը մեանի: Քաղաւթին կը զստնայ իր միտքարութիւնը: Քաղաւթին հետ մշակուած մտերմութիւնը շուտով քամրասանք մը կը ծաւալէ իրենց շուրջ: Կ'որոշեն բաժնուհի, կ'անցնի Գաւրիէ: Կը խորհրդածէ իր անկաշուն կեանքի մասին: «Ձախոզած մըն էր: Անաւարտ կեանք մը: Ո՛րք էիմ իր արմատները: Ո՛րք կ'երթար: Գիշեր մը, տաքեապի մը պահուն լոյսը կը ցաթի մտքին: Պէտք էր փնտռել իր ժողովուրդը: «Բիտու՛ններն ու փիլիսոփաները երեւոյթները բացատրելու համար, միշտ կ'ըրթային զԼեւի սկզբնական անց: Իր անձը գտնելու համար, պետք էր գտնել իր ժողովուրդը»: Այսուհանդերձ ասորեան, կարճը նորէն կը զգայնէ ինքնեք: Իրբեւ աշկերտ կը մտնէ Մարտիկ աղայի նպարեղենի վաճառատունը: Տղիտութեան, մեծամտութեան և ընչազգացութեան զօրիք մը: Կոխ ու նորէն մեկնում: Նոր հարցականներ: Այդ օր ասնը մաքրող Ծաթմային հետ կը գործէ իր հառաչին մեղքը: Յետոյ կը յայտնուի իր զարնկերը՝ Վարուժան: Վարուժանին շնորհիւ գաղութին մեծերուն հետ շփումներ հաստատած է արդէն: Մեծերը կը կարգադրեն, որ խմբագրութեան մաս կազմէ: Քիչ մը կ'անու կը մտնէ կեանքին մէջ: Կը սիրահարի իրեն զբացի խոսալցի ճարտարագետի մը սղջկան: Սիրահարութիւնը կը հանի զաննեղիկ մտերմութեան մը: Կ'որոշէ ամուսնանալ խոսուհիին հետ: Դարձեալ դիմացը կը ցցուի ժօրը ուրուսկանը: Յեղափոխական խոյանքներով վարչ շինած հսկայ մը և մաթի գանձեր դիզած ուրիշ մեծատուն մը աւելի կը շնչան իր մէջ ժօրը կազմած նկարագիրը, թաւաղող կեանքին և ժառանգարար փոխանցուած ապրումներուն դիմաց երկրեսարանը կը խորանայ: Բայց «Մերը հայ-

ընթիվ եւ ազգութիւն չունէրք: Կը տեսնուէի ազ-
 ըըկան չոր հետ: «ՀԱՄ՛), Երբեք լսած չէի: Ես
 անկայտ մարդու ազգիկ չեմ տար: Ընդզում, կոն-
 է, բաժանում: Խմբադրական աշխատանքը ու-
 բող բաւարարութիւն մը կու տայ իրեն: Անշնի
 պահուէն կը գտնէ նաեւ իր անձին լրացուցիչ
 մասը՝ Քաղաքին, այսինքն իր հոգիին կլորթը,
 ու կեանքը կը մտնէ նոր հուսի մը մէջ, կը հա-
 յանայ բուրբութիւն: Այլեւս զիրեմ համար արտա-
 յայտութեան մէկ միջոց կայ արշարիկ վրայ, -
 հայտը լեզու: - Իրեմ համար շնչելու, գգալու
 միակ կերպը այդ էր... իր այժը, ուղեղը, միտ
 ու սիրտը հայ էին: Այս բնութեան յան-
 ղելէ հաջ, այլեւս պատմաները նշանակութիւն
 չունին, ուշաբարագրութիւնն ու բանակը նշանա-
 կութիւն չունին, էականը պարելու հար կամքն է:
 Եւ սակայն պարտութեան տակ: Այսուհետեւ
 ստեղծագործութեան պիտի գործէ գտնել ժո-
 ղողարդին փնտռած նոր տարածքը եւ պիտի նը-
 շխտի այդ եղանակով ժամանակին սիրապետե-
 լու երազի մը:

Շուրհիւն աշխարհին ու ներքին իրակա-
 նութեան այս փուլերէն կ'անցնի Բ. Կոստանի
 «ՆԱՅԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԻՐՈՒՄԻՆ»-ը, կը յանգի այս
 ապառով հանրաւանքին, ուր եւ ազատ կ'արժա-
 ւի հերոսը:

Անցանքին, պատմութեան, աւանդութիւն-
 ներէն գոտեմտական ժողովուրդներուն, եւ
 նոր իրականութեանէն բխած զգայնութիւններուն
 բախումը իրենց հոգիներուն ուժգնորէն ապրող
 սերունդին, որքեք'ա սերունդին պատմութիւնն է
 վէպը, նովին բանիւ պատմութիւնը վիրաւոր
 մարդոց, անոնց՝ որոնք տարբերակ ճակատա-
 գիր մը ունեցան, յուշ մը, անցանքին եկած ճայն
 մը արդիւնք իրենց զօրութեամբ ապրիլ ներկան,
 ասիկա եղաւ իրենց ողբերգութիւնը, ուժը նոյն
 առնէ: Առանձին խառնուածքի մը յայտարար
 նշանը:

Բայց այս թեման նոր թեմա մը չէ, Ես-
 նոթ թեմա մըն է մեր զրակահուստի մէջ, ա-
 ռանց անուշա նուաճուած, սպառած ըլլալու:
 Բ. Կոստանի գործին նորութիւնը վերի պայ-
 մաններով կազմուած միջնակի մարդուն ներքին
 թեմակին նուիրած խորհրդածական համով է-
 չնիս են: Ինքնարտոնման տաղանակներուն ընթաց-
 քին, ինքնաշիրտման ընթացքին անդի ունեցած
 պոթիւմները: Բ. Կոստանի հերոսը մազի
 շորհներով ստուած հերոս մըն է ու հետո-

զըրբրական է ու համակրելի ամենն անէի այդ
 կարուածին մէջ: Նոյն շահեկանութիւնը չի պա-
 հեր, երբ մէկու մը հետ կը խօսի, երբ կը վերել
 կամ կը կոտի, շահեկան չէ նոյնիսկ այն ա-
 ան, երբ սիրային տեսարաններու մէջ գեր կը
 ստանան, դեր կը սրուի իրեն: Մարդոց, հակ-
 ներուն հետ դէմ յանդիման եկած պահուն միշտ
 տկար է ինք, դանդաղ է շատ, անբնականորէն
 ուշ կը սերէ, ուշ կը խօսի, ուշ կը կոտի, ուշ
 կը մեկնի: Ուժանակն չէ: Այս տկարութիւնը կը
 թուցնէ վէպին ընթացքը եւ խոցելի կը դարձնէ
 անոր կատարը:

Ինքզինք կը պարտադրէ սակաւի, երբ նա-
 յի երեւոյթի մը ու իր տպաւորութիւնները մե-
 նախօտէ, երբ հարց մը անէ եւ ապրողապրէ
 անոր հուսիւնը: Աւ հարցեր շատ կան իր առ-
 ջեւ, զիեմնի կատակերգութիւնը զորքին մէջ,
 մշակութային հարցեր: - Երբեք ու երազին կա-
 պերը, պատմութեան եւ ժողովուրդին փոխ-յա-
 բարերութիւններուն լոյսը, միջոցն ու աս-
 բանութիւնը իր կամքին ենթարկող մարդը, նոր
 ժամանակներուն արագութիւնն եւ արագութեան
 արագ լուծումներուն ստեղծած լիովը, օտար
 դէմքերուն շատ յարմար տեղեկական յայտ յետոյ, -
 Պղատան, Շոփէնհուսը, Կէտի, Շէյնփիլը,
 Պսի, Բամբա, Տա Վիլի, մարդ հանին աս-
 անց ընտանիք հարստութիւնը, մեր բանաստեղ-
 ծութիւնը ապա, մեր հարստապետութիւնը, ու
 անոնց մէջ մեկը, մեր գոյութիւնը, մեր լինե-
 լութիւնը, մշակուած կեանքին հետ մշակուող
 ուրիշ հարցեր: Այս հարցերը մերկայարանաց
 հարցեր չեն զորքին մէջ, ապրող անձի մը հու-
 թեան հետ կապ ունին, զոյութեան անեղծուածը
 հասկնալու տաղանակներէն կու գան, կը յուշուին
 պանազան առիթներու, համապատասխան միջո-
 լորտ ունին, արդի ունին եւ խոսքելու ուժ մը:
 Խորհրդածելու կարողութեան հետ աչքի
 կը զարնէ նոյնպէս Բ. Կոստանի տեսողական
 կարողութիւնը: Իր սեօած կայուն կամ շարժուն
 իրերուն պատմութիւնը, կամ դեռ պատմութիւն
 չունեցող երեւոյթներուն ներքինանգիւրը արտա-
 լու եւ անոնցմէ բանաստեղծութիւն լինելու ուժը:

Աւ զարմանալի չէ որ հոս, այս երկու պա-
 րագաներուն, իր խառնուածքին մօտ եղած պա-
 հուն այսինքն, Կոստանի լեզուն եւ սեօական
 սարբերը անէի կ'աշխուսանան, կը պարծառա-
 նան անէի, կը զրաւեն:

Պ. Ս.

ՌԱՅԱՅԵԼԼՈՒՄՅԱՆ



ՄԵՌԱԾ ՔԱՂԱՔԻ
 ՊԱՐԻՍՊՆԵՐԻ
 ՏԱԿ

ԳՐՈՒՄ ԵՄ ԳԺՈՒԱՐՈՒԹԵԱՄԲ

Մէկ-երկու տեղում առիթ ունեցած ենք յիշելու Յաֆայէի Աբրահամի անունը: Մեր առջի թիւով իր կարծիքներէն ոմանց անդրադարձանք, զանի մը սող աւելի գրելով իր մասին: Անցեալ Դեկտեմբերին «Հայրենիքի մայր» շաբաթաթերթի մէջ, գիմացի Կլէն վրայ լուսանկարչական պատճենով տրուած խորագրին սակ ստորագրած իր նոր գրութիւնը, նոր առիթ մըն է յիշեցնելու ընթացողին, որ թէ մը աւելի գանգաղէ այս անունին ստիւն:

Մտքի ծանօթ մէկ գործ միայն ունի Աբրահամի՝ «Ձբամբած ձիւն», իսկ այս գրութեան Հետ ինքն իր մասին տուած պզտիկ ծանօթութենէն կ'իմանանք, որ աւարտած է Կոմիտասի կեանքէն «Սարը-Սարը» խորագրով պատմուած գեներու Հատորը եւ «Սրտի պոչակում» անունով վիպակ մը: Տրուած ծանօթութեան մէջ Հետաքրքրական է նշելու որ Հասարակական Գրական Կոմիտէի անունով վիպակ մըն էր գրուած, - «Գրուած եմ դժուարութեամբ, գրածս մշակում եմ երկար...»:

Անշուշտ: Առանց այդ դժուարութեան, այդ երկար մշակումին՝ այս արդիւնքին ու բերեղացումին պիտի չհասնէր, անոն մէկը պիտի ըլլար. պիտի նմանէր Հայաստանի մէջ գրելը բնույթ այն սովորին տիրաբեր, որ խոսանով խանդավառուցած շարունակ եւ իրարու վրայ անկենդան էջեր գրելով գերակատարեց արդիւնաբերական գլուխակերպութեան իր տիրուք յանձնառութիւնը:

Աբրահամի գրագէտ է: Կարգադէտ նմայլ մը իրմէն:

Եղիւթիւն է. երբ քարգիչ, քարտառոզ, դեղարար, երգասաց ու խաղարկու էր երեւում պարիսպների տակ, պահնորդներն անտալուր օայնարկում էին եւ բացում դարպասները, իսկ բան է՝ թշնամի, նետահարում էին:

Եկել, կանգնել եմ անբուսած քաղաքի պարիսպների տակ, բայց ոչ ոք չի մայնում, չի բացում դարպասները. գունէ թշնամի կարծէին, գունէ նետահարէին, միայն թէ պահնորդներ տեսնէի աշտարակների վրայ, միայն թէ կեանք լինէր այս մեռած, խորտակուած քաղաքում:

Այսպէս եմ մտածում եւ յանկարծ՝ ինչպէս ամէն մի հայի հետ է պատահում, ճոխնչով ետ են գնում աղանակները, ու դարպասները բացում են իմ առաջ, եւ որպէս պատարագիչ, քարտանայեւ, շինարար, որ դուռ է բացում հարու ամուռ դէմ, երգիս՝ աստղերի դէմ, ներս եմ մտնում քաղաք: Ապրող, ազկող կեանքը յարգում է չորս կողմից: Տրդատ ճարտարապետն է գրտնում Սարգիս կազմողի եւ Ջուղիկի բրջաշէնի հետ, Ասաղիկը կաշեգործների մագաղաք է պատուիրում, պարոն հաշիւների կեանքից Շաւուշն իր գասեր՝ Մամայաթանի հետ բաղնիք է շտապում: Եւ բարեւում եմ նրանց, յետոյ շուկայում պարսկական ճշդապ շալիք եմ ընտրում, հնդկական համեմունքներ եւ մաքառանք վէճի եմ լսում եւ հռոմեացի, արարների, յոյների ու երեսներին հետ: Քարվանսարայի մօտ մի անհասարկ երգում է իր հօր գերեզմանով. «Հաւատացէ՛ք, մարդիկ, հաւատացէ՛ք, - ասում է նա, - երկու օր առաջ ես սպաննեցի իմ հօրը, որ նրա գերեզմանով երդուեմ, հաւատացէ՛ք»:

Աշխարհում արդեօ՛ք կայ մի ուրիշ մեռած քաղաք. որ այսպէս կենդանանայ, կեանքով լցուի իր արդիւնքին հանդիպելու եւ շփոթեմ գուցադրի այն, ինչ հազար տարի առաջ է եղել, ինչ մեռել, լուր ու անբուսել է հազար տարիէ ի վեր: Գիտեմ, քանի դեռ այստեղ եմ, պարիսպների տակ, քաղաքը ասքայել է, եւ մեռնելու է միայն, երբ գնամ, հեռանամ: Եւ ա՛րք պիտի գնամ, ինչն՝ պիտի հեռանամ, երբ այստեղ, այս քաղաքում է ասուել՝ ով լճում է իր հայրենիքը, նա ազատացնում է իրեն եւ հայրենիքը:

ՌԱՅԱՅԵԼ ԱՐԱՄԵԱՆ



«ԱՅՍ ԿԻՆ - ԾԱՌԸ»

Փարիզի և ուրիշ ոստաններում, աշխարհի ուշադրութիւնը գրասան մեր մեծ գեներուն մէջ, Գառզուհի Հասանարայ այն կանուցիներն, որոնք գիտեն բացատրելիներն է, որ մեր ժամանակն զուրս պիտի գայ և արուեստի պատմութեան մէջ պիտի գրուի թուրք ժամանակներուն զիմացող ամուր պատանակն մը:

Ապարիչիկն ժամանակներուն Հասանարայի Գառզու-

լատոնց պարտադրած է իր սեր նկարչական աշխարհին և և՛ Համարուի այն ուժեղ անհատականութիւններն, որոնք գիտեն իրենց լզանովներով միշտ թաքտ լլալ:

Ճիկարածի սպառիտ տնունը կրող այս նկարը Գառզուի կըրմին և՛ պատկանի զարմեալ: Մեծնդէ թիւն համար պատաստուած խորհրդապատկեր մըն է անիկա: Կարծես ամուր սպա-

արութեամբ մը գեղեցիկօրէն և՛ զարդարի Համանուն թերթին կողքը:

Անա թէ ինչ և՛ զրէ խորագրութիւնը այդ առիթով:

«Մեր ինքնամեհին վրայ պատարտելով այս թիւին կողքը, Գառզու այն միայն փաստեց, թէ իր սերունդին լուսազոյն Ոկարիչներն մէկն է իճէ, այլու չի վախճար ակնհասեայ ըլլալէ: Ծնունդի տրիտունեական եմչեղուրեմն անդին, բազկապարտած ու պտուղներով բնութաւարտած այս կին-ժողով, 1908-ի սեմին և՛ խորհրդանշէ այն յախտնեական և՛ սարսիկներայ վերածարդումը, որ պիտի պռարկայ մի ճանի ամիսէն:

Ձիւն-ձրան, բիրտ ուժին, կործանումներուն զէմ գեղեցկութիւն մը նանչու, յոյս մը ստեղծելու և՛ կեանքի հրապուրէ զգացնելու զազափարտեական խորք մը ունի Գառզու և՛ ստիկա և՛ նկատուի իր արեան տուրքը:

Մեծանուն արուեստագէտը 1906-ի աշնան Հայաստան արցելից իր նկարները ցուցադրելու և՛ հետագային իր ցուցանանքներուն մէջ Հայաստանը ներկայացնելու կընենակ երազներով: Հայաստանի մէջ Համասարան Համակրանք մը ստեղծուեցաւ իր շուրջ, իր կտաններով, կանկան շկայ, թէ նոյն Համակրանքը պիտի ստեղծէ նաեւ Հայաստանի շուրջը:

Ճիկարած, բացառիկ թիւ մը ու զիժու՛մ՝ նայ արուեստագէտի մը: Այս Հանգամանքները, ինչ իստք, պարզապէս ուրախութիւն և՛ պատեանն են յայտարարուի:



Թերթը ճիշդ ժամանակին ըմբերցողին հասցնելու բժայեմդրութեան պատճառով, Փետրուարի համարին վերապահեցինք մեր հետեւեալ աշխատակիցներուն այս թիւին համար պատրաստած գրութիւնները -

Նոն-ՊԱՐ ԶԱՐԿՈՒՏԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ, ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ,
ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ, Ղ. ԺԻՐԱՅՐ,
ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ. ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ, ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ:

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
ՀՐԱԶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
ԳԷՈՐԳ ԱՃԷՄԵԱՆ

«ԲԱԳԻՆ»Ի ՖՈՆՏԻՆ

Արշակիր Շիրակեան, (Նիւ-Եորք), 50 տոյար կը նուիրէ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏՏԱԾ ԵՆՔ

ԽՄԲԱՊԵՏ ԱՍԼԱՆԻՆ ԱՂԶԻԿԸ (վիպակ), Սիմոն Սիմոնեան, Պէյրուք, 1967
ԲԺԺՇԿԸ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ՀԵՏ (պատմութեան), Տ. Վարժապետեան, Պէյրուք, 1967

ՄՐՈՒՄԻՆԻ ՏՅԿ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԵԼԼՈ

(ԿԵԱՆՔՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ)



ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՎԻՐԱԻՈՐ ԾԻԾԵՌՆԱԿԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 22 ● Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 8 ● ՏՈՒԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌԻ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@